

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԾՈՎ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ինչպես որ այն հաստատվել է Տնօրենների Խորհրդի կողմից
2015թ. Նոյեմբերի 25-ին կայացած նիստի ընթացքում

ՎՋԵԲ-ը փաստաթղթի տեքստի բնօրինակի թարգմանությունը տրամադրում է միայն ընթերցողի հարմարության համար: Մինչդեռ ՎՋԵԲ-ը ողջամտորեն հոգացել է, որպեսզի ապահովվի թարգմանության իսկությունը, ՎՋԵԲ-ը չի երաշխավորում կամ հաստատում թարգմանության ճշգրտությունը: Ցանկացած նման թարգմանության վրա հիմնվելիս ընթերցողը դա պետք է անի իր սեփական ռիսկով: ՎՋԵԲ-ը, իր աշխատողները կամ գործակալները ոչ մի պարագայում չպետք է պատասխանատվություն կրեն ընթերցողի կամ որևէ մեկի հանդեպ թարգմանության բովանդակության ցանկացած անճշտության, սխալի, բացթողման, ջնջման, թերության և/կամ որևէ փոփոխության համար, անկախ դրանց պատճառից կամ դրանցից բխող ցանկացած վնասից: Անզլերեն և թարգմանված տարբերակների միջև ցանկացած անհամապատասխանության կամ հակասության դեպքում գերակայությունը տրվում է անզլերեն տարբերակին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ.....	3
1 ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ.....	6
1.1 ԲԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԻՍ ՊՈՐՏՖԵԼԸ.....	6
1.2 ՆԱԽՈՐԴ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ.....	6
1.3 ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐ.....	11
2 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ.....	17
2.1 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ.....	17
2.2 ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ.....	18
2.3 ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍ.....	21
2.4 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ.....	23
2.5 ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ և ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ.....	30
2.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ.....	32
2.7 ԷՆԵՐԳԱԽՆԱՑՈՂՈՒԹՅԱՆ և ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍ.....	34
3 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ.....	37
3.1 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	37
3.2 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ և ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	39
3.3 ԵՐԿԻՐ ԳԾՈՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ.....	55
3.4 ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ.....	57
3.5 ՎՋԵԲ-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԶՄԱԿՈՂՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԵՐԻ (ԲԶԲ) ՀԵՏ.....	59
ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	61
ՀԱՎԵԼՎԱԾ 2 – ԸՆՏՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ.....	76
ՀԱՎԵԼՎԱԾ 3 – ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	76
ՀԱՎԵԼՎԱԾ 4 – ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.....	86
ՀԱՎԵԼՎԱԾ 5 – ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ.....	93
ՀԱՎԵԼՎԱԾ 6 – ՎՋԵԲ-Ը ԵՎ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԸ.....	96

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Հայաստանը հավատարիմ է իր՝ բազմակուսակցական ժողովրդավարության, բազմակարծության և շուկայական տնտեսության սկզբունքների պահպանման հանձնառությանը՝ համաձայն «Բանկի հիմնադրման համաձայնագրի» Հոդված 1-ում սահմանված պայմանների, թեև այդ սկզբունքները դեռևս անհավասարաչափորեն են կիրառվում:

2014թ.-ին ձևավորված գործող Կառավարությունը բարեփոխումների հավակնոտ ծրագիր է առաջադրել, որի հիմնական առաջնահերթություններից են՝ կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ պայքարը, տնտեսական մրցակցության խթանումը և ներդրումային միջավայրի բարելավումը:

2015թ. հունվարին Հայաստանն անդամակցել է Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ), որի նպատակն է ընդլայնել Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի հետ առևտուրը և ներդրումները: Մինևույն ժամանակ, Հայաստանը և ԵՄ-ը համագործակցության ընդլայնման գործընթացում են, որն արդեն ամրապնդվել է Արևելյան գործընկերության ծրագրին Հայաստանի մասնակցությամբ: Ի լրումն Հայաստանի ներդրումային միջավայրի թերությունների, տնտեսական զարգացումը սահմանափակվում է աշխարհաքաղաքական և անվտանգության մարտահրավերներով, այդ թվում՝ երկու հարևանների՝ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակմամբ: Կայունության վրա ազդում են տարածաշրջանի աշխարհաքաղաքական անկայուն համատեքստը և Լեռնային Ղարաբաղի շուրջ չլուծված հակամարտությունը: Հայաստանն ու Ադրբեջանը շարունակում են աշխատել ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդների հետ՝ փորձելով կայուն քաղաքական լուծում գտնել խնդրին:

2012թ.-ին 7.2 տոկոս աճ գրանցելուց հետո Հայաստանի տնտեսական աճը դանդաղել է դառնալով 3,3 տոկոս 2013 թ. և 3,5 տոկոս 2014թ.: 2015թ.-ին ՀՆԱ-ի աճը կանխատեսվում է չափավորել 2.3 տոկոսով լայն տարածաշրջանային ճգնաժամի համատեքստում, որին Հայաստանը ենթարկվում է առևտրի, դրամական փոխանցումների և ներդրումային հոսքերի առումով: Ներդրումների կրճատումը և տնային տնտեսությունների սպառման ցածր մակարդակը, ինչը մասամբ պայմանավորված է դրամական փոխանցումների նվազմամբ, 2014թ.-ին զսպել են տնտեսական աճը: Փոխարժեքի երկու տարվա հարաբերական կայունությունից հետո, 2014թ.-ի վերջին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամը 14 տոկոսով արժեզրկվեց; միջազգային պահուստները նույնպես էականորեն նվազեցին 2014թ. հունվարի դրությամբ 2.11 մլրդ ԱՄՆ դոլարից մինչև 1.26 մլրդ ԱՄՆ դոլար 2015 թ. փետրվարի դրությամբ՝ 1.63 մլրդ. ԱՄՆ դոլարի աճ արձանագրելով 2015 թ. սեպտեմբերին: Թուլացող արժույթը կարող է իր հերթին բացահայտել բանկային հատվածի խոցելիությունը՝ հաշվի առնելով դոլարիզացիայի բարձր մակարդակը: ԵՏՄ շրջանակներում ավելի սերտ ինտեգրումը կարող է ինչպես օգուտներ բերել, այնպես էլ անորոշություններ ստեղծել:

Այս ֆոնի վրա ներքին մասնավոր հատվածի մրցունակության ամրապնդումը և հավասար պայմանների ստեղծումը առանցքային հնարավորություն կրնձեռեն Հայաստանին ավելի լայնամասշտաբ տնտեսություն ստեղծել, կրճատել արտաքին գործոնների նկատմամբ խոցելիությունը և կայուն աճ ապահովել: Անհրաժեշտ է մեծացնել ֆինանսավորման հասանելիությունը, հատկապես՝ ՄՓՄՁ-ների համար, շարունակել բարելավել գործարար միջավայրը, կորպորատիվ հատվածում ժամանակակից կառավարման կարողություններ զարգացնել, ինչպես նաև ամրապնդել արժեքային շղթան: Կապիտալի շուկաների զարգացումը, հատկապես՝ կենսաթոշակային բարեփոխումների համատեքստում, մեկ այլ կարևոր տարր է, որը կարող է ընդլայնել ֆինանսական ոլորտում գերիշխող ավանդական բանկային վարկավորումը, որն արդեն իսկ խեղդում է կորպորատիվ վարկառուներից շատերին: Եվ վերջապես, դեռ շատ անելիքներ կան՝ հանրային ծառայությունները և ենթակառուցվածքները բարելավելու և առևտրականացնելու ուղղությամբ, որոնք նպատակ են հետապնդում ինչպես քաղաքացիների համար ուղղակի օգուտ ապահովել, այնպես էլ՝ բարելավել բիզնեսի մրցունակությունը:

Այս համատեքստում, Բանկը նոր Ռազմավարության ժամանակահատվածում հետամուտ կլինի հետևյալ ռազմավարական կողմնորոշումներին.

Խթանել մասնավոր հատվածի մրցունակությունը՝ ամրապնդելով կարողությունները, մեծացնելով թափանցիկությունը կորպորատիվ հատվածում և բարելավելով գործարար միջավայրը: Հայաստանի փոքր, բաց տնտեսության համար ներդրումներ ներգրավելու համար չափազանց կարևոր է էապես բարելավել մրցունակությունը: Բանկը կթիրախի կարգավորող ու վարչական միջավայրերի բարեփոխումներին ուղղված աջակցությունը, կխրախուսի բոլոր հատվածներում առավել կայուն և ռեսուրսաարդյունավետ աճը և կուժեղացնի իր աջակցությունն այն ՄՓՄՁ-ներին, որոնք, համադրելով ֆինանսներն ու խորհրդատվական ծառայությունները, ձգտում են ավելի թափանցիկ ու մրցունակ լինել: Մինչ Փոքր բիզնեսի նախաձեռնության (ՓԲՆ) գործիքների միջոցով Հայաստանի մասնավոր հատվածի լավագույն ընկերությունների ֆինանսավորումը կշարունակի Բանկի կողմից տրամադրվող աջակցության անբաժանելի մասը լինել, արդյունաբերության տարբեր ոլորտներում գործող ՓՄՁ-ների ընդգրկումը գործընկեր բանկերի միջոցով կշարունակի անցումային գործընթացի վրա, ընդհանուր առմամբ, առավելագույն ազդեցությունն ապահովել: Հետևաբար, ՓՄՁ վարկային գծերի միջոցով ֆինանսավորման հասանելիության խթանումը կշարունակի Բանկի ռազմավարության անկյունաքարը լինել:

Զարգացնել կապիտալ շուկաները և խթանել տեղական արժույթով ֆինանսավորումը: Մինչդեռ ներկայումս Հայաստանի համար հասանելի են միջազգային կապիտալ շուկաները, տեղական կապիտալ շուկաների զարգացումը և տեղական արժույթով ֆինանսավորումը վճռորոշ են երկրի կայուն զարգացման համար: Կապիտալի ամուր ու հաստատուն կառուցվածքում նոր գործիքներ են անհրաժեշտ, իսկ կորպորատիվ հատվածում՝ բաժնետիրոջ արժեքի նկատմամբ մոտեցման մեջ ժամանակակից վարքագիծ: Քանի որ իշխանությունները

կենսաթոշակային պարտադիր բարեփոխումներ են իրականացնում, ինչը, ամենայն հավանականությամբ, կավելացնի խնայողությունները և պարտատոմսերի ու բաժնային կապիտալի նկատմամբ ներքին պահանջարկ կստեղծի, կենսաթոշակային ֆոնդի ներդրումների մեծամասնությունը կիրականացվի տեղական արժույթով: Երբ բարեփոխումները գործարկվեն, հաջողությունը մեծամասամբ կախված կլինի տեղական շուկայում կապիտալի շուկայի թողարկումների առողջ առաջարկի ձևավորումից, ինչպես նաև շուկայի իրացվելիություն ստեղծելու համար բավական թվով տարբեր ներդրողների առկայությունից՝ հուսալի դրամային շուկայի և հեջավորման գործիքների ձևավորմանը զուգահեռ: Բանկը կանդրադառնա այս մարտահրավերներին Հայաստանում՝ որպես տեղական արժույթի և կապիտալի շուկաների ուղղությամբ կատարվող իր աշխատանքների թիրախային երկիր:

Զարգացնել կայուն և առևտրականացված հանրային կոմունալ ծառայություններ: Աճի բարձր տեմպերի բացակայության պայմաններում Հայաստանի հասանելի հարկաբյուջետային տիրույթը չի կարող ամբողջությամբ ընդգրկել երկրի էներգետիկ, տրանսպորտային և համայնքային ենթակառուցվածքների վճռորոշ կարիքները: Այս փաստը ընդգծում է առևտրականացման և հանրային ծառայությունների մատուցման մեջ ավելի մեծ մասնավոր մասնակցության կարևորությունը, իսկ միջնաժամկետում՝ պարտքի կայունությունն ապահովելու համար բոլոր սուվերեն և սուվերեն երաշխավորությամբ ծրագրերի ֆինանսավորման համար էական դրամաշնորհային էլեմենտի անհրաժեշտությունը: Առաջնահերթություններն արդյունավետորեն սահմանելու համար Հայաստանի Կառավարությունը պետք է սեկտորալ ազգային ռազմավարությունների շրջանակներում ծրագրեր մշակի, որոնք համահունչ են դրանց ֆինանսավորման սահմանափակումների հետ: Բանկը լավ հնարավորություններ ունի այլ դոնորների հետ համագործակցելով՝ նպաստել այս ռազմավարություններին, ինչպես նաև աջակցել հանրային ծառայությունների մատուցման արդիականացմանն ու ընդլայնմանը՝ քաղաքականության ոլորտում խորհրդատվություն տրամադրելով և կարողությունների զարգացմանն աջակցելով, ինչը նպատակ կհետապնդի կայուն առևտրականացում ապահովել: Այս գործունեությունները կհամակցվեն էներգետիկայի և էներգաարդյունավետության, տրանսպորտի և մունիցիպալ ծառայությունների ոլորտում այնպիսի ծրագրերի վարկավորմամբ (այդ թվում, ըստ անհրաժեշտության, պետական երաշխավորությամբ վարկավորում), որոնք բարենպաստ են շրջակա միջավայրի համար, բարելավում են մրցունակությունը և հանգեցնում են ծախսերի վերականգնմանը:

1 ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

1.1 Բանկի ներկայիս պորտֆելը

Մասնավոր հատվածի պորտֆելի հարաբերակցություն՝ 91.5%, 2015թ.-ի հոկտեմբերի 31-ի դրությամբ

Ոլորտ	Պորտֆել				
	Ծրագրերի քանակը	Պորտֆելը	Պորտֆելի տոկոսը	Գործառնական ակտիվները	Գործառնական ակտիվների տոկոսը
Էներգետիկա	5	51	17%	51	22%
Էլեկտրականություն և էներգիա	3	39	13%	39	17%
Բնական պաշարներ	2	13	4%	13	6%
Ֆինանսական հաստատություններ	33	143	49%	106	46%
Դեպոզիտորական վարկ (բանկեր)	26	131	45%	96	42%
Ոչ-դեպոզիտորական վարկ (ոչ բանկային)	7	12	4%	10	4%
Արդյունաբերություն, առևտուր և բիզնես	9	30	10%	29	13%
Ագրոբիզնես	3	14	5%	14	6%
Բաժնային կապիտալի հիմնադրամներ	1	2	1%	1	1%
Արտադրություն և ծառայություններ	4	12	4%	12	5%
Գույք և զբոսաշրջություն	1	2	1%	2	1%
Ենթակառուցվածք	9	72	24%	44	19%
Մունիցիպալ և բնապահպանական ենթակառուցվածքներ	7	32	11%	16	7%
Տրանսպորտ	2	38	13%	28	12%
ԸՆԴԱՄԵՆԸ	56	295	100%	231	100%

Աղբյուր՝ ՎՋԵԲ-ի Բիզնես կատարողականի նավիգատոր

1.2 Նախորդ ռազմավարական ուղղությունների իրականացումը

Երկրի գծով նախորդ ռազմավարության ժամանակահատվածի համար Բանկի հիմնական գերակայությունները Հայաստանում հետևյալն էին. (i) զարգացնել ֆինանսական հատվածը և ընդլայնել ֆինանսավորման հասանելիությունը; (ii) բարելավել համայնքային ու քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքները; (iii) զարգացնել ագրոբիզնեսը և բարձր շահութաբերությամբ ու արտահանել ձգտող արդյունաբերական ընկերությունները; (iv) բարելավել կարգավորող և ինստիտուցիոնալ հենքերը՝ կայուն էներգիայի և հանքարդյունահանման

հատվածներում շահութաբերությունը բարձրացնելու նպատակով: Բացի այդ, Բանկը նաև ներգրավվել է գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքական երկխոսության գործընթացում: Չնայած մարտահրավերներով լի գործունեության միջավայրին, Բանկը €257.2 միլիոն ընդհանուր ծավալով 44 ծրագիր է կնքել՝ իր կուտակային ներդրումների ծավալը հասցնելով €876.7 միլիոնի՝ 137 ծրագրում: Ներդրումները զուգորդվել են այս ոլորտներից յուրաքանչյուրում նշանակալից քաղաքական երկխոսությամբ, տեխնիկական աջակցությամբ և կարողությունների հզորացման գործունեություններով:

▪ *Չարգացնել ֆինանսական հատվածը և ընդլայնել ֆինանսավորման հասանելիությունը*

Բանկն ընդլայնել է ֆինանսավորման հասանելիությունը, հատկապես՝ ՄՓՄՁ-ների համար՝ առևտրային բանկերին ու միկրո-ֆինանսավորման կազմակերպություններին մի շարք նպատակային վարկային գծեր տրամադրելով, ուղղակի, «մեզոնիսային» և բաժնային կապիտալում ներդրումներ կատարելով, ինչպես նաև տեղական արժույթի հատուկ շեշտադրմամբ լրացուցիչ տեխնիկական աջակցություն տրամադրելով: Հայաստանը նաև այն երկրներից մեկն է, որտեղ Բանկի «Տեղական արժույթի և կապիտալի շուկաների զարգացման» (LC2) նախաձեռնությունը լավագույն և առավել տեսանելի արդյունքներն է արձանագրել՝ հարթակ ստեղծելով տեղական կապիտալ շուկաների հետագա զարգացման համար: Ռազմավարության ժամանակահատվածի ընթացքում արձանագրված նշանակալի ձեռքբերումները ներառում են.

- 26 գործարքների արդյունքում €155.8 միլիոն գումար է ուղղորդվել դեպի հայկական առևտրային բանկեր ու միկրո-ֆինանսավորման հաստատություններ՝ հետագա, հիմնականում՝ ՄՓՄՁ-ների վերավարկավորման համար: Այդ գումարից մոտ €80 միլիոնը հատկացվել է այդ գումարին համարժեք տեղական արժույթով՝ օգնելով կրճատել փոխարժեքի ռիսկերի նկատմամբ խոցելիությունը: Այս վարկային գծերը նպաստել են ավելի քան 300,000 ՄՓՄՁ-ների վարկավորմանը՝ €868 միլիոն ընդհանուր գումարով: Վարկերը ռազմավարության ժամանակահատվածի ընթացքում տրամադրել են ՎՁԵԲ-ի գործընկեր բանկերը:
- Կովկասի էներգաարդյունավետության ծրագրի (CEEP) ներքո թողարկված վարկային գծերի միջոցով զարգացել է էներգաարդյունավետության ներդրումների ինչպես պահանջարկը, այնպես էլ առաջարկը, իսկ ներդրումների շրջանակն ընդլայնվել է՝ կորպորատիվ հատվածից բացի ներառելով նաև ֆիզիկական անձանց վարկավորումը: 2013 թ.-ից ի վեր ծրագրին միացել են չորս հայկական բանկեր՝ €27.5 միլիոն ընդհանուր արժողությամբ վարկավորման պայմանագրեր ստորագրելով: Ստացված գումարն ուղղվելու է արդյունաբերական ու բնակելի հատվածներում էներգաարդյունավետության ենթածրագրի վերավարկավորմանը: 2015թ.-ի հունվար ամսվա դրությամբ հատկացվել է մոտ \$13.6 միլիոն (այդ թվում՝ \$8.53 միլիոն ընդհանուր գումարով կորպորատիվ հատվածին

տրամադրված 8 ենթավարկեր և 3,608 ենթածրագիր բնակելի ոլորտում ու ֆիզիկական անձանց հետ): Ակնկալվում է, որ այս ներդրումները տարեկան 29 կիլոտոննայով կկրճատեն ածխածնի երկօքսիդի (CO₂) արտանետումները:

- Տեղական ինստիտուցիոնալ ու կարգավորող հենքերի զարգացմանն ուղղված նախկին ջանքերի վրա հիմնվելով՝ 2014 թ.-ին Բանկը թողարկեց հայկական դրամով իր առաջին պարտատոմսը, որից ստացված հասույթը ուղղվեց տեղական բանկային համակարգում դրամային վարկային գծերի միջոցով ՄՓՄՁ-ների վերավարկավորմանը: 2015 թ.-ի մարտ ամսվա դրությամբ Բանկը 12.75 միլիարդ ընդհանուր արժողությամբ տեղական արժույթով պարտատոմսեր է թողարկել, որոնց թվում՝ 6.75 միլիարդ դրամ արժողությամբ ԱՄՆ դոլարով հաշվարկված Եվրոբոնդ, ինչպես նաև տեղական բորսայում դրամով երեք ավելի փոքր թողարկումներ:
- Եվ վերջապես, 2011 թ.-ի ապրիլին Բանկը Կառավարության հետ փոխըմբռնման հուշագիր է ստորագրել, որով նախատեսվում էր տեղական արժույթի և կապիտալ շուկաների զարգացմանն առնչվող մի շարք ոլորտներում տեխնիկական աջակցություն տրամադրել Կառավարությանը: Ռազմավարության ողջ ժամանակահատվածի ընթացքում այս ուղղությամբ հետևողական առաջընթաց է գրանցվել, այդ թվում՝ ՀՀ ԿԲ գնաճի թիրախավորման կարողության ամրապնդումը՝ դրամավարկային քաղաքականությունն ավելի ամրացնելու նպատակով, պարտադիր անհատական կենսաթոշակի կոմպոնենտի մասնակի ներդրումը, ինչպես նաև դոլարիզացիան կրճատելուն միտված մի շարք միջոցառումները:

(ii) Բարելավել համայնքային և քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքները

Բանկը շարունակել է սատարել համայնքային և քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքների բարելավմանը: Ռազմավարության ժամանակահատվածի ընթացքում Բանկը մոտ €20 միլիոն ընդհանուր գումարով սուվերեն վարկեր է տրամադրել, որոնց նպատակն էր ապահովել հետևյալ ձեռքբերումները.

- 2012 թ.-ին ստորագրված €5 միլիոն եվրո գումարով երկրորդ սուվերեն վարկի շրջանակներում աջակցել Երևանի մետրոպոլիտենի հետագա վերականգնման ծրագրին, այդ թվում՝ բնապահպանական ազդեցությունը, էներգաարդյունավետությունն ու առևտրականացումը բարելավելուն ուղղված մի շարք միջոցառումներ ձեռնարկել, ինչպես, ասենք, էներգաարդյունավետ պոմպերի միջոցով բացառել ջրերի ներհոսքը համակարգ, ժամանակակալից կառավարման տեղեկատվական համակարգ մշակել և ընկերության ու քաղաքի միջև հանրային սպասարկման պայմանագիր կնքել:
- Որպես ԵՄ-ի «Սահմանների համալիր կառավարման» տարածաշրջանային նախաձեռնության մի մաս՝ Բագրատաշենում նոր կամուրջ կառուցել՝

Հայաստանի և Վրաստանի միջև հիմնական սահմանակետում տարանցումը բարելավելու նպատակով:

- Հայաստանում կառուցել կոշտ կենցաղային թափոնների առաջին աղբավայրը, որը կհամապատասխանի ԵՄ պահանջներին: Ի լրումն վարկի, Եվրոպական Միության Հարևանության ներդրումային գործիքի շրջանակներում €3.5 միլիոն գումարի չափով կապիտալի դրամաշնորհային ֆինանսավորում է տրամադրվել: Այս ծրագիրն առաջինն է, որ իրականացվում է Հայաստանի Կոշտ կենցաղային թափոնների ազգային ռազմավարության ներքո:

(iii) Զարգացնել ագրոբիզնեսը և բարձր շահութաբերությամբ ու արտահանել ձգտող արդյունաբերական ընկերությունները

Բանկը ուղղակի ներդրումների (վարկ, մասնակցություն կապիտալում, «մեզոնին») միջոցով սատարել է նաև ագրոբիզնեսին և բարձր շահութաբերությամբ կորպորատիվ ընկերություններին: Ներդրումները, որպես կանոն, զուգորդվում էին կարողությունների զարգացման պրակտիկ աջակցությամբ՝ ավելի փոքր հաճախորդներին օգնելով զարգացնել իրենց բիզնեսը՝ ինտենսիվ կապիտալ ներդրումներ պահանջող գործարար ծրագրերն իրականացնելու համար չափազանց կարևոր ֆինանսական ու տեխնիկական աջակցության տրամադրմամբ: Մինչ երբեմն դժվար էր դուրս գալ կապիտալում մասնակցությունից, վերջերս լավ առաջընթաց է գրանցվել փոքր ռազմավարական ներդրողների օգտին բաժնային մասնակցությունից դուրս գալը հեշտացնելու գործում հաստատելով այդ ներգրավվածությունների անցումային ազդեցությունը և հիմք ստեղծելով հետագայում Հայաստանում մասնավոր կապիտալում մասնակցության գործարքներ իրականացնելու համար: Բանկը.

- Ագրոբիզնեսին աջակցելուն միտված €9.8 միլիոն ընդհանուր գումարով 6 գործարք է կնքել, ինչպես նաև գործընկեր երկու բանկերին վարկային գծեր ու տեխնիկական աջակցություն է տրամադրել՝ միկրո- և փոքր ագրոբիզնեսները վերավարկավորելու համար:
- 2003 թ.-ից ի վեր Փոքր բիզնեսի աջակցման (ՓԲԱ) ծրագրի շրջանակներում տեխնիկական աջակցություն և խորհրդատվական ծառայություններ են մատուցվել ավելի քան 1,100 Գործարար խորհրդատվական ծառայությունների (ԳՄԽ) և 50 Ձեռնարկությունների աճի ծրագրի (ՁԱԾ) նախագծերի միջոցով՝ բարձրորակ ընկերություններին (որոնց մեջ՝ էական թվով մարզային բիզնեսներին) օգնելով բարելավել իրենց ֆինանսական հաշվետվողականությունը, կառավարման կարողությունը և մարքեթինգային գործունեությունները: Այս ջանքերի շնորհիվ վերջին երեք տարիների ընթացքում ՁԱԾ-ի շրջանակներում միջազգային փորձագետները խորհրդատվություն են տրամադրել 13 դինամիկ կորպորատիվ ընկերություններին: Այդ խորհրդատվությունն ընկերություններին հատկապես արդյունավետորեն օգնեց բիզնեսի զարգացման ռազմավարություններ մշակել ու իրականացնել: Ծրագրի

գոյության ողջ ընթացքում ՓԲԱ հաճախորդների մոտ 30 տոկոսը խորհրդատվական ծառայություններ ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում ֆինանսավորում են ստացել, 57 տոկոսը լրացուցիչ աշխատողներ են ներգրավել, իսկ ավելի քան 91 տոկոսը մեծացրել են իրենց շրջանառությունը:

- Այլ միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համատեղ 2012 թ.-ին աջակցել է Կովկասի զարգացման հիմնադրամի ստեղծմանը. դա առաջին հիմնադրամն էր, որ նպատակաուղղված էր վարկի և բաժնային կապիտալում մասնակցության միջոցով ներդրումներ կատարել Կովկասի տարածաշրջանի ՓՄՁ-ներում: Հայաստանում արդեն իսկ բաժնային կապիտալում ներդրման երկու խոստումնալից գործարքներ են կատարվել: Բացի այդ, ՓԲԱ ծրագրի միջոցով Բանկը ներդրողների հետ հարաբերությունների և բաժնային կապիտալում մասնակցության համար ընկերություններին պատրաստելու վերաբերյալ խորհրդատուների ուսուցման ընդգրկուն դասընթաց է անցկացրել:

(iv) Բարելավել կարգավորող և ինստիտուցիոնալ հենքերը՝ կայուն էներգիայի և հանքարդյունահանման հատվածներում շահութաբերությունը բարձրացնելու նպատակով

Կայուն էներգիայի և հանքարդյունահանման հատվածներում (ի լրումն էներգաարդյունավետությանն ուղղված վարկային գծերի), Բանկը €27.4 միլիոն ընդհանուր գումարով 3 գործարք է կնքել (այդ թվում՝ բաժնային կապիտալում մասնակցության 2 ներդրում): Մասնավորապես, Բանկը.

- €19 միլիոն վարկ է տրամադրել Միջազգային էներգետիկ կորպորացիային (ՄԷԿ), որի նպատակն է վերականգնել Մևան-Հրազդան կասկադի յոթ փոքր հիդրոէլեկտրակայանները: Այս ծրագիրն օգնեց նաև ՄԷԿ-ի տեխնիկական չափանիշները համապատասխանեցնել միջազգային լավագույն փորձին:
- €7.3 միլիոն ընդհանուր գումարով բաժնային կապիտալում մասնակցության երեք գործարք է կնքել Տորոնտոյի արժեթղթերի շուկայում ցուցակված «Լիդիան Ինթերնեյշնլ» հանքարդյունահանող ընկերության հետ: Ի լրումն այս ներդրումների, Բանկը բազմաբովանդակ երկխոսության մեջ է ներգրավվել՝ նպատակ հետապնդելով Հայաստանում համապարփակ պատկերացում ստեղծել հանքարդյունահանման համաշխարհային արդյունաբերության մեջ կիրառվող միջազգային չափանիշների, պահանջների ու լավագույն փորձի վերաբերյալ: 2014 թ.-ի վերջին թույլտվություն ստացվեց իրագործել Լիդիանի Ամուլսարի հանքարդյունահանման ծրագիրը: Եթե ծրագիրը հաջողություն ունենա, այն կարող է ոլորտի համար որպես կարևոր ուղենիշ ծառայել և դրական ազդակ հանդիսանալ միջազգային ներդրողների համար:

(v) Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքական երկխոսության

Եվ վերջապես, Բանկն այս ներդրումները գուգորդել է բազմաթիվ ոլորտներում շարունակական քաղաքական երկխոսությամբ.

- ՎՋԵԲ-ի կողմից աջակցվող Ներդրումային խորհուրդը (ՆԽ) դրական դերակատարություն է ունեցել գործարար միջավայրը բարելավելու և էական նորմատիվային բարեփոխումների հասնելու գործընթացում, որոնց թվում են՝ փոքր բիզնեսների համար շրջանառության հարկի ռեժիմը և ռիսկերի վրա հիմնված տեսչական ստուգումների համապարփակ բարեփոխումների հաստատումը: ՎՋԵԲ-ը ՆԽ Քարտուղարությանը նյութական աջակցություն է տրամադրել՝ այդպիսով մասնավոր հատվածի տնտեսական գործունեության վրա ազդող կարգավորող հենքերը բարելավելու շուրջ մասնավոր հատվածի և Կառավարության միջև երկխոսության, վերլուծության, խնդիրների լուծման և որոշումների կայացման հարթակ ստեղծելով:
- Էլ-Գնումների մասով Բանկը սատարել է Կառավարությանը իրավական ու նորմատիվային համապարփակ փոփոխություններ մշակել, որոնք անհրաժեշտ են համակարգը ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու համար: 2014 թ.-ի հունվարի 1-ին գործարկվեց Էլ-Մրցույթի մոդուլը, իսկ մյուս մոդուլները ակտիվորեն մշակվում են:
- Եվ վերջապես, Բանկը մանրամասն առաջարկություններ է մշակել հեռահաղորդակցության ոլորտը կարգավորող հենքը ԵՄ պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ, թեև մինչ օրս Կառավարության կողմից այդ առաջարկների ներդրումը սահմանափակվել է միայն հեռախոսահամարների տեղափոխելիության սկզբունքի գործարկմամբ:

1.3 Հիմնական քաղված դասեր

Չնայած այս ձեռքբերումներին, Բանկի ռեկորդը Հայաստանում շարունակում է տարասեռ մնալ, ինչը պայմանավորված է գործունեության ներքին և արտաքին դժվար միջավայրերով, անցումային շրջանի դանդաղ առաջընթացով և ոլորտների մեծամասնությունում միջինից մինչև խոշոր բացերով ու թերություններով: Ավելին, ինչպես ցույց է տալիս Բանկի փորձը ռազմավարության նախկին ժամանակահատվածում, կոնկրետ հատված թիրախավորելու մոտեցումը, ինչպես, ասենք, գյուղատնտեսության և գյուղատնտեսական վերամշակման հատուկ շեշտադրումը, կարող է դժվար իրագործելի լինել Հայաստանի նման փոքր տնտեսություններում, որտեղ ՎՋԵԲ-ի ներդրումային պահանջներին համապատասխանող պոտենցիալ թիրախների քանակը սահմանափակ է:

Համապատասխանաբար, Բանկը պետք է ավելի ռազմավարական մոտեցում ցուցաբերի մասնավոր հատվածի մրցունակության բարձրացմանը՝ աշխատելով բոլոր հատվածներում գործող խոստումնալից ընկերությունների հետ ու

ծրագրերով՝ և ինտեգրելով նպատակաուղղված տեխնիկական աջակցությունը, կարողությունների զարգացումը և քաղաքական երկխոսությունը շահավետ արդյունքներ գրանցելու համար:

Ռազմավարության նախորդ ժամանակաշրջանից քաղած հիմնական դասերը հետևյալն են. (1) նպատակային վարկային գծերը թեև հաջողված էին, այնուամենայնիվ երկար ժամանակ էր պահանջվում դրանք գործարկելու համար; (2) տեղական արժույթով վարկավորումը մեծ պահանջարկ ունի, բայց առաջարկը շարունակում է սահմանափակ մնալ; (3) ՓՄՁ-ներում ուղղակի ներդրումների լավ օրինակներ կան, սակայն դրանց վերօրինակումը դժվար է իրականացնել, իսկ բանկի պահանջներին համապատասխանող վարկարժան հաճախորդների ամբողջությունը սահմանափակ է; (4) մենաշնորհային դիրքերը շարունակում են խոչընդոտ հանդիսանալ ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված Կառավարության ջանքերի համար; և (5) ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ծրագրերը հաջողված էին, բայց դոնորների ընդլայնված համակարգում և երկրի բարելավված ռազմավարական հենք են պահանջում:

Նպատակային վարկային գծերի դանդաղ մեկնարկը: Ինչպես նշվեց, ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիությունն ընդլայնելու ուղղությամբ Բանկի ջանքերի հիմնական ասպեկտը նպատակային վարկային գծերի տրամադրումն էր: Անուամենայնիվ, դրանց իրացումը, հատկապես՝ էներգաարդյունավետության վարկային գծերի դեպքում, դանդաղ էր տեղի ունենում: Թեև ուսուցողական մեծ աշխատանքներ են տարվել, մինչ օրս դրամաշնորհի բաղադրիչը հաճախորդների հետաքրքրությունը շարժող հիմնական խթանն է եղել: Առաջ շարժվելով՝ Բանկը պետք է ավելի արդյունավետ կերպով ցույց տա ավարտված ծրագրերի արդյունքում արձանագրված ծախսերի խնայողությունները, որպեսզի խրախուսի այս ոլորտում գործունեության աճը, թեև դրամաշնորհի բաղադրիչի բացակայության պարագայում այս պրոդուկտի համար ամուր պահանջարկ ստեղծելը որոշակի ժամանակ կպահանջի: Էներգաարդյունավետության այս վարկային գծերի մասով ստացված փորձը նաև մասամբ կուղղորդի Բանկի մոտեցումը ռազմավարության նոր ժամանակահատվածում նախատեսված «Գործարար կանանց» (ԳԿ) նպատակաուղղված վարկային գծերի հանդեպ: Թեև վերջերս Բանկը սկսել է խորհրդատվական ծառայություններ մատուցել կին գործարարներին, որոնք, ի վերջո, այս վարկային գծերը ստանալու առաջնային թեկնածուները կլինեն, այս պահի դրությամբ կանանց պատկանող կամ նրանց կողմից ղեկավարվող շատ քիչ բիզնեսներ են ի վիճակի բացի խորհրդատվությունից օգտվել նաև ՎՋԵԲ-ի ուղղակի ներգրավվածությունից: Համապատասխանաբար, գործար կանանց ուղղված այս վարկային գծերի զարգացումը ժամանակ կպահանջի:

Տեղական արժույթով վարկավորումը դեռևս սահմանափակ է: Տեղական արժույթով ՓՄՁ վարկային գծերի մեծ պահանջարկ կա: Ցավոք, հայկական դրամով Արտարժույթի փոխանակման ֆոնդի (TCX) հազեցումը դրա հեջավորման պայմանները համեմատաբար քիչ գրավիչ են դարձրել: Եվ նույնիսկ եթե հեջավորում իրականացվում է, հեջերը, որոնք կիրառվում են շուկայական

սթրեսերի ընթացքում (ինչպես, օրինակ՝ 2015 թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում, երբ փոխարժեքի ռիսկի նկատմամբ խոցելիությունը հատկապես բարձր էր) փոխարժեքի ռիսկն արդյունավետորեն հետ են փոխանցում հաճախորդին, ինչն արտահայտվում է աննախադեպ բարձր տոկոսադրույքներով: Բացառելով, որ բանկը պարտքի մեջ տեղական ածույթի ռիսկ կստանձնի, ինչպես դա անում է բաժնակցային կապիտալի դեպքում, Բանկը կկենտրոնանա տեղական արժույթով պարտատոմսերի թողարկման վրա, ինչն այժմ Հայաստանում հաջողված և շարունակական գործընթաց է, ինչպես նաև դրամային շուկայի գործիքներ մշակելու վրա՝ խրախուսելով, որպեսզի շուկայի հեջավորման գործիքները ձևավորվեն Արտարժույթի փոխանակման ֆոնդից դուրս, հատկապես՝ տեղական շուկայում: Տեղական արժույթի համար բարենպաստ դրամավարկային հենքի մշակման համար Հայաստանի ԿԲ-ին տրամադրած Բանկի տեխնիկական աջակցությունը օգնեց մակրոտնտեսական պայմաններ ստեղծել այս առաջադրանքի համար:

ՓՄՁ ուղղակի ներդրումների լավ օրինակներ կան, սակայն դրանց ընդլայնումը խնդրահարույց է: Բանկը նաև ուղղակի ներդրումների (վարկավորում և մասնակցություն բաժնային կապիտալում) հաջողված պատմություններ է ունեցել՝ ներդրումներ կատարելով այն ՓՄՁ-ներում, որոնք ձգտել են զարգանալ ավելի լավ դեկավարման, կորպորատիվ կառավարման, ֆինանսական վերահսկման համակարգերի ներդրման և ռազմավարական կապիտալ ներդրումներ ներգրավելու միջոցով: Գլխավոր օրինակը դեղագործական՝ աչքի կաթիլներ ու պլազմա արտադրող «Լիկվոր» հայկական ընկերությունն է, որի բաժնետոմսերի 45 տոկոսը պատկանում է ՎՋԵԲ-ին: Վերջերս ընկերությունը՝ առաջինը Հայաստանում, ստացավ Պատշաճ Արտադրական Գործընթացներին (ՊԱԳ՝ GMP) համապատասխանության հավաստագիր: Պատրաստվելով «Լիկվոր»-ի հավաստագրմանը՝ Առողջապահության նախարարությունն ընդլայնեց այլ ընկերություններին նմանատիպ հավաստագիր տրամադրելու իր կարողությունը, ինչը այդ ընկերություններին և «Լիկվոր»-ին կօգնի արտահանման թիրախային երկրներում ՊԱԳ հավաստագիր ստանալ:

Այս հաջողություններն ապահովելու գործում առանցքային են եղել Բանկի տրամադրած պրակտիկ խորհրդատվական աջակցությունը և ֆինանսական օժանդակությունը, սակայն ողջ տնտեսության մասշտաբով նման հաջողություններն ընդլայնելը դեռևս մեծ մարտահրավեր է մնում: Թեև ԳՕԽ-ն մեծ արդյունավետորեն պոտենցիալ հաճախորդներ է պատրաստել ՎՋԵԲ-ից ուղղակի ֆինանսավորում ստանալու համար, իսկ ուղղակի ներդրումից ստացված ազդեցությունը բավականին մեծ է, սակայն դա նաև Բանկի սահմանափակ ռեսուրսների արտահոսք է: Ավելին, մինչդեռ հնարավոր է հաջողությամբ դուրս գալ Բանկի փոքր բաժնային ներդրումներից, այդ ելքը կարող է բավական դժվար լինել: Մեկ այլ դժվարություն է այնպիսի հաճախորդներ գտնել, որոնք համապատասխանում են Միջին չափի համաֆինանսավորման ծրագրի (ՄՀՖՕ՝ MCFF) կարգավորված պահանջներին: Բանկը պետք է ուղղակի ֆինանսավորման իր բիզնեսի զարգացման գործողություններում ընտրողական լինի՝ ցուցադրական

էֆեկտներ ապահովելու նպատակով, և միևնույն ժամանակ շարունակի աշխատել միջնորդների միջոցով (ինչպիսիք են՝ բանկերը և հիմնադրամները), որպեսզի կարողանա ՓՄՁ-ների ավելի լայն զանգվածի հասնել:

Բանկը դժվարությամբ է վարկարժան հաճախորդներ գտնում, այն դեպքում, երբ մասնավոր հատվածի ավանդական բանկային վարկավորումը շարունակում է սահմանափակ լինել: Այն հաճախորդները, որոնք համապատասխանում են հիմնական սեփականության և թափանցիկության մասով Բանկի պահանջներին, արդեն իսկ մեծապես ծանրաբեռնված են, շատ քիչ լրացուցիչ գրավի առարկա ունեն կամ ընդհանրապես չունեն, և հետևաբար ֆինանսապես ճնշված են՝ չնայած իրենց բիզնեսի հետագա զարգացման ռազմավարական պլաններին ու կապիտալի կարիքներին: Բացի այդ, ավանդական բանկային վարկավորման համար գրավին վերաբերող Հայաստանի ԿԲ-ի ռիսկի ցուցանիշները գործնականում բացառում են այլապես առողջ գյուղական բիզնեսների վարկավորումը: Սա ենթադրում է վարկի լրացուցիչ ապահովման միջոցների, ինչպես, ասենք՝ երաշխիքների, առևտրի ֆինանսավորման, ֆակտորինգի, լիզինգի, մասնավոր բաժնային կապիտալում մասնակցության և կապիտալ շուկաների զարգացման աճող շեշտադրումը, ինչպես նաև, հնարավորության դեպքում, ՄՀՏՕ գործիքների միջոցով գործընկեր բանկերի հետ աշխատանքը՝ փոքր չափի գործարքները ծախսարդյունավետ ձևով իրականացնելու նպատակով:

Մենաշնորհային համակենտրոնացումը շարունակում է ներդրումային միջավայրի բարելավման հիմնական խոչընդոտը լինել, և միգուցե նաև Հայաստանում տարբերակված և ամուր մասնավոր հատված ձևավորելու առանցքային գապող սահմանափակումը: Թեև ԷԼ-Կառավարման և բիզնեսի վարման վարչական խոչընդոտները բացառելու գործընթացում առաջընթացը շարունակվում է, սակայն Կառավարությունը դեռևս չի դրսևորել գերիշխող և մեծապես փոխկապակցված խմբերում տիրելու իր քաղաքական կարողությունը: Հարկային և մաքսային ոլորտներում անհավասար պայմանները, թերևս, ամենավատ ազդող բնագավառներն են և բացառությամբ ընտրված խնդիրների, որոնց անդրադառնում է ՎՋԵԲ-ի կողմից աջակցվող ՆԽ-ն (ինչպես, ասենք՝ տեսչական ստուգումների բարեփոխումը) հարկային ու մաքսային ավելի ընդգրկուն բարեփոխումներն այն ոլորտը չեն, որտեղ ՎՋԵԲ-ը կարող է առաջնորդի դերում հանդես գալ: Որպես արդյունք, Բանկը պետք է շարունակի համակարգել այլ ՄՖՀ-ների ու դոնոր գործակալությունների հետ՝ միևնույն ժամանակ ներքնից վերև մոտեցում կիրառելով քաղաքական երկխոսության ու տեխնիկական աջակցության նկատմամբ, հատկապես այն ոլորտներում, որտեղ իշխանությունները պատրաստակամ են արդյունքների հասնել (ինչպես, օրինակ՝ ֆակտորինգի նկատմամբ հարկային մոտեցման վերջին բարեփոխումները): Որպես կանոն այս գործունեությունները կկենտրոնանան ՎՋԵԲ-ի ծրագրերի շուրջ, ինչպես, օրինակ՝ Հայ Փոստի սեփականաշնորհման հետ կապված շարունակական խորհրդատվական աջակցությունը: Բանկը պատրաստ է ակտիվացնել իր աջակցությունը, եթե բարեփոխումների միջավայրը բարելավվի:

Իսկ մինչ այդ, Բանկը կարող է շարունակել շատ բան փոխել՝ աջակցելով ՆԽ քարտուղարությանը: Այդ ֆորումից բխող քաղաքականության հիմնական փոփոխությունները ներառում են փոքր բիզնեսների համար լավ մշակված շրջանառության հարկի ներդրումը, ՏՏ մասնագետների կարգավիճակը պաշտոնապես ձևակերպելու փուլային մոտեցումը՝ միննույն ժամանակ Կառավարությանը լրացուցիչ եկամուտ ապահովելով, տեսչական ստուգումների բարեփոխումները, ինչպես նաև ի աջակցություն փոքր բիզնեսներին՝ ընտրովի փոփոխություններ կարգավորումներում, ինչպես, օրինակ՝ անշարժ գույքի գործակալների համար արտոնագրերի կրճատումը: Բանկը պետք է շարունակի այս արգասաբեր ներգրավվածությունը, և, թերևս, մեծացնի խորհրդատվական ծառայությունների մասով իր տեխնիկական ու ֆինանսական աջակցությունը՝ սատարելով Քարտուղարությանը նոր և գնալով ավելի դժվար կարգավորման մարտահրավերներ ստանձնել:

Ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ծրագրերը հաջողված էին, բայց դոնորների ընդլայնված համակարգում և երկրի բարելավված ռազմավարական հենք են պահանջում: Եվ վերջապես, ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների մատուցման ոլորտում ՎՁԵԲ-ի կողմից իրականացված ծրագրերը սահուն կերպով են ընթանում և լավ արդյունքներ են ապահովում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ կլինի ընդլայնել ՄՖՀ/դոնորների համակարգում և հարկաբյուջետային տիրույթի սահմանափակումների համատեքստում, ինչը արագորեն պարտավորեցնող է դառնում, Կառավարության հետ համաձայնեցված պլանավորում իրականացնել: Թեև Հայաստանն այլևս Ջարգացման միջազգային ասոցիացիայի անդամ երկիր չի հանդիսանում, Կառավարությունը շարունակում է սուվերեն աջակցություն ունեցող բոլոր ծրագրերի ֆինանսավորման համար դոնորներից արտոնյալ պայմաններով ֆինանսավորում հայցել: Մա հիմա նույնիսկ է՛լ ավելի բարդ է, քանի որ Հայաստանի համար գնալով ավելի դժվար կլինի ապահովել ԵՄ-ՀՆԳ-ի ֆոնդերի հասանելիությունը:

Ցավոք, դոնորի ավանդական մոտեցումն էր դոնորի տեսանկյունից գրավիչ ծրագրեր բացահայտել, այդ ծրագրերի իրագործելիությունն ուսումնասիրելու համար դրամաշնորհային ֆինանսավորում ստանալ, որից հետո համագործակցել Կառավարության և Ֆինանսների նախարարության հետ՝ կապիտալ ծախսերի դրամաշնորհային բաղադրիչը շարունակելու հայց ստանալու նպատակով: Կառավարությունը գրեթե երբեք չի մերժում որևէ ծրագիր նախքան դրա իրագործելիության ուսումնասիրության ավարտը: Թեև մեծ թվով լավ ծրագրեր ի վերջո ընտրվում են պետական աջակցություն ստանալու համար, որպես կանոն բացակայում է ըստ հատվածների ազգային տեսլականը և պարզվում է, որ որոշ ծրագրեր, ցածր տնտեսական շահութաբերություն ունենալով, սպառում են այդքան թանկ ֆիսկալ տիրույթը, ինչը առանձնահատուկ մտահոգություն է, քանի դեռ դրամը արժեզրկվում է ԱՄՆ դոլարի նկատմամբ, իսկ պետական պարտքի առյուծի բաժինը հենց ԱՄՆ դոլարով է:

Այս համատեքստում դոնորները/ՄՖՀ-ները պետք է ավելի արդյունավետորեն համակարգեն իրենց գործունեությունը և համագործակցելով հայկական իշխանությունների հետ՝ հանրային կոմունալ ծառայությունների և ենթակառուցվածքների յուրաքանչյուր ենթահատվածի, ինչպես նաև տարբեր հատվածների համար ֆինանսավորում ստանալուն արժանի ռազմավարություններ սահմանեն, այնպես, որ դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերը հնարավոր լինի միավորել այդ ռազմավարությունների շուրջ: Ինչպես և մյուս ՄՖՀ-ները Հայաստանում, ՎՋԵԲ-ը նույնպես ներկայումս հանրային ծառայությունների ենթակառուցվածքների ոլորտում մի քանի ծրագիր է մշակում, որոնցից շատերը իրագործելիության նախնական ստորագրման առաջադեմ փուլերում են գտնվում, առանց Կառավարության կողմից անհրաժեշտ ֆինանսավորումն ապահովելու հստակ ռազմավարության և այն պայմաններում, երբ պետական փոխառությունները կարող են շուտով սահմանափակվել պարտքի կայունության նկատառումներով:

Այդուհանդերձ, որոշակի առաջընթաց արձանագրվել է: Օրինակ, ԵՄ-ի մեծ աջակցությամբ 2014 թ.-ին Բանկը կարողացավ երեք տարվա ընդմիջումից հետո առաջ տանել Կոտայքի Կոշտ կենցաղային թափոնների ծրագիրը՝ Կառավարությանը հնարավորություն տալով այդ ժամանակահատվածում Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) աջակցությամբ մշակել Կոշտ կենցաղային թափոնների ազգային ռազմավարությունը և մինչև ժամանակ ծրագրին մասնակցող քաղաքապետերի շրջանում փոխհամաձայնություն ձևառնելով սպասարկումը խթանելու բարեփոխումների ներդրման և ծախսերի լիարժեք փոխհատուցմանը հասնելու համար սակագների աստիճանական բարձրացման շուրջ: Նմանապես, 2013 թ.-ից ի վեր ՄԱԿ-ի կողմից սատարվող Դոնորների ենթակառուցվածքի աշխատանքային խումբը պարբերաբար հանդիպումներ է անցկացրել և արդեն իսկ առաջընթաց է արձանագրում իրագործելի ռազմավարությունների շուրջ համակարգված ձևով ծրագրերը միավորելու գործում: Կառավարությունն այս խումբն օգտագործել է ճանապարհաշինության ծրագրերի մասով, օրինակ՝ Վանաձորը Վրաստանի Բագրատաշեն սահմանակետին կապելու M6 ճանապարհի նախագիծը մշակելու համար, իսկ 2014 թ.-ի կեսերին նախաձեռնել է էներգետիկայի շուրջ դոնորների համակարգման կլոր սեղան-քննարկումների շարք, որոնք օգնում են էներգետիկ ներդրումները պլանավորելու համար որոշակի կարևոր ասպեկտներ պարզաբանել: Այս մեխանիզմների միջոցով շարունակական ներգրավվածությունը կարևոր դերակատարություն կունենա հանրային ոլորտում և կոմունալ ծառայություններում ներդրումների առաջնահերթությունների նկատմամբ Կառավարության և այլ ՄՖՀ-ների միասնական մոտեցումը ձևավորելու գործընթացում:

2 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

2.1 Քաղաքական համատեքստ

Հայաստանը գտնվում է իր քաղաքական համակարգի՝ կիսանախագահականից խորհրդարանական հանրապետության փոփոխության գործընթացում: Ազգային Ժողովի հաստատումից հետո սահմանադրական փոփոխությունների փաթեթի համաժողովրդական հանրաքվե կանցկացվի 2015 թ. դեկտեմբերի 6-ին:

Փոփոխությունների ներդրմամբ ավելի մեծ հստակություն կսահմանվի կառավարության տարբեր ճյուղերի լիազորությունների բաժանման հարցում՝ սահմանափակելով ՀՀ նախագահի լիազորությունները, ամրապնդելով Կառավարության գործադիր դերը և ընդլայնելով ԱԾ կարողությունները գործադիրի նկատմամբ օրենսդրական հսկողություն իրականացնելու համար: Փոփոխությունները նաև կխթանեն դատական համակարգի անկախությունը: Սակայն, սահմանադրական բարեփոխումները, որոնք նախաձեռնվեցին նախագահի կողմից 2014 թ կարող են առաջացնել քաղաքական բանավեճ. Որոշ ընդդիմադիր կուսակցությունները միացել են սահմանադրական բարեփոխումների նախաձեռնությանը, իսկ մյուսները շարունակում են արտահայտվել վերապահումներով:¹

Հայաստանի գործող նախագահը Մերժ Սարգսյանն է, ով պաշտոնավարում է իր երկրորդ հնգամյա ժամկետը, որն ավարտվում է 2018 թ.-ին: Նախագահ Սարգսյանը ղեկավարում է Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), որը 2012 թ.-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ համոզիչ վստահության քվե ստացավ և հիմա 131 պատգամավոր ունեցող Ազգային ժողովում ներկայանում է 69 անդամով: Սա ՀՀԿ-ին թույլ տվեց միակուսակցական կառավարություն ձևավորել: 2014 թ.-ին ձևավորված նոր Կառավարությունը հավակնոտ բարեփոխումների ծրագիր հայտարարեց, որի հիմնական գերակայությունների շարքում ներառված են կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ պայքարը, տնտեսական մրցակցության խթանումը և ներդրումային միջավայրի բարելավումը: Հայաստանը Հակակոռուպցիոն խորհուրդ ստեղծեց, որը ղեկավարում է Վարչապետը և որի կազմում ներառված են քաղաքացիական հասարակության և խորհրդարանական որոշ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները: Կառավարությունը նաև Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նոր նախարարություն ստեղծեց:

Հաշվի առնելով, որ իշխող կուսակցությունը Ազգային Ժողովում նշանակալի մեծամասնություն ունի, իսկ ընդդիմությունը շարունակում է թույլ ու պառակտված մնալ՝ Կառավարությունն էական ընդդիմության չի բախվում բարեփոխումների իր ծրագիրը հաստատելիս: Այնուամենայնիվ, Կառավարությունը հասարակական

¹ Եվրոպական Խորհրդի Վենետիկի Հանձնաժողովը ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային փաստաթուղթը և եզրակացրել է, որ Սահմանադրական բարեփոխումների նպատակը և համընդհանուր մոտեցումները արժանի են ուժեղ աջակցության:

բողոքի մի քանի խոշոր ակցիաների է բախվել, որոնք, մասնավորապես, վերաբերում էին կենսաթոշակային բարեփոխումներին և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմանը, ինչը քաղաքականությունների շուրջ որոշակի քաղաքական սահմանափակումներ է պարտադրել:

Առաջիկա ընտրությունների ցիկլը կարող է առաջ քաշել հնարավորություններ և մարտահրավերներ կապված կառավարության կողմից բարեփոխումների և պարտավորությունների կատարման տեմպի հետ: Հայաստանում առաջիկա խորհրդարանական ընտրությունները կկայանան 2017թ, իսկ նախագահական ընտրությունները 2018թ.: Խորհրդարանական ընտրությունները ձեռք են բերելու ավելի մեծ կարևորություն Հայաստանի՝ խորհրդարանական կառավարման համակարգին անցնելու համատեքստում: Նախագահական ընտրությունները կարևոր են, քանի որ գործող նախագահին չի թույլատրվի վերընտրվել՝ հաշվի առնելով Սահմանադրական երկժամկետ սահմանափակումը: Հայաստանը երկու անգամ փոխանցել է նախագահական լիազորությունները ընտրությունների միջոցով: Եվ մինչդեռ 2008 թ. ընտրությունները նշանավորվեցին բողոքի ակցիաներով և բռնի բախումներով, 2012թ. խորհրդարանական ընտրությունները և 2013թ. նախագահական ընտրությունները խաղաղ էին:

Հայաստանի առջև մի շարք այլ մարտահրավերներ են ծառայում, որոնք կարող են վտանգել քաղաքական կայունությունը: Առաջինը վերաբերում է գնալով աճող աշխարհագրա-քաղաքական լարվածությանը ԵՄ-ի և Ռուսաստանի միջև: Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) միանալու Հայաստանի որոշման հիմքում ընկած էին Ռուսաստանի հետ երկրի սերտ տնտեսական ու անվտանգության հարաբերությունները: Միևնույն ժամանակ, Հայաստանի իշխանությունները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ոլորտներում ԵՄ-ի հետ համագործակցությունը խորացնելու շուրջ, այնպես, որ այդ համագործակցությունը համատեղելի լինի ԵՏՄ-ի ներքո Հայաստանի ստանձնած հանձնառությունների հետ: 2015 թ հոկտեմբերին Հայաստանն ու ԵՄ-ն մեկնարկեցին բանակցությունները նոր պայմանագրի ուղղությամբ, որը նպատակ ունի խորացնել և ամրապնդել Հայաստանի մասնակցությունը Եվրոպական միության Արևելյան գործընկերության ծրագրին:

Տնտեսական զարգացումը սահմանափակվում է աշխարհաքաղաքական և անվտանգության մարտահրավերներով, այդ թվում՝ երկու հարևանների՝ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակմամբ: Տարածաշրջանի անկայուն աշխարհաքաղաքական համատեքստը և Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական չլուծված հակամարտությունը ազդում են կայունության վրա: Հայաստանն ու Ադրբեջանը շարունակում են աշխատել ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդների հետ՝ փորձելով կայուն քաղաքական լուծում գտնել խնդրին:

2.2 Մակրոտնտեսական համատեքստ

Հետճգնաժամային վերականգնման տեմպերը դանդաղել են: 2008-09 թթ.-երի համաշխարհային ճգնաժամից հետո Հայաստանը ներդրումների ներգրավման տեմպերի անկում զգաց, երբ ՀՆԱ-ում ներդրումների մասնաբաժինը 2008 թ.-ի մոտ 40 տոկոս ցուցանիշից աստիճանաբար նվազեց՝ 2014 թ.-ին հասնելով 20 տոկոսի: 2010-2014 թթ.-ի միջին տնտեսական աճը կազմել է մոտ 4 տոկոս: Շինարարության ոլորտը (այդ թվում՝ անշարժ գույքի ոլորտը), որը 2000-ական թվականներին աճի հիմնական շարժիչ գործոնն է եղել, շարունակել է կրճատվել:

2013-2015թթ. տնտեսությունը կայուն չափավոր դրական աճ է ունեցել՝ չնայած արտաքին տնտեսական մարտահրավերներին: 2012 թ.-ին աճելով 7.2 տոկոսով՝ 2013-2014 թթ.-ին տնտեսական աճը դանդաղեց մինչև մոտ 3.5 տոկոս և 2015 թ.-ի առաջին եռամսյակում նախորդ տարվա համեմատ շարունակեց դանդաղել մինչև 2.2 տոկոս: Ներդրումային գործունեության կրճատման հետ մեկտեղ, որի պատճառներից էին, ի թիվս այլոց, ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացման հետաձգումները, տնային տնտեսությունների սպառման ցածր մակարդակը, ինչը մասամբ պայմանավորված էր ՀՆԱ-ի մոտ 18 տոկոսը կազմող դրամական փոխանցումների նվազմամբ 2014թ. աճի մեկ այլ խոչընդոտ էր հանդիսանում: 2015թ. առաջին ութ ամիսների ընթացքում տրանսֆերտները նվազել են 28%-ով, այդ թվում նաև դրամական փոխանցումները Ռուսաստանից, որոնք նվազել են մոտավորապես 40 տոկոսով նույն ժամանակահատվածում: Տնտեսական ցածր ցուցանիշները նպաստում են գործազրկության (17.6 տոկոս) և աղքատության (32 տոկոս) մակարդակի բարձրացմանը, ինչը չափվում է աղքատության սահմանագծից ներքև ապրող բնակչության մասնաբաժնով:

Արտաքին անհամամասնությունները դանդաղել են: Պարտքով ֆինանսավորվող ընթացիկ հաշվեկշռի պակասուրդի կուտակումը հանգեցրել է ՀՆԱ-ի մոտ 70 տոկոսի չափով բացասական զուտ միջազգային ներդրումային դիրքի: 2014 թ.-ին ընթացիկ հաշվեկշռի պակասուրդը կազմել է մոտ 7.5 տոկոս, ինչը մասամբ պայմանավորված էր Ռուսաստանի ավելի թույլ տնտեսությամբ: Փոխարժեքի երկու տարվա հարաբերական կայունությունից հետո ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամը արժեզրկվեց մոտ 14 տոկոսով՝ անուղղակիորեն պայմանավորված նաև ի թիվս այլ բաների 2014թ.-ի վերջին ռուսական ռուբլու արժեզրկմամբ: Համընդգրկող էֆեկտի պատճառով տարեկան կտրվածքով գնաճի տեմպերն աճեցին՝ 2015 թ.-ի մարտ ամսվա դրությամբ կազմելով 5.48 տոկոս, սակայն նվազեցին 3.6 տոկոսի 2015 թ. օգոստոսին :

2014 թ.-ի հունվարից մինչև 2015 թ.-ի սեպտեմբերը Հայաստանի Կենտրոնական բանկի միջազգային պահուստները նվազեցին մոտ 23 տոկոսով՝ ներմուծումների 5 ամսից մինչև մոտ 3.9 ամիս: 2014 թ.-ի մարտին կառավարությունը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ համաձայնության եկավ 38 ամիս տևողությամբ և \$128 միլիոն ընդհանուր արժողությամբ Ընդլայնված ֆինանսավորման գործիքի (ԸՖԳ) ներդրման շուրջ, ինչը շուկայական անկայունության ժամանակաշրջանում բուֆեր կապահովի և կսատարի ներդրողների տրամադրություններին: Հայաստանի ֆիսկալ դիրքը համեմատաբար կայուն է եղել, իսկ պետական պակասուրդը 2014 թ.-ին կազմել է ՀՆԱ-ի մոտ 1.9 տոկոսը: Պետական և պետության կողմից երաշխավորված

պարտքի պաշարը կազմում էր ՀՆԱ-ի մոտ 44 տոկոսը 2014թ-ին, իսկ այդ պաշարի մոտ 85 տոկոսն արտահայտված էր արտարժույթով, ինչը պարտքի կայունությունը խոցելի է դարձնում փոխարժեքի տատանումների նկատմամբ (թեև այդ խոցելիությունը մեղմվում է Հայաստանի պետական պարտքի պորտֆելի գերազանցապես երկարաժամկետ կառուցվածքով): 2013 թ.-ի սեպտեմբերին Կառավարությունը մտավ Եվրոպարտատմների շուկա՝ \$700 միլիոն գումարով և 7 տարվա մարման ժամկետով առաջին թողարկմամբ: 2015 թ.-ի մարտին հետևեց \$500 միլիոն գումարով և 10 տարվա մարման ժամկետով երկրորդ թողարկումը, որից ստացված հասույթի մի մասը (մոտ \$200 միլիոն) օգտագործվեց առաջին թողարկման մի մասնաբաժինը հետ գնելու համար:

Արժույթի թուլացումը կարող է վերհանել բանկային հատվածի խոցելի կողմերը: Հայաստանի բանկային հատվածը մեծապես դոլարիզացված է. 2015 թ.-ի սեպտեմբերին արտարժույթով վարկերի և ավանդների մասնաբաժինը համապատասխանաբար կազմել է 66 և 70 տոկոս: Նախքան արժեզրկումը բանկերը հիմնականում կայուն էին և համեմատաբար լավ դիմակայեցին դրամի արժեզրկմանը: Արժույթի վրա հետագա վայրընթաց ճնշումները կարող են կապիտալի դեֆիցիտ առաջացնել, մեծացնել դասակարգված վարկերի քանակը, բարձրացնել դոլարիզացիան և, հնարավոր է, ավանդների արտահոսքի պատճառ դառնալ: 2014 թ.-ի դեկտեմբերից 2015 թ.-ի օգոստոս ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԲ-ն խստացրեց իր դրամավարկային քաղաքականությունը՝ բարձրացնելով տոկոսադրույքներն ու ավելացնելով բանկերի արտարժույթով արտահայտված պարտավորությունների պահուստային պահանջները: 2015 թվականի հունվարին Կենտրոնական բանկը նվազագույն կապիտալի պահանջները բանկերի համար 5 մլրդ-ից ավելացրել է մինչև 30 մլրդ դրամի (մոտ 10 մլն ԱՄՆ դոլարից մինչև 60 մլն ԱՄՆ դոլար) մինչև 2017թ. բուժերների և արդյունավետության բարձրացման նպատակներով: Քննարկումներ են ընթանում նոր ֆինանսավորման և դրամական միջոցների ներգրավման ուղղությամբ:

Կարճաժամկետ հեռանկարը կախված է ներքին և արտաքին գործոնների համադրությունից: Հայաստանը առևտրի, դրամական փոխանցումների, ներդրումների հոսքերի և ներդրողների վստահության կապերի առումով մեծապես ենթարկվում է տարածաշրջանային տնտեսական անկմանը: 2015 թ.-ի նոյեմբեր ամսին ՎՋԵԲ-ը կանխատեսեց 2.3 տոկոսի չափով աճ: Նավթի ավելի ցածր գինը կարող է մասամբ փոխհատուցել այդ բացասական արտաքին զարգացումները, քանի որ Հայաստանը ածխաջրածինների զուտ ներմուծող է: Գյուղատնտեսության, հանքարդյունաբերության և հյուրանոցային ոլորտները, որոնք աճի խթանող էին հանդիսանում 2015թ. առաջին կիսամյակում, կպահպանեն աճի տենդենցը 2015 և 2016 թվականներին: Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ավելի սերտ ինտեգրումը կարող է ինչպես օգուտներ, այնպես էլ անորոշություններ բերել, որոնք կախված են Ռուսաստանի տնտեսական զարգացումներից:

Հեռանկարի հետ կապված ռիսկերը բխում են հետևյալից. (1) պետական, ֆինանսական և իրական հատվածներում հաշվեկշիռների բարձր դոլարիզացիան, (2) նեղ տնտեսական և արտահանման բազան տնտեսությունը խոցելի է դարձնում արտաքին ցնցումներից՝ համեմատաբար բարձր և աշխարհագրական առումով

միգրանտների՝ երկիր արտարժույթի ներհոսքի աղբյուր հանդիսացող դրամական փոխանցումներից կենտրոնացված կախվածության պայմաններում,- (3) տարածաշրջանային աշխարհաքաղաքական լարվածությունը; և (4) ընթացիկ հաշվի մեծ պակասուրդը և պետական ու պետականորեն երաշխավորված պարտքի համեմատաբար մեծ պաշարները:

Միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներն անորոշ են: Համաշխարհային բանկի գնահատմամբ Հայաստանին ՀՆԱ-ի մոտ 30 տոկոսի չափով ներդրումներ են անհրաժեշտ՝ տարեկան՝ 6-7 տոկոս աճ պահպանելու համար:² Հայաստանի երկարաժամկետ զարգացման համար չափազանց կարևոր են համաշխարհային տնտեսության մեջ ավելի խորը ինտեգրումը և հրապարակայնությունը, տարբերակումն ու ներգնա ներդրումները խթանելու հետագա ջանքերը՝ պայմանավորված երկրի փոքր ներքին շուկայով, սակավ ռեսուրսներով, ցամաքով շրջափակված լինելու կարգավիճակով ու աշխարհագրա-քաղաքական խոչընդոտներով: Հայաստանը պետք է այնպիսի քաղաքականություններ որդեգրի, որոնք կբարելավեն ներդրումային միջավայրն ու պետական հատվածի կառավարումը և կկրճատեն մենաշնորհային իշխանությունը: Երկիրը պետք է նաև բարելավի միջսահմանային ու երկրի ներսում փոխկապվածությունը և այլ տիպի ենթակառուցվածքներ մշակի՝ հաշվի առնելով պարտքի մատչելիության գնալով աճող խոչընդոտները և իր համեմատաբար սահմանափակ ֆիսկալ տիրույթը:

2.3 Կառուցվածքային բարեփոխումների համատեքստ

Վերջին տարիների ընթացքում Հայաստանը առաջընթաց է գրանցել կառուցվածքային բարեփոխումների առումով: Հայաստանի միջին անցումային ցուցանիշը համեմատական է հարավ-արևելյան Եվրոպայի ԵՄ անդամակցությանը հավակնող երկրների ցուցանիշին՝ արտացոլելով տարիների ընթացքում սեփականաշնորհման և գների ազատականացման ոլորտներում գրանցած առաջընթացը: Համաշխարհային բանկի 2016 թ.-ի «Doing Business» ինդեքսում Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցնում է 35-րդ տեղը: Կառավարությունը մեծացրել է պետական ծառայությունների թափանցիկությունը՝ էլեկտրոնային հիմքով համակարգեր ներդնելով, որոնց թվում են էլ-կառավարումը և էլ-ստորագրությունը, ինչպես նաև զգալի առաջընթաց է արձանագրել էլ-գնումների մասով: Կառավարությունը նախաձեռնել է նոր հարկային օրենսգրքի մշակումը՝ աճին նպաստելու նպատակով հարկային արտոնությունները, բարձր հարկային ծախսերը նվազեցնելու և հարկային համակարգը վերափոխելու համար: 2015 թվականի հոկտեմբերին հարկային օրենսգրքի նախագիծը քննարկվել է կառավարության կողմից, ակնկալվում է այն ներկայացնել հանրային քննարկման և 2016 թ. ներկայացնել Ազգային Ժողով:

Նոր պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչը էապես վերանայվել է և մինչև 2017 թ.-ը մասնավոր հատվածի համար կամավոր բնույթ կկրի: 2013 թ.-ի

² ԱՄՆ Երկրի գծով զեկույց, No. 15/65, մարտ, 2015 թ.

վերջին հայտարարվեց «Բաց երկինք» քաղաքականության մասին, ինչը փորձ էր ազատականացնել քաղաքացիական ավիացիայի շուկան: Այս քաղաքականության արդյունքում օդային փոխադրումների սակագները նվազեցին, իսկ 2014 թ.-ի առաջին կեսի դրությամբ ուղևորների երթևեկությունն աճեց 30 տոկոսով:

Որոշ 15 երկկողմ ավիացիոն համաձայնագրեր, այդ թվում, միասնական ավիացիոն տիրույթի համաձայնագիրը ներկայումս բանակցվում են ԵՄ –ի հետ, ինչի շնորհիվ կարող են ներգրավվել ցածր ծախսատարությամբ եվրոպական փոխադրողների, ինչը իր հերթին կխթանի զբոսաշրջության ոլորտը և եկամուտները:

Ինչպես նշվեց, 2013 թ.-ի դեկտեմբերին և 2014 թ.-ի հունվարին համապատասխանաբար ՄՖԿ-ն և ՎՁԵԲ-ը թողարկեցին դրամով արտահայտված առաջին պարտատոմսերը, որոնց նպատակն էր զարգացնել տեղի կապիտալ շուկան: 2015 թ.-ին ՎՁԵԲ-ը դրամով արտահայտված պարտատոմսերի լրացուցիչ տրանշեր կթողարկի:

ԱՄՆ-ի հետ կնքած ԸՖԳ շրջանակներում Հայաստանի քաղաքականությունները 2014 թ.-ի դրությամբ ճիշտ ուղու վրա են մնացել՝ 2015 թ.-ի մարտ ամսվա դրությամբ, ըստ ԱՄՆ Երկրի գծով զեկույցի, ապահովելով կատարողականի բոլոր ցուցանիշների և ինդիկատիվ թիրախների մեծ մասի կատարումը:³ Ըստ ԱՄՆ-ի, մրցակցության և կարգավորող հենքի բարեփոխումներն ավելի դանդաղ տեմպով են առաջադիմել՝ պատճառ հանդիսանալով կառուցվածքային բարեփոխումների սահմանված հենանիշներին հասնելու ձգձգումների, ինչը հիմնականում ավելի շուտ պայմանավորված էր 2014 թ.-ի կեսերին կառավարության փոփոխությամբ, և ոչ թե քաղաքականության ուղղության փոփոխմամբ: 2015 թ.-ի առաջին կեսի համար կառուցվածքային հենանիշները հիմնականում կենտրոնանում էին առանցքային ոլորտների վրա՝ ներառելով հարկային վարչարարությունը, պետական ֆինանսների կառավարումը, ֆինանսական հատվածի զարգացումը և Կենտրոնական բանկի գործառնությունները: 2015 թ.-ին ԸՖԳ շրջանակներում կատարողականի առջև մարտահրավերներ են ծառայել, քանի որ Ռուսաստանից դրամական միջոցների ներհոսքը նվազում է⁴: Այս մարտահրավերների շարքին են դասվում տարածաշրջանային ավելի թույլ արժույթների ազդեցությամբ պայմանավորված արժույթի արժեզրկումը; տրանսֆերտների և արտահանումների ավելի փոքր ծավալը; ընթացիկ հաշվի մեծ պակասուրդը; և դոլարիզացիան: ԱՄՆ-ն շեշտում է, որ Հայաստանը ի վիճակի է դիմակայել այս մարտահրավերներին և խթանել միջնաժամկետ աճը, ինչպես նաև նշանակալի գերակայություն է համարում հարկաբյուջետային և կառուցվածքային բարեփոխումների ակտիվացումը:⁵

³ ԱՄՆ Երկրի գծով զեկույց, No. 15/65, մարտ, 2015 թ.

⁴ ԱՄՆ-ի Հայաստանի մասով ծրագրային ծանուցում, ապրիլի 6, 2015 թ.

⁵ ԱՄՆ-ի Հայաստանի մասով ծրագրային ծանուցում, ապրիլի 6, 2015 թ.

2015 թ.-ի հունվարից Հայաստանը միացավ Եվրասիական տնտեսական միությանը: 2014 թ.-ի հոկտեմբերին Հայաստանի նախագահը Մինսկում ԱՊՀ երկրների գագաթնաժողովի ժամանակ Ռուսաստանի, Ղազախստանի և Բելոռուսի նախագահների հետ ստորագրեց ԵՏՄ-ին անդամակցելու պայմանագիրը, որն ուժի մեջ մտավ 2015 թ.-ի հունվարին: Հայաստանին թույլատրվել է ներմուծվող մոտ 800 անուն ապրանքները ժամանակավորապես ազատել ԵՏՄ-ով սահմանված ավելի բարձր մաքսային տուրքերից; այս ապրանքները կազմում են Հայաստանի ներմուծումների առյուծի մասնաբաժինը: Վերջին հաշվով, մինչ 2022 թ.-ին սպասվող ԵՏՄ սակագներին անցումը, Հայաստանի անդամակցությունը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի ԵՏՄ-ի կողմից հետապնդվող ավելի պաշտպանողական առևտրային քաղաքականությունների ներդրմանը: Կարճաժամկետ և միջնաժամկետ կտրվածքներում Հայաստանն, ամենայն հավանականությամբ, կօգտվի ներմուծվող էներգիայի ավելի ցածր գներից, մաքսային ավելի մեծ եկամուտներից (Հայաստանը կստանա ԵՏՄ ներմուծված ապրանքներից ստացված մաքսային տուրքերի գումարի մոտ 1 տոկոսը) և հավանաբար Ռուսաստանից ներդրումների աճից: Տնտեսության և առևտրի կառուցվածքի, ԱՀԿ-ի շրջանակներում ստանձնած հանձնառությունների, օտարերկրյա ներդրումների և բարեփոխումների թափի վրա երկարաժամկետ ազդեցությունները դեռևս հստակ չեն:

Կառուցվածքային բարեփոխումները առաջընթաց են ապրել, չնայած որ առկա են մարտահրավերներ: Բիզնեսի և քաղաքական շահերի միջև կապերն ամուր են և կարող են ազդել հակակոռուպցիոն ջանքերի վրա: Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը և ԵՄ-ի հետ ավելի պակաս ինտենսիվ ինստիտուցիոնալ հարաբերությունները Հայաստանից բարձր հաստատակամություն կպահանջեն բարեփոխումները ներդնելու և գործարար միջավայրը բարելավելու համար: Հայաստանը և ԵՄ-ն համաձայնել են գտնել նոր իրավական հենք համագործակցության ընդլայնման համար:

2.4 Ֆինանսավորման հասանելիություն

Ֆինանսավորման հասանելիությունը շարունակում է սահմանափակ մնալ. բանկային հատվածում բացակայում են ֆինանսավորման մի շարք կարևոր գործիքները (օրինակ՝ միջբանկային գործող շուկան, կապիտալ շուկաների ավելի լավ զարգացած ենթակառուցվածքները), ինչը արդյունավետորեն չի լրացվում ոչ-բանկային հատվածի կողմից, և ո՛չ էլ աջակցվում ինստիտուցիոնալ ներդրողների կողմից: Ֆինանսավորումը մեծապես դոլարիզացված է, ինչը, փաստորեն, արտարժույթի փոխարժեքի հետ կապված ռիսկերը փոխանցում է վարկառուներին: Միևնույն ժամանակ, մի շարք ՄՖՀ-ներ ու երկկողմ հաստատություններ ակտիվ գործունեություն են ծավալում երկրում և կարևոր դերակատարություն ունեն ֆինանսավորման տրամադրման գործընթացում, որոնցից շատերն արտոնյալ ֆինանսավորման բարձր համամասնությամբ:

Կապիտալի մասնավոր աղբյուրները

Ձեռնարկությունների և տնային տնտեսությունների ֆինանսավորման առաջնային աղբյուրը բանկային հատվածն է: Որոշ լրացուցիչ ռեսուրսներ ուղղորդվում են նաև ոչ-բանկային ուղիներով, ինչպիսիք են՝ միկրո-ֆինանսավորումը և լիզինգը:

Հայաստանի ֆինանսական հատվածում մեծապես գերիշխում են բանկերը, որոնց բաժին է ընկնում ֆինանսական հատվածի ակտիվների մոտ 90 տոկոսը: Բանկային հատվածն ինքնին հարաբերականորեն մասնատված է, իսկ հատվածում գերիշխում են օտարերկրյա սեփականություն հանդիսացող բանկերը, որոնց բաժին է ընկնում հատվածի ընդհանուր ակտիվների ավելի քան 50 տոկոսը: Բաղկացած լինելով 21 բանկից՝ ոլորտը կարող էր օգուտ քաղել համախմբումից:

Թեև վերջին տարիների ընթացքում աճել է ֆինանսական միջնորդությունը՝ զուգորդվելով 2014 թ.-ի վերջին ՀՆԱ-ում մասնավոր հատվածի ներքին վարկավորման մասնաբաժնի մինչև 52 տոկոս աճով՝ 2010 թ.-ի 28 տոկոսի համեմատ, այդ ցուցանիշը դեռևս մի փոքր ավելի ցածր է, քան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջին ցուցանիշը: Վարկավորման ընդլայնումն աջակցվել է բանկային հատվածի աճով, որը բավականին լավ ցուցանիշ է արձանագրել ֆինանսական ճգնաժամից հետո՝ մասամբ կառավարության կողմից տեղական բանկերի հակաճգնաժամային ֆինանսավորման շնորհիվ: 2012 թ.-ին հատվածի ակտիվները աճել են 18 տոկոսով, իսկ 2013 թ.-ին՝ 22.9 տոկոսով, թեև 2014 թ.-ին Ռուսաստանի և Ուկրաինայի տնտեսական մարտահրավերների հետ կապված ավելի դժվար արտաքին միջավայրի պատճառով կտրուկ անկում են ապրել:

Ֆինանսավորման ոչ-բանկային աղբյուրները, ինչպիսիք են՝ միկրո-ֆինանսավորումը, լիզինգը և մասնավոր բաժնային կապիտալում մասնակցությունը սահմանափակ են և թերզարգացած՝ ներկայացնելով ֆինանսական հատվածի ակտիվների միայն մոտ 9 տոկոսը: Այդուհանդերձ, միկրոֆինանսավորման հատվածն ակտիվ է. ՖԻՆԲԱ-ն և այլ ՄՖԿ-ներ ցանցեր ունեն նաև գյուղական բնակավայրերում: Լիզինգի ներթափանցման մակարդակը ցածր է՝ կազմելով ՀՆԱ-ի 0.8 տոկոսը: Թեև սեփականության հիմքով տուն ունենալու ցուցանիշները բարձր են, հիփոթեքային վարկերի ներթափանցելիության մակարդակը շարունակում է ցածր մնալ՝ կազմելով ՀՆԱ-ի 3.24 տոկոսը: Չնայած տեղի հեռանկարային ու գրավիչ ձեռներեցների առաջարկած հնարավորություններին, ինչպես նաև ավանդական բանկային վարկավորման սահմանափակումներին, տեղի մասնավոր բաժնային կապիտալի շուկան դեռ պետք է զարգանա: Մինչ օրս Հայաստանը դեռևս էական հետաքրքրություն չի առաջացրել միջազգային մասնավոր բաժնային կապիտալի հիմնադրամների շրջանում:

Կապիտալ շուկաները կարող են սկզբունքորեն լրացնել այս ռեսուրսները, իսկ իշխանություններն աշխատում են Հայաստանում դրանք զարգացնելու ուղղությամբ: Ներկայումս Հայաստանի կապիտալ շուկաները սաղմնային փուլում են գտնվում, չնայած տեղական ֆոնդային բորսայում NASDAQ-OMX-ի

ներդրումների շնորհիվ համեմատաբար առաջադեմ ենթակառուցվածքների զարգացմանը: Բանկերի միջև դրամային շուկայի առևտրի միջնորդության ռիսկեր չկան, իսկ հեջավորման գործիքները հազվադեպ են հանդիպում: Հետգնման համաձայնագրերի իրավական հենքի բացակայությունը բանկերին խանգարում է ապահովված միջբանկային վարկերի գործարքներ իրականացնել: Տեղական արժույթով արտահայտված պարտատոմսերի թողարկման հետ կապված բարձր ծախսերը բանկերին ստիպել են իրենց հաշվեկշիռները կառավարել երկարաժամկետ պարտավորությունների, ասենք՝ ժամկետային ավանդների միջոցով, որոնց առաջարկը, սակայն, սահմանափակ է իսկ ավանդատուները կարող են հետ կանչել այդ ավանդները՝ կորցնելով միայն կուտակված տոկոսագումարը: Դոլարիզացիայի մակարդակը շարունակում է բարձր մնալ, ինչն ավելի է երկատում իրացվելիությունը և բարդացնում է հաշվեկշիռի կառավարումը: «Արժեթղթավորման» մասին օրենքը, որը ներառում է ապահովված պարտատոմսերը և հիպոթեքային վարկերի արժեթղթավորումը, արդեն իսկ գործում է, սակայն դեռ չի փորձարկվել:

Կորպորատիվ պարտատոմսերի շուկան փոքր է՝ ընդամենը մի քանի չհատուցված թողարկումներով, թեև շուկան զարգացնելու հանդեպ հետաքրքրությունը գնալով աճում է: Կորպորատիվ հատվածի ընկերությունների շրջանում թափանցիկության պակասը սահմանափակել է ինչպես պարտատոմսերը, այնպես էլ բաժնային կապիտալը որպես ֆինանսավորման տարբերակ դիտարկելու նկատմամբ հետաքրքրությունը: Ներկայումս Հայաստանում ցուցակված բաժնային կապիտալով միայն յոթ ընկերություն է գործում:

Ինստիտուցիոնալ ներդրողների բազան գրեթե բացակայում է, սակայն ակնկալվում է, որ կենսաթոշակային վերջին բարեփոխումների արդյունքում այն կսկսի աճել: Քլիրինգի ընթացակարգերը բարելավելուն ուղղված քայլերը և միջազգային քլիրինգային ենթակառուցվածքների հետ կապերը կարող են հեշտացնել օտարերկրյա ներդրողների մասնակցությունը Հայաստանի շուկայում: Այնուամենայնիվ, դա կարող է թողարկումների լրացուցիչ կրիտիկական զանգված պահանջել (պարտք և/կամ բաժնային կապիտալ)՝ խրախուսելով միջազգային ներդրողներին ժամանակ ու ջանքեր տրամադրել տեղական շուկան հասկանալու և քլիրինգի ու պահառության համաձայնություններ ձեռք բերելու համար:

Ինչպես արդեն նշվեց վերևում, 2011թ.-ին ՎՋԵԲ-ի, Կառավարության և Հայաստանի ԿԲ-ի միջև Տեղական արժույթի և կապիտալի շուկաների շուրջ կնքված փոխըմբռնման հուշագրի ներքո 2012 թ.-ին ԱՄՆ-ի հետ համակարգմամբ մեկնարկել է գնաճի թիրախավորմանն ուղղված տեխնիկական աջակցության ծրագիրը: Այս ծրագրի միջոցով Հայաստանի ԿԲ-ն էական քայլեր է ձեռնարկել արտարժույթի փոխարժեքի ավելի մեծ ճկունություն ապահովելու, դրամավարկային քաղաքականության իր գործիքակազմն ընդլայնելու և կայուն նվազող գնաճի վրա կենտրոնանալու ուղղությամբ: 2014 թ.-ին Հայաստանը մասամբ ներդրեց կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչը, ինչը կապահովի տեղական արժույթով արտահայտված

ակտիվների հաստատուն պահանջարկը: Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, Եվրոպարտատումների երկու հաջողված թողարկումները միջազգային շուկայում ձևավորեցին Հայաստանի վարկային ռեյտինգը՝ օգնելով մեծացնել միջազգային ներդրողների «ախորժակը» և հետագայում Հայաստանի մասնավոր հատվածի սուբյեկտների կողմից թողարկումների հնարավորությունը: Այդուհանդերձ, դեռ շատ մարտահրավերներ կան, որոնց թվում են՝ դոլարիզացիայի բարձր մակարդակը և կորպորատիվ պարտատոմսերի թերզարգացած շուկան: Բանկը նախատեսում է 2015 թ.-ին վերանայել փոխըմբռնման հուշագիրը, որպեսզի Ֆինանսների նախարարության և Հայաստանի ԿԲ-ի հետ ձեռք բերված համատեղ համաձայնության շրջանակներում թարմացնի նպատակները՝ հաշվի առնելով մինչ օրս արձանագրված առաջընթացը և կենտրոնանալով ներկայիս գերակայությունների վրա:

Բազմակողմ և երկկողմ զարգացման բանկերի ֆինանսավորումը

Հայաստանում գործում են ներդրումների տարբեր մակարդակներ ու տարբեր գերակայություններ ունեցող մի շարք բազմակողմ զարգացման բանկեր (ԲԶԲ) և երկկողմ ֆինանսական հաստատություններ:

Ինչպես արդեն նշվեց, 2014 թ.-ի մարտին ԱՄՆ-ի Գործադիր խորհուրդը հաստատեց \$128 միլիոն գումարով ԸՖԳ եռամյա ֆինանսավորումը: 2014 թ.-ի դեկտեմբերի 22-ին Գործադիր խորհուրդն ավարտեց առաջին դիտարկումը, որի արդյունքում Հայաստանին տրամադրվեց մոտ \$17 միլիոն՝ այդպիսով պայմանագրի ներքո ընդհանուր վճարումները հասցնելով մոտ \$34 միլիոնի:

Մինչ օրս Համաշխարհային բանկն ընդհանուր առմամբ Հայաստանում 55 ծրագիր է իրականացրել՝ \$1.62 միլիարդ ընդհանուր գումարով: Համաշխարհային բանկի պորտֆելը ներկայումս կենտրոնանում է էներգետիկայի ոլորտի, ֆինանսական ու մասնավոր հատվածների զարգացման և քաղաքաշինության վրա: 2014 թ.-ի վերջին Համաշխարհային Բանկը հաստատեց Հայաստանում \$75 միլիոն գումարով Երկրորդ Զարգացման Քաղաքականության Գործառնությունը (ԶՔԳ - DPO), որի նպատակն է ամրապնդել գործարար միջավայրը, բարելավել վարկերի հասանելիությունը, բարելավել քաղաքացիական ծառայության արդյունավետությունը և թափանցիկությունը, ընդլայնել սոցիալական ապահովությունը, բարելավել հարկաբյուջետային տիրույթը և պետական ենթակառուցվածքների ու բնապահպանական ռեսուրսների կառավարումը: Հաջորդ ԶՔԳ-ի ժամկետը դեռևս հստակեցված չէ, մասնավորապես՝ նոր հարկային օրենսդրության հաստատումը հետաձգելու պատճառով: Համաշխարհային Բանկը սատարում է նաև Կառավարության ռազմավարությանը, որը միտված է արտահանումների և կոմերցիոն արդյունաբերությունների տարբերակմանը, ներդրումային քաղաքականության մշակմանը, օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈւՆ) իրավական հենքի բարելավմանը, ինչպես նաև «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների» ծրագրի և ՄՖԿ-ի «Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխումների» նոր ծրագրի միջոցով բիզնեսի

տեսչական ստուգումների բարեփոխումներն առաջխաղացելուն: 2014 թ.-ին Հայաստանն ավարտել է օգտվել Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի/Միջազգային զարգացման ընկերակցության (ՎՋՄԲ/ՄՁԸ - IBRD/IDA) ֆինանսավորումից՝ ամբողջությամբ անցնելով ՎՋՄԲ ֆինանսավորմանը:

Հայաստանում ՄՖԿ-ի գերակայությունների շարքում են աջակցությունը փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը, էներգաարդյունավետության խթանումը՝ տեղական ընկերությունների մրցունակությունը բարձրացնելու և կլիմայական փոփոխությունները մեղմելու նպատակով, Հայաստանի կապիտալ շուկաների ամրապնդումը և իրական հատվածի աջակցությունը: 2014 թ.-ի հունիս ամսվա վերջի դրությամբ ՄՖԿ-ն ամենատարբեր ոլորտներում 52 ծրագիր իրականացնելով՝ ավելի քան \$320 միլիոն գումար է ներդրել և \$23 միլիոն գումար է մոբիլիզացրել այլ փոխատուներից: ՄՖԿ-ի Խորհրդատվական Ծառայությունները խորհրդատվություն են տրամադրում տարբեր ծրագրերի միջոցով՝ շեշտադրելով կանոնակարգող դաշտի պարզեցումը, սննդի անվտանգության գործելակերպերը, կայուն էներգետիկայի ֆինանսավորումը, ֆինանսական հատվածը և կորպորատիվ կառավարումը:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ - USAID) ընթացիկ ծրագրերը նպատակ են հետապնդում բարելավել Հայաստանի գործարար միջավայրը և աջակցել փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացմանը («Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության» ծրագիր), ՏՏ ոլորտում նորարար սկսնակ ընկերություններ և արտադրանք ստեղծել («Նորարարությունը տեխնոլոգիայի միջոցով» գործընկերություն), Պետական եկամուտների կոմիտեին և Ֆինանսների նախարարությանն աջակցել բարելավել հարկային քաղաքականություններն ու հարկային վարչարարության ընթացակարգերը («Հարկային բարեփոխումների» ծրագիր), և մեծացնել հայկական ֆինանսական հաստատությունների արդյունավետությունը և գյուղական ու քաղաքային բնակավայրերում գործող ընկերություններին ֆինանսավորելու դրանց տեխնիկական կարողությունները, ինչպես նաև խթանել Հայաստանի կենսաթոշակային բարեփոխումները («Ֆինանսավորում տնտեսական զարգացման համար» ծրագիր):

ԵՄ-ի հետ տեխնիկական ու ֆինանսական համագործակցությունը համահունչ է Հայաստանի հայտարարությանը, ըստ որի երկիրը մտադրվում է ԵՏՄ-ի շրջանակներում իր ստանձնած հանձնառություններին չհակասող կերպով խորացնել իր տնտեսական ու քաղաքական հարաբերությունները Եվրոպական Միության հետ: Ընդհանուր առմամբ, նպատակն է Հայաստանի իշխանություններին ԵՄ չափանիշներին ու լավագույն փորձին համահունչ աջակցություն տրամադրել: 1999 թ.-ից ի վեր ԵՄ-ն Հայաստանին ավելի քան €500 միլիոն ընդհանուր գումարով աջակցություն է տրամադրել: Որպես Եվրոպական Հարևանության Քաղաքականության մի մաս՝ Հայաստանն օգտվում է Եվրոպական Հարևանության և Գործընկերության Գործիքից (ԵՀԳԳ - ENPI): Ակնկալվում է, որ 2014-2020 թթ.-երի ընթացքում ԵՄ երկկողմ աջակցությունը կկազմի մոտ €250-350

միլիոն, որից €140-170 միլիոնը նախատեսվում է 2014-2017 թթ.-երի համար: Ասոցացման Համաձայնագիրը / Խորը և Համապարփակ Առևտրի Գոտու (DCFTA) համաձայնագիրը չստորագրելու մասին Հայաստանի որոշումից ի վեր ԵՄ ռեսուրսներն ուղղվում են դեպի երեք գերակա ոլորտներ՝ դատական համակարգի բարեփոխումը, պետական կառավարման բարեփոխումը և մասնավոր հատվածի զարգացումը:

Հայաստանի տնտեսությունը խթանելու նպատակով KfW Զարգացման Բանկը, օգտագործելով Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության կողմից տրամադրված ֆոնդերը, 1999 թ.-ին ստեղծել է Հայ-գերմանական հիմնադրամը, որը կառավարում է Հայաստանի ԿԲ-ն: Հայ-գերմանական հիմնադրամը Հայաստանի ֆինանսական հաստատություններին տեղական արժույթով ֆինանսավորում է տրամադրում՝ ներդրումային վարկեր տրամադրելու նպատակով: Հիմնադրամի թիրախային խմբերն են ՓՄՁ-ները և ագրոբիզնեսները և այն օժանդակում է վերականգնվող էներգետիկայում կատարվող ներդրումներին (փոքր հիդրոէլեկտրակայաններ): 2014 թ.-ին ջրամատակարարման ծրագրի համար KfW-ն Հայաստանին €50 միլիոն վարկ և €2 միլիոն դրամաշնորհ է տրամադրել: 2015 թ.-ին KfW-ն նախատեսում է նոր ծրագիր մեկնարկել, որը կֆինանսավորի ՓՄՁ-ների կողմից կատարվող էներգաարդյունավետ ներդրումները: 2015 թ.-ի մարտին KfW-ն €85.2 միլիոն ընդհանուր գումարով սուվերեն վարկ է տրամադրել, որի շրջանակներում կֆինանսավորվեն էլեկտրահաղորդման նոր գծի և հաստատուն հոսանքի բարձրավոլտ կայանի կառուցումը՝ նպատակ հետապնդելով զարգացնել Հայաստանի ու Վրաստանի միջև կապը և դրանով իսկ խորացնելով տարածաշրջանային ինտեգրումն ու երկու երկրների համար ապահովելով էլեկտրաէներգիայի եվրոպական շուկաների ավելի մեծ հասանելիությունը: Ծրագրին նաև սատարում են Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ - EIB)՝ €10 միլիոն վարկով, ԵՄ ՆՀԳ-ն (EU-NIF)՝ €10 միլիոն դրամաշնորհով և Հայաստանը՝ €1.5 միլիոն իր սեփական ռեսուրսներով:

Ասիական Զարգացման Բանկը (ԱԶԲ - ADB) Կառավարության հետ աշխատում է 2005 թ.-ից ի վեր: 2014 թ.-ի հոկտեմբեր ամսվա դրությամբ ԱԶԲ-ի սուվերեն վարկավորման ընդհանուր գումարը կազմել է մոտ \$840 միլիոն՝ նպատակ հետապնդելով օգնել Հայաստանին ինտեգրել իր տնտեսությունը տարածաշրջանում և հավասարակշռել այն դեպի ավելի ճկուն, ներառողական և էկոլոգիապես կայուն աճը: ԱԶԲ-ի բիզնես պլանը նաև հաշվի է առնում, որ 2017 թ.-ին ավարտվելու է Ասիական Զարգացման Հիմնադրամի ներքո Հայաստանի կոնցեսիոն ֆինանսավորումը: ԱԶԲ-ն կաջակցի երեք գերակա հատվածներին. տրանսպորտ, ջրային ու քաղաքային այլ ենթակառուցվածքներ և էներգետիկա: Բացի այդ, ԱԶԲ-ն կսատարի այն բարեփոխումները, որոնք հզորացնում են պետական հատվածի կարողությունները և արդյունավետորեն տեղաբաշխում են պետական ֆինանսները՝ պլանավորման, կառավարման և շահագործման ու տեխնիկական սպասարկման պատշաճ ֆինանսավորման միջոցով ապահովելով ենթակառուցվածքների կայունությունն ու հուսալիությունը: ԱԶԲ-ն կաջակցի նաև

այն բարեփոխումներին, որոնք քաղաքականության ընդլայնված համակարգման միջոցով բարենպաստ պայմաններ են ստեղծում գործարար կանանց համար:

Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ - EIB) սատարում է Արևելյան Գործընկերության երկրներում ԵՄ Հարևանության Քաղաքականության ներդրումը՝ ֆինանսավորելով այն ծրագրերը, որոնք էապես հետաքրքրում են ԵՄ-ին: 2014 թ.-ի դեկտեմբերին ԵՆԲ-ն €50 միլիոն ընդհանուր գումարով սուվերեն վարկ տրամադրեց, որը նպատակաուղղված է Հայաստանում ագրովերամշակման, գյուղական և զբոսաշրջության հատվածներում ՓՄՁ ծրագրերի ֆինանսավորմանը: 2014 թ.-ի վերջին ԵՆԲ-ն €30.7 միլիոն ընդհանուր գումարով ևս երկու սուվերեն վարկ տրամադրեց, որոնց նպատակն է բարելավել Հայաստանում ջրամատակարարման ծառայությունների որակն ու հուսալիությունը և արդիականացնել կոյուղաջրերի հեռացման համակարգը: ԵՆԲ-ն աջակցել է «Հայաստանի տրանսպորտի ոլորտի զարգացման ռազմավարություն 2020»-ի և Հյուսիս-Հարավ Ճանապարհային Միջանցքի Ներդրումային Ծրագրի իրականացմանը: Ծրագրերի մոտավոր ընդհանուր արժեքը կազմում է \$120 միլիոն:

2.5 Գործարար միջավայր և իրավական համատեքստ

Գործարար միջավայր

Չնայած նախկինում արձանագրած էական առաջընթացի, Հայաստանում գործարար միջավայրը դեռևս անհավասարաչափ է: Համաամաշխարհային բանկի 2016 թ.-ի «Գործարարությանը զբաղվելը» *Doing Business* վարկանիշային դասակարգման մեջ Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցրել է 35-րդ տեղը: Թեև Հայաստանը լավ ցուցանիշ է արձանագրել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ բիզնեսի բացումը (5-րդ տեղ), գույքի գրանցումը (14-րդ տեղ) և պայմանագրերի կիրարկումը (28-րդ տեղ), այն ետ է մնում շինարարական թույլտվությունների (62-րդ տեղ), սնանկության ճանաչման (71-րդ տեղ) և էլեկտրաէներգիայի ձեռքբերման (99-րդ տեղ) ցուցանիշների մասով: 2012-2013 թթ.-երի Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հարցման (ԳՄՁԳՀ - BEEPS) արդյունքների համաձայն հայկական ընկերությունների առջև ծառայած հիմնական խոչընդոտների թվում են ֆինանսավորման հասանելիությունը, հարկային վարչարարությունը և քաղաքական անկայունությունը: Երիտասարդ ընկերությունները մեծապես բողոքում էին մաքսային և առևտրային կանոնակարգերից: Թեև 2014-2015 թթ.-երի Համաշխարհային մրցունակության զեկույցի վարկանիշային դասակարգման մեջ Հայաստանը, ընդհանուր առմամբ, լավ դիրք է զբաղեցնում, սակայն զեկույցը նշում է կոռուպցիան որպես գործարարությանը զբաղվելու ամենամեծ խոչընդոտը, որին հաջորդում են ֆինանսավորման հասանելիությունը և հարկային կարգավորումները: Ներկայումս Հայաստանն իրականացնում է «Կարգավորիչ զիյոտին» ծրագրի երկրորդ փուլը, որի նպատակն է կրճատել բիզնեսների վարչական ծախսերն ու կանոնակարգային բեռը: 2013-2014 թթ.-երի Հայաստանի Ազգային մրցունակության զեկույցում⁶ աճի դիագնոստիկ գնահատման համաձայն մենաշնորհային իշխանության բարձր մակարդակը և մրցակցային անհավասարաչափ միջավայրը Հայաստանի տնտեսական զարգացումը զսպող ամենակարևոր խոչընդոտներից են:

Իրավական համատեքստ

Հայկական իշխանությունները շարունակում են զգալի ջանքեր գործադրել գործարար միջավայրը բարելավելու նպատակով առևտրային, հարկային և ֆինանսական օրենսդրություններն արդիականացնելու ուղղությամբ: Հեշտացվել է նոր բիզնես սկսելու գործընթացը: Այնուամենայնիվ, իրավական և կարգավորող դաշտերում դեռևս զգալի բացեր են առկա: Բացի այդ, ինչպես հաճախ պատահում է վաղ անցումային երկրներում, դատարանների և պաշտոնյաների կողմից օրենքն անհավասարաչափ է կիրառվում և դրա վրա ազդում է կոռուպցիան: Որոշ ոլորտներում կարողությունների և ֆինանսավորման պակասը, ինչպես նաև

⁶ Հայաստանի Ազգային մրցունակության զեկույց, 2013-2014 թթ.

թվայնացման բացակայությունը նույնպես խոչընդոտում են օրենսդրության և կարգավորումների արդյունավետ կիրառմանը: Մնում է տեսնել, թե ինչպես Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը կազդի ԵՄ նորմերի հետ կոնվերգենցիայի ուղու վրա, որն, ի դեպ, նախկինում բարեփոխումների շարժիչ ուժն է եղել:

Գրավով ապահովված գործարքները կարգավորող օրենսդրությունը հարաբերականորեն լավ է մշակված և թույլ է տալիս որպես գրավ տարբերակովներ ընդունել: 2014 թ.-ի դեկտեմբերին Ազգային Ժողովը ընդունեց գրավով ապահովված գործարքները կարգավորող օրենսդրության բարեփոխումների իրավական փաթեթը, որը Նախագահը ստորագրեց 2014 թ.-ի դեկտեմբերի 30-ին: Իրավական նոր հենքը նպատակ է հետապնդում շարժական գրավի միասնական էլեկտրոնային ռեգիստր ներդնել: Գրանցումը կհանդիսանա ապահովված իրավունքների կատարելագործման հիմնական ձևաչափը և կսահմանի գրավի առաջնահերթությունը: Նոր փաթեթը ուժի մեջ է մտել 2015 թ.-ի հոկտեմբերի 1-ին: Մինչդեռ ֆինանսական լիզինգի պայմանագրերը կարգավորվում են, թեև լրացուցիչ կատարելագործման կարիք ունենալով, ֆակտորինգի մասով հատուկ կարգավորումները բացակայում են:

2010 թ.-ին ՎՋԵԲ-ի աջակցությամբ մշակված Կորպորատիվ կառավարման օրենսգիրքը դեռևս օգտագործողների լայն շրջանակ չունի. դրա առաջարկների ներդրումը անհավասարաչափ է եղել:

2005 թ.-ին «Էլեկտրոնային հաղորդակցության» մասին օրենքի ընդունումից հետո որոշակի առաջընթաց է գրանցվել, օրինակ՝ բջջային հեռախոսահամարների տեղափոխելիության մասով: Այնուամենայնիվ, իրավական հենքում և կարգավորող մարմնի ռեսուրսներում ու կարողություններում դեռևս որոշակի բացեր կան: Ներդրումներ ներգրավելու համար անհրաժեշտ է ապահովել ԵՄ փորձարկված նորմերի հետ կոնվերգենցիան: Քաղաքային և գյուղական բնակավայրերի ցանցային կապի միջև դեռ զգալի անջրպետ կա:

Կապիտալ շուկաների օրենսդրությունը դեռևս թերզարգացած է: Թեև ՎՋԵԲ-ի և ՄՖԿ-ի կողմից դրամով արտահայտված պարտատոմսերի թողարկման հետ կապված որոշակի բարեփոխումներ կատարվեցին իրավական հենքում, դեռևս շատ անելիքներ կան կապիտալ շուկաների և ածանցյալ գործարքների համար առողջ իրավական ենթակառուցվածք ստեղծելու համար:

Էներգետիկայի ոլորտում Կառավարությունը գիտակցում է էներգաարդյունավետությունը խթանելու կարիքը: Գործող իրավական ու կարգավորող հենքի բարելավումը էներգաարդյունավետության հաջողված ծրագրի նախապայմանն է: Ներկայումս ՎՋԵԲ-ը քննարկում է հայկական իշխանություններին տեխնիկական աջակցություն տրամադրելու հնարավոր շրջանակները, որպեսզի իշխանությունները վերանայեն բնակարանային ենթահատվածում կիրառվող կանոնակարգերը:

Պետական և մասնավոր հատվածների գործընկերությունները (ՊՄԳ) և կոնցեսիաները մեկ իրավական ակտի շրջանակներում չեն կարգավորվում: Համապատասխան դրույթները ցրված են կոնկրետ հատվածներին առնչվող տարբեր օրենքներում ու կարգավորումներում: Հստակ իրավական ու կարգավորող հենքի բացակայությունը խոչընդոտում է ծրագրերի կառուցվածքը մշակելուն և դրանք ֆինանսավորելուն, թեև ՊՄԳ պայմանավորվածությունների ներդրման նշանակալի ձեռքբերումներ են գրանցվել, հատկապես՝ ջրային ընկերությունների, Զվարթնոցի միջազգային օդանավակայանի և Հայ Փոստի մասով:

2010 թ.-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի գործարկմամբ Հայաստանը պետական գնումների օրենսդրության լավ չափանիշներ է սահմանել: Օրենքը կարելի է թարմացնել՝ Կառավարական գնումների համաձայնագրի թարմացված չափանիշների համաձայն:

Իրավական դաշտի ավելի մանրամասն գնահատումը տե՛ս Հավելված 4-ում:

2.6 Սոցիալական համատեքստ

Հայաստանը 3 միլիոն բնակչությամբ, ցածրից միջին եկամուտ ունեցող երկիր է: Այն դեռևս մեծապես գյուղական տնտեսություն է և տառապում է գործազրկության բարձր մակարդակից և ներառման էական բացերից, մասնավորապես՝ երիտասարդ և կին աշխատողների դեպքում: Մարգային նշանակալից անհամաչափությունները պահպանվում են: Վերջին տարիների ընթացքում տնտեսական սթրեսի պատճառով աղքատության մակարդակը բարձրացել է: Ի պատասխան, Կառավարությունը ձգտում էր մեծացնել ծախսերը աշխատատեղեր ստեղծելու համար և բարեփոխել կենսաթոշակային համակարգը՝ ծերացող բնակչությանն աջակցելու համար խնայողությունները խթանելու նպատակով:

Ինչպես և տարածաշրջանի մյուս երկրներում, Հայաստանում նույնպես ծառայությունների և գյուղատնտեսության ոլորտներն ամենախոշոր գործատուներն են հանդիսանում, որոնց բաժին է ընկնում ընդհանուր զբաղվածության համապատասխանաբար 44 տոկոսը և 39 տոկոսը: Գործազրկության մակարդակը բարձր է՝ 16 տոկոս, իսկ գործազուրկների կեսը ավելի, քան մեկ տարի աշխատանք չունի: Աշխատուժի մասնակցությունը ցածր է, հատկապես՝ կանանց դեպքում (56 տոկոս՝ տղամարդկանց 73 տոկոսի համեմատ): Բացի այդ, առկա աշխատատեղերը հաճախ բնութագրվում են ցածր արդյունավետությամբ. աշխատատեղերի մեկ քառորդը վճարվում է միջին աշխատավարձի երկու երրորդից պակաս չափով, ինչի արդյունքում զգալի թիվ են կազմում աշխատող աղքատները: 2013 թ.-ին հայտարարագրված աղքատությունը կազմել է 32 տոկոս: Այդուհանդերձ, Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից ներկայացված վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ 2012 թ.-ից ի վեր աշխատանքի շուկայի բարելավումներ են գրանցվել, հատկապես՝

աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման և աշխատավարձերի սահմանման առավել ճկուն քաղաքականությունների մասով, ինչը պետք է, որ հեշտացնի աշխատանք փնտրողների մուտքը աշխատանքի շուկա:

Երիտասարդների շրջանում գործազրկության մակարդակը առանձնապես բարձր է (30.2 տոկոս 2013թ.-ին) և հակված է ամենաբարձրը լինել բարձրագույն կրթությամբ երիտասարդների ու կանանց շրջանում, հատկապես՝ քաղաքային կենտրոններում, որտեղ աշխատաշուկան դժվարանում է կլանել նոր շրջանավարտներին: Երիտասարդների 27.4 տոկոսից փոքր ինչ ավելին ներգրավված չեն ո՛չ կրթության, ո՛չ զբաղվածության և ո՛չ էլ վերապատրաստման գործընթացներում: Երիտասարդ կանանց շրջանում պասիվությունը և ուսումից դուրս մնալն առավել հավանական են, քանզի նրանք հակված են նվիրվել ընտանեկան պարտականություններին: Թեև հայ աշխատողներն, ընդհանուր առմամբ, լավ կրթված են (երեք աշխատողներից մեկը բարձրագույն կրթություն ունի, իսկ չորսից մեկը՝ առնվազն միջնակարգ տեխնիկական կրթություն), կրթական արդյունքների որակը ԵՄ միջին ցուցանիշից ցածր է: Բացի այդ, Հայաստանի կրթական համակարգի կառուցվածքն այնպիսին է, որ երիտասարդների մեծամասնությունը (մոտ 90 տոկոսը) ուսման ընթացքում աշխատանքային փորձ ձեռք չեն բերում: Սա ավելի է դժվարացնում և երկարացնում դեպի աշխատաշուկա անցումային գործընթացը և նպաստում է շրջանավարտների գործազրկության բարձր մակարդակին, որը ներկայումս կազմում է ավելի քան 21 տոկոս: Այնուամենայնիվ, տարածաշրջանի մյուս երկրների հետ համեմատ հայ ձեռներեցները կրթության ավելի բարձր մակարդակի են հասնում, շատերը հետդիպլոմային աստիճաններ ունեն և ներգրավվում են նորարարության գործունեությունների ավելի բարձր մակարդակներում:

Բավական չափով տվյալներ չկան կանանց ձեռներեցության հիմնական ոլորտների վերաբերյալ, սակայն կարծիք կա, որ կանանց բիզնեսները կենտրոնացված են ավելի ցածր շահութաբերությամբ գործունեությունների շուրջ, ինչպիսին, օրինակ, սպառողական առևտուրն է: Գենդերային տարբերություն կա ֆինանսավորման հասանելիության մեջ, իսկ ձեռնարկությունների բարձրաստիճան ղեկավարության կամ սեփականության կազմում ավելի շատ տղամարդիկ կան, քան կանայք, ինչպես այդ մասին վկայում են 2012-13 թթ.-երի ԳՄՁԳՀ արդյունքները: Բացի այդ, կանայք գենդերային անհավասարության են բախվում անհատական ֆինանսական ծրագրերի և բիզնես պրոդուկտների հասանելիության առումով (ինչպես, ասենք՝ դեբետային և վարկային քարտերի օգտագործումը, ինչպես նաև բիզնես նպատակներով օգտագործվող պաշտոնական հաշիվները): Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ - OECD) 2014 թ.-ի Սոցիալական հաստատությունների և գենդերային ինդեքսը (SIGI), որը, օգտագործելով օրենսդրության, վերաբերմունքի, մոտեցումների ու գործելակերպերի մասին տեղեկատվությունը, գնահատում և դասակարգում է երկրներն ըստ իրենց սոցիալական հաստատություններում գենդերային խտրականության մակարդակի, նշում է, որ

Հայաստանի սոցիալական ինստիտուտներում գենդերային խտրականության հարաբերականորեն բարձր մակարդակ է արձանագրվում:

2013 թ.-ին Հայաստանի բնակչության մեկ երրորդից մի փոքր ավելին (36.7 տոկոս) ապրում էր գյուղական բնակավայրերում: Մարզային անհամաչափություններն էական են, հատկապես՝ գյուղական բնակավայրերում (արդյունավետ) զբաղվածության հնարավորությունների առկայության, առողջապահական ու մունիցիպալ ծառայությունների հասանելիության և տեղական կրթության որակի մասով: Այս անհամաչափություններն ավելի խորացան 2009 թ.-ի ֆինանսական ճգնաժամի արդյունքում, ինչը հանգեցրեց 2011 թ.-ին ավելի բարձր՝ 35 տոկոս աղքատության մակարդակի՝ 2008 թ.-ի 27.6 տոկոսի համեմատ: Կառավարությունը փորձեց կրճատել գործազրկության նպաստները և փոխարենը ավելի շատ աշխատատեղեր ստեղծել, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերում հանրային աշխատանքների միջոցով, ինչը կօգնի լրացնել երկրի մարզային աշխատաշուկայի խոշոր բացերը: Բացի այդ, ավելացվում են սոցիալական ծրագրերի, կրթության և առողջապահության մասով կատարվող ծախսերը: Մասնավորապես, 2014 թ.-ին Կառավարությունը բազմաստիճան կենսաթոշակային համակարգ և պարտադիր կուտակային տարր ներդրեց, ինչի ադյունքում ակնկալվում է բարձրացնել անձնական խնայողությունների մակարդակը և աջակցել Հայաստանի ծերացող բնակչությանը:

2.7 Էներգախնայողության և կլիմայական փոփոխությունների համատեքստ

Հաշվի առնելով վերականգնվող էներգետիկայի զարգացման էական ներուժը, ներմուծումներից ուժեղ կախվածությունը, ինչպես նաև ատոմակայանի գործունեության դադարեցումից հետո առաջարկի և պահանջարկի միջև էական տարբերության առաջացման հեռանկարը՝ Հայաստանը պետք է ավելի մեծ ներդրումներ անի էներգաարդյունավետության միջոցառումներում և շարունակի ընդլայնել ու բարելավել ներդրումային հենքը:

Հայաստանի էներգետիկ ինտենսիվությունը 40 տոկոսով բարձր է ԵՄ ցուցանիշից:⁷ Երկիրը նավթի կամ բնական գազի պաշարներ չունի և իր հանածո վառելիքի պաշարների մեծամասնությունը ներմուծում է Ռուսաստանից և Պարսկաստանից: Երկրի առաջնային էներգետիկ կարիքների գրեթե 70 տոկոսը բաժին է ընկնում էներգիայի զուտ ներմուծումներին, իսկ տրանսպորտի և ջերմամատակարարման վառելիքների պահանջարկն ամբողջությամբ բավարարվում է ներմուծման հաշվին:

Ընդհանուր առմամբ, վերջին տարիների ընթացքում էներգիայի պահանջարկը Հայաստանում հաստատուն կերպով ավելացել է՝ 2011 թ.-ին աճելով 10 տոկոսով,

⁷ տոննա էներգիա 1 միավոր ՀՆԱ-ի հաշվով՝ ԱՄՆ դոլարով, 2005 PPP (Աղբյուր՝ ԷՄԳ, 2011 թ.-ի տվյալներ)

իսկ 2012 թ.-ին՝ ևս 9 տոկոսով: Ներկայումս ներքին շուկայում արտադրվող առաջնային էներգիան էլեկտրաէներգիան է, որն արտադրվում է ատոմակայանի (մոտ 30 տոկոս), երկու ջերմաէլեկտրակայանների (մոտ 42 տոկոս) և բազմաթիվ մեծ (23 տոկոս) ու փոքր (6 տոկոս) հիդրոէլեկտրակայանների միջոցով⁸: Հաշվի առնելով պահանջարկի աճը, ինչպես նաև արտադրող հին կայանների գործունեությունը դադարեցնելու անհրաժեշտությունը՝ Հայաստանում, հնարավոր է, առաջարկի ու պահանջարկի միջև խոշոր տարբերություն առաջանա, երբ դադարեցվի երկրի միակ ատոմակայանի գործարկումը (ինչը նախատեսված է 2026 թ.-ին):

Տնտեսության էներգետիկ ինտենսիվության կրճատումը, հետևաբար, առանցքային է տեղական արտադրության մրցունակության, ներմուծման գների մեծ ազդեցության, էլեկտրաէներգիայի արտադրության աճող բացերի և բնակչության համար սահմանափակ էներգետիկ մատչելիության հետ կապված խնդիրները լուծելու համար: Ավելի ստույգ, Հայաստանի բնակելի հատվածը երկրի էներգիայի ամենամեծ վերջնական սպառողներից է. 2012 թ.-ին բնակելի հատվածը սպառել է վերջնական սպառման էլեկտրաէներգիայի և ջերմության 37 տոկոսը (էներգետիկայի միջազգային գործակալություն՝ ԷՄԳ): Այս ցուցանիշն ավելի բարձր է, քան անցումային այլ երկրների մեծամասնությունում՝ կոչ անելով հրատապ միջոցառումներ ձեռնարկել քաղաքային բնակելի ոլորտում էներգիայի պահանջարկը կրճատելու ուղղությամբ: Բնակելի ֆոնդի մեծ մասը բաղկացած է վատ մեկուսացված և վատ կառուցված բազմահարկ բնակարանային շենքերից, որոնք սովորաբար էներգախնայողության և հարմարավետության ցածր մակարդակ են ապահովում: Էներգաարդյունավետ բնակելի ֆոնդը կարևոր ոլորտ կհանդիսանա Բանկի հնարավոր ներդրումների համար, որոնք միտված կլինեն էներգասպառման կրճատմանը և դրա հետ կապված ջերմոցային գազերի արտանետումների նվազմանը:

Հայաստանում վերականգնվող էներգետիկայի զարգացման էական ներուժ կա քամու, արևային, հիդրո և երկրաջերմային ռեսուրսներում:⁹ Այնուամենայնիվ, այսպիսի ծրագրերը ուղղակիորեն կամ տեղական բանկերի միջոցով ֆինանսավորելու տեսանկյունից դեռևս բացակայում է հնարավոր ներդրումների տեսակների մասին իրազեկվածությունը և կայուն տեխնոլոգիաների առկայությունը, և հաճախ տեղական բանկերը համեմատաբար անձանոթ են կայուն էներգետիկայում ներդրումների տեսակներին: Բացի այդ, մասնավոր հատվածում ներդրումները հնարավոր դարձնելու համար անհրաժեշտ է սակագները համապատասխանեցնել ադեկվատ մակարդակներին:

Ինչ վերաբերում է ջրային պաշարներին, Հայաստանը խոցելի է ներկայիս կլիմայական պայմանների և կլիմայի հետագա փոփոխության նկատմամբ: ՄԱԿ-ի

⁸ Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, 2012թ.

⁹ Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագիր (SREP), Հայաստանի ներդրումային ծրագիր, ապրիլ, 2014 թ.

Կլիմայի փոփոխությունների մասին շրջանակային կոնվենցիային (ՄԱԿ-ի ԿՓՇԿ - UNFCCC) Երկրորդ ազգային հաղորդակցության համաձայն, Հայաստանում արդեն իսկ տեղումների և մակերևութային պաշարների զգալի ժամանակային և տարածական փոփոխություններ են արձանագրվել և ակնկալվում է, որ դրանք ավելի կլիստանան՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխությունների մասին կանխատեսումների համաձայն մակերևութային պաշարների կրճատումը: Հետևաբար, անհրաժեշտ է տեխնիկական և ինստիտուցիոնալ միջոցառումներ ձեռնարկել ջրային պաշարների արդյունավետ օգտագործումը խթանելու համար: Ջրօգտագործման արդյունավետությանն աջակցող ներդրումներն ու բարեփոխումներն առավել անհրաժեշտ են ագրոբիզնեսի, հանքարդյունահանման, արդյունաբերական և մունիցիպալ հատվածներում: Քանի որ Հայաստանի հիդրոէներգետիկ գործառնությունները նույնպես խոցելի են բնակլիմայական պայմանների համար, անհրաժեշտ է հիդրոէներգետիկ օբյեկտների կառուցման և վերականգնման ծրագրերում ներառել դիմակայությունն ամրապնդելուն ուղղված միջոցառումները:¹⁰

¹⁰ <http://unfccc.int/resource/docs/natc/armnc2e.pdf>.

3 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3.1 Ռազմավարական ուղղություններ

Մասնավոր հատվածի մրցունակության ամրապնդումը և հավասար պայմանների ստեղծումը առանցքային հնարավորություն կրնձեռեն Հայաստանին ավելի լայնամասշտաբ տնտեսություն ստեղծել, կրճատել արտաքին գործոնների նկատմամբ խոցելիությունը և կայուն աճ ապահովել: Այդ նպատակով անհրաժեշտ է մեծացնել ֆինանսավորման հասանելիությունը, հատկապես՝ ՄՓՄՁ-ների համար, շարունակել բարելավել գործարար միջավայրը, կորպորատիվ հատվածում ժամանակակից կառավարման կարողություններ զարգացնել, ինչպես նաև ամրապնդել արժեքային շղթան: Կապիտալի շուկաների զարգացումը, հատկապես՝ կենսաթոշակային բարեփոխումների համատեքստում, մեկ այլ կարևոր էլեմենտ է, որը կարող է բարելավել ֆինանսական ոլորտում գերիշխող ավանդական բանկային վարկավորումը, որն արդեն իսկ խեղդում է կորպորատիվ հատվածի վարկառուներից շատերին: Եվ վերջապես, դեռ շատ անելիքներ կան հանրային ծառայությունները և ենթակառուցվածքները բարելավելու և առևտրականացնելու ուղղությամբ, որոնք նպատակ են հետապնդում ինչպես քաղաքացիների համար ուղղակի օգուտ ապահովել, այնպես էլ՝ բարելավել բիզնեսի մրցունակությունը:

Հաշվի առնելով կոնկրետ հատվածների և երկրի անցումային բացերը՝ նոր ռազմավարության ժամանակահատվածում Բանկի ռազմավարական կողմնորոշումները կենտրոնանում են մասնավոր հատվածի մրցունակության խթանման, կապիտալ շուկաների զարգացման և բարելավված սպասարկմամբ առևտրականացված հանրային կոմունալ ծառայություններին աջակցելու վրա:

Խթանել մասնավոր հատվածի մրցունակությունը՝ ամրապնդելով կարողությունները, մեծացնելով թափանցիկությունը կորպորատիվ հատվածում և բարելավելով գործարար միջավայրը: Հայաստանի փոքր, բաց տնտեսության համար ներդրումներ ներգրավելու համար չափազանց կարևոր է էականորեն բարելավել մրցունակությունը: Մրցակցության բացակայությունը, հատկապես՝ մասնավոր բիզնեսների համար շուկա մուտք գործելու արգելքները նորարարության ու ձեռներեցության զարգացումը կանխող լուրջ խոչընդոտ են հանդիսանում և ավելի են խորանում բյուրոկրատական քաշքշուկների, վարչական ագելքների, կորպորատիվ հատվածի ցածր թափանցիկության և ֆինանսավորման սահմանափակ հասանելիության պատճառով: Այս իրավիճակը, կարծես, նպաստավոր պայմաններ է ստեղծում ներքին շուկայի խոշոր մասնակիցների համար և զսպում է նոր մասնակիցների մուտքը շուկա, այդ թվում նաև օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՆ): Բանկը կթիրախի կարգավորող ու վարչական միջավայրերի բարեփոխումներին ուղղված աջակցությունը, կիրախուսի բոլոր հատվածներում առավել կայուն և ռեսուրսաարդյունավետ աճը և կուժեղացնի իր աջակցությունն այն ՄՓՄՁ-ներին, որոնք, համադրելով ֆինանսներն ու խորհրդատվական ծառայությունները, ձգտում են ավելի

թափանցիկ ու մրցունակ լինել: Մինչդեռ Փոքր բիզնեսի նախաձեռնության (ՓԲՆ) գործիքների միջոցով Հայաստանի մասնավոր հատվածի լավագույն ընկերությունների ֆինանսավորումը կշարունակի Բանկի կողմից տրամադրվող աջակցության անբաժանելի մասը լինել, արդյունաբերության տարբեր ոլորտներում ՓՄՁ-ների ընդգրկումը գործընկեր բանկերի միջոցով (հատուկ վարկային գծերի, ինչպես, օրինակ՝ Կովկասի էներգաարդյունավետության ծրագրի՝ CEEP ներքո թողարկված վարկային գծեր) կշարունակի անցումային գործընթացի վրա, ընդհանուր առմամբ, առավելագույն ազդեցությունն ապահովել: Հետևաբար, ՓՄՁ վարկային գծերի միջոցով ֆինանսավորման հասանելիության խթանումը կշարունակի Բանկի ռազմավարության անկյունաքարը լինել:

Զարգացնել կապիտալ շուկաները և խթանել տեղական արժույթով ֆինանսավորումը: Մինչդեռ ներկայումս Հայաստանի համար հասանելի են միջազգային կապիտալ շուկաները, տեղական կապիտալ շուկաների զարգացումը և տեղական արժույթով ֆինանսավորումը վճռորոշ են երկրի կայուն զարգացման համար: Կապիտալի ամուր ու հաստատուն կառուցվածքում նոր գործիքներ են անհրաժեշտ, իսկ կորպորատիվ ընկերությունների շրջանում՝ բաժնետիրոջ արժեքի նկատմամբ իրենց մոտեցման մեջ ժամանակակից վարքագիծ: Քանի որ տեղական իշխանությունները կենսաթոշակային պարտադիր բարեփոխումներ են իրականացնում, ինչը, ամենայն հավանականությամբ, կավելացնի խնայողությունները և պարտատոմսերի ու բաժնային կապիտալի նկատմամբ ներքին պահանջարկ կստեղծի, կենսաթոշակային ֆոնդի ներդրումների մեծամասնությունը տեղական արժույթով կուղղվի: Երբ բարեփոխումները գործարկվեն, հաջողությունը մեծամասամբ կախված կլինի տեղական շուկայում կապիտալի շուկայի թողարկումների առողջ առաջարկի ձևավորումից, ինչպես նաև շուկայի իրացվելիություն ստեղծելու համար բավական թվով տարբեր ներդրողների առկայությունից՝ հուսալի դրամային շուկայի և հեջավորման գործիքների ձևավորմանը զուգահեռ: Թեև հայկական շուկայի չափն իրենից հատուկ մարտահրավեր է ներկայացնում, իսկ անհրաժեշտ անցումը տարիների ընթացքում էական ջանքեր կպահանջի, Բանկը կանդրադառնա այս մարտահրավերներին Հայաստանում՝ որպես տեղական արժույթի և կապիտալի շուկաների ուղղությամբ կատարվող իր աշխատանքների թիրախային երկիր:

Զարգացնել կայուն և առևտրականացված հանրային կոմունալ ծառայություններ: Աճի բարձր տեմպերի բացակայության պայմաններում Հայաստանի հասանելի ֆիսկալ տիրույթը չի կարող ամբողջությամբ ընդգրկել երկրի էներգետիկ, տրանսպորտային և համայնքային ենթակառուցվածքների վճռորոշ կարիքները: Այս փաստը ընդգծում է առևտրականացման և հանրային ծառայությունների մատուցման մեջ ավելի մեծ մասնավոր մասնակցության կարևորությունը, իսկ միջնաժամկետում պարտքի կայունությունն ապահովելու համար բոլոր սուվերեն և սուվերեն երաշխավորությամբ ծրագրերի ֆինանսավորման համար էական դրամաշնորհային էլեմենտի անհրաժեշտությունը: Առաջնահերթություններն արդյունավետորեն սահմանելու համար Հայաստանի Կառավարությունը պետք է սեկտորալ ազգային ռազմավարությունների շրջանակներում ծրագրեր մշակի,

որոնք համահունչ են դրանց ֆինանսավորման սահմանափակումների հետ: Բանկը լավ հնարավորություններ ունի այլ դոնորների հետ համագործակցելով՝ նպաստել այս ռազմավարություններին, ինչպես նաև աջակցել հանրային ծառայությունների մատուցման արդիականացմանն ու ընդլայնմանը՝ քաղաքականության ոլորտում խորհրդատվություն տրամադրելով և կարողությունների զարգացմանն աջակցելով, ինչը նպատակ կհետապնդի կայուն առևտրականացում ապահովել: Այս գործունեությունները կհամակցվեն էներգետիկայի և էներգաարդյունավետության, տրանսպորտի և մունիցիպալ ծառայությունների ոլորտում այնպիսի ծրագրերի վարկավորմամբ (այդ թվում, ըստ անհրաժեշտության, պետական երաշխավորությամբ վարկավորում), որոնք բարենպաստ են շրջակա միջավայրի համար, բարելավում են մրցունակությունը և հանգեցնում են ծախսերի վերականգնմանը:

3.2 Հիմնական մարտահրավերները և Բանկի գործունեությունները

Թեմա 1: Խթանել մասնավոր հատվածի մրցունակությունը՝ ամրապնդելով կարողությունները, մեծացնելով թափանցիկությունը կորպորատիվ հատվածում և բարելավելով գործարար միջավայրը

Անցումային մարտահրավերները

- Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բիզնեսները շարունակում են բախվել հարկային ու մաքսային վարչարարությանը, կոռուպցիային և ստվերային տնտեսությանն առնչվող խնդիրներին: Հավասար պայմաններով մրցակցային դաշտի բացակայությունը խոշոր մարտահրավեր է, իսկ հատվածային մենաշնորհի մակարդակը շարունակում է բարձր մնալ: Շուկա մուտք գործելու արգելքների, սեփականության համակենտրոնացման, շուկայում գերիշխող դիրքերի և ուղղահայաց ու հորիզոնական ինտեգրման պատճառով մրցակցությունը սահմանափակ է:
- Հայկական ապրանքների մրցունակությանը խոչընդոտում են նաև հնացած ենթակառուցվածքներն ու լոգիստիկայի թերզարգացած ցանցերը, որոնք տրանսպորտային ու լոգիստիկ բարձր ծախսերի պատճառ են դառնում:
- Հիմնական մարտահրավերները ներառում են. (1) բարելավել մրցակցության քաղաքականությունը՝ ազատականացնելով «բիզնեսի վարման» միջավայրը և կարգավորիչ հիմնարար գործողություններ ձեռնարկելով; (2) բարելավել հարկային ու մաքսային ընթացակարգերի թափանցիկությունը և արդարությունը; և (3) շարունակել զարգացնել տրանսպորտի ենթակառուցվածքներն ու լոգիստիկան՝ հայկական ապրանքների ծախսերը կրճատելու և դրանց մրցունակությունը բարձրացնելու նպատակով:

- Բանկերն ընդհանուր առմամբ կայուն են և լավ կապիտալացված, սակայն մարտահրավերներով լի մակրոտնտեսական միջավայրը՝ ավելի մանրակրկիտ մշտադիտարկում է պահանջում, հատկապես՝ խիստ դոլարիզացիայի պայմաններում: Տնտեսական թուլացած ակտիվությունը և արժույթի արժեզրկումը կրճատել են շահութաբերությունը: Աճի տեմպերի հետագա դանդաղումը, ամենայն հավանականությամբ, կավելացնի ժամկետանց վարկերի ծավալը, իսկ արժույթի արժեզրկումը կազդի բանկերի կապիտալիզացիայի հարաբերակցությունների վրա: Եթե նույնիսկ այս իրավիճակը չխթանի վերակապիտալացումը կամ վերակազմավորումը, բանկերը հավանաբար կարձագանքեն՝ խստացնելով վարկավորման չափանիշները և կրճատելով դեպի իրական տնտեսական հատված հոսող մասնավոր հատվածի վարկերի ծավալը: Այս իրավիճակը կվատթարացնի ձեռնարկությունների, այդ թվում՝ ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիությունը:
- Հայաստանում ոչ-բանկային ծառայությունները դեռևս զարգացման սաղմնային փուլում են գտնվում: Ապահովագրական ոլորտը դեռևս փոքր է և ներառում է միայն գույքի և դժբախտ պատահարներից ապահովագրությունը: ՓՄՁ-ների վարկավորմանը բաժին է ընկնում մասնավոր հատվածին տրամադրվող ներքին վարկավորման միայն մոտ 25 տոկոսը՝ չնայած ՀՆԱ-ում ՓՄՁ ոլորտի ունեցած զգալի ներդրմանը: ՄՓՄՁ-ներին բարձր տոկոսադրույքներ, մարման կարճ ժամկետներ (սովորաբար մեկ տարուց պակաս) և ավելի մեծ գրավի պահանջներ են ներկայացվում: Բացի այդ, բանկերը և մյուս ֆինանսական հաստատություններն իրենց ՓՄՁ վարկային պորտֆելի միայն 20 տոկոսից մի փոքր ավել մասն են հատկացնում Երևանից դուրս գտնվող ՓՄՁ-ներին, մինչդեռ Երևանից դուրս գտնվող ՓՄՁ-ների համամասնությունը ավելի քան 50 տոկոս է:
- Հիմնական մարտահրավերները ներառում են. (1) տարբերակել ֆինանսավորման պրոդուկտները՝ ներառելով ՓՄՁ վարկավորման այնպիսի գործիքներ, ինչպիսիք են լիզինգը և բաժնային կապիտալը, (2) շարունակել զարգացնել ապահովագրական ոլորտի պրոդուկտների տեսականին և հմտությունները, իսկ ապահովագրական ոլորտը կարգավորող հենքը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, (3) զարգացնել լիզինգի շուկաները և ստորակարգված ֆինանսավորման պրոդուկտները և (4) աջակցել ու հեշտացնել բանկային հատվածի համախմբան գործընթացը:
- Կանայք ձեռնարկություններ հիմնելիս ու ղեկավարելիս որոշակի խոչընդոտների են բախվում, որոնց թվում են՝ վարկերի, հմտությունների և ցանցերի հասանելիությունը: Աշխատուժի մեջ կանանց մասնակցության բարելավումը վճռորոշ դերակատարություն կունենա առավել մրցունակ մասնավոր հատված ձևավորելու գործընթացում:
- Կրթական համակարգի կողմից ապահովվող հմտությունները նույնպես էապես տարբերվում են գործատուների պահանջներից: Այս իրավիճակը իրական մարտահրավերներ է ստեղծում ընկերությունների համար

որակավորված մասնագետներ աշխատանքի ընդունելու և նրանց պահպանելու գործընթացում և հանգեցնում է (հատկապես շրջանավարտ) երիտասարդների շրջանում գործազրկության բարձր մակարդակի, ինչպես նաև հատկապես գյուղական բնակավայրերում երիտասարդների մեծ թվի առկայությանը, ովքեր ներգրավված չեն ո՛չ կրթության, ո՛չ զբաղվածության և ո՛չ էլ վերապատրաստման գործընթացներում:,::

- Գյուղատնտեսության ոլորտի խնդիրները ներառում են առաջնային գյուղատնտեսության հատվածում փոքր և ոչ արդյունավետ սպառողական ֆերմերության տարածվածությունը և ֆինանսավորման սահմանափակ առկայությունը, ինչը նպաստում է տեխնոլոգիաների ու արտադրողականության ցածր մակարդակին: Աջակցությունը գյուղատնտեսական ընկերությունների ֆորմալացմանը կօգնի մեծացնել ֆինանսավորման հասանելիությունը:
- Հանքարդյունահանման հատվածում բացակայում են վերամշակման ժամանակակից հզորությունները (բացառությամբ որոշ դեպքերի, օրինակ՝ ադամանդներ, այլումին) իսկ հայկական մետաղների մեծամասնությունն արտահանվում է որպես խտանյութ (այն է՝ ցածր եկամտաբերությամբ ապրանքներ): Հանքավայրերը բավարար կերպով չեն հետախուզվում, քանի որ դրա հետ կապված կապիտալ ծախսերը մեծ են, իսկ ֆինանսավորման հասանելիությունը՝ ոչ համարժեք: Թեև որոշակի առաջընթաց գրանցվում է, հանքարդյունահանման հետևանքով շրջակա միջավայրի վատթարացումը և սոցիալապես ու էկոլոգիապես անպատասխանատու գործելակերպերը շարունակվում են: Կարևոր մարտահրավեր կլինի մեծացնել արդյունահանման գործունեությունից ստացված եկամուտների հոսքերի թափանցիկությունը և զարգացնել հանքարդյունահանման հարստացման ու վերամշակման մեխանիզմները մատակարարման շղթան ընդլայնելու նպատակով:

Բանկի գործառնական արձագանքը

- Եթե տնտեսական աճի դանդաղ տեմպի և արժույթի արժեզրկման պատճառով ֆինանսական հատվածի հեռանկարը վատթարանա, Բանկը կփորձի հնարավորություններ գտնել, որոնք կօգնեն մեղմել ժամկետանց վարկերի աճը, մասնավորապես՝ գործընկեր բանկերին թիրախավորված տեխնիկական աջակցություն տրամադրելով, ինչպես նաև կոդիտարկի առանձին հաստատությունների կենսունակ վերակապիտալիզացիաներում մասնակցելու հնարավորությունը:
- Թեև բանկերի համախմբան խիստ անհրաժեշտությունը վաղուց արդեն հասունացել է, և նույնիսկ ուշացել, երկրի գծով ռազմավարության ժամանակահատվածի ընթացքում լավատեսության լավ առիթ կա, քանի որ Հայաստանի ԿԲ-ն իր վերջերս կայացրած որոշմամբ 2017 թ.-ի հունվարից էապես բարձրացնում է նվազագույն կապիտալի պահանջները: Այստեղ Բանկի դերակատարությունը հատկապես տեղին կլինի բարձր ֆինանսական սթրեսի ժամանակ, երբ ՎՋԵԲ-ը պատրաստ կլինի սատարել

միաձուլումներին ու ձեռքբերումներին՝ ռազմավարական կապիտալով մասնակցելով բանկային ոլորտի առավել ուժեղ և արդյունավետ առաջնորդների կապիտալում, ինչը, իր հերթին, կլիթանի կորպորատիվ հատվածի վարկառուների համար ֆինանսավորման հասանելիությունը:

- Ֆինանսական հատվածը որպես ուղի օգտագործելով՝ Բանկը թիրախային վարկային գծերի տրամադրմամբ կաշխատի հեշտացնել ֆինանսավորման հասանելիությունը ՄՓՄՁ-ների համար: Թիրախային վարկային գծերը կներառեն էներգաարդյունավետության և կանանց կողմից ղեկավարվող բիզնեսների (կանանց բիզնեսների վարկարժան ծրագրերի նախնական ցուցակի ձևավորման դեպքում) համար նախատեսված վարկերը: Բանկը կշարունակի նաև ֆինանսավորել միկրո-վարկավորման կազմակերպություններին, հատկապես նրանց, որոնք ֆինանսավորումը հասանելի են դարձնում ավանդական բանկային հատվածից դուրս մնացած գյուղական բնակավայրերի բիզնեսների համար:
 - Ինչ վերաբերում է էներգաարդյունավետությանը, Բանկը կշարունակի աջակցել Կովկասի էներգաարդյունավետության ծրագրի միջոցով կատարվող ներդրումները, ինչպես նաև կղիտարկի առկա բնակելի ֆոնդի էներգաարդյունավետությունը խթանելու հնարավորությունները: Կլիմայական փոփոխությունների համար ֆինանսների ու տեխնոլոգիայի փոխանցման (FINTECC) և նմանատիպ այլ նախաձեռնությունների միջոցով Բանկը կշարունակի խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և կայուն տեխնոլոգիաների ներդրումը:
 - Բանկը նաև մեկնարկում է «Գործարար կանայք» ծրագիրը, որն առանցքային տարրեր միավորելով՝ կաջակցի կանանց համար ֆինանսավորման հասանելիությանը, այդ թվում՝ հատուկ ֆինանսավորում տրամադրելով (ներառյալ առաջին կորուստի երաշխավորությունը կանանց կողմից ղեկավարվող ՄՓՄՁ-ների համար), տեխնիկական աջակցություն կառաջարկի՝ աջակցելու գործընկեր բանկերին համապատասխանեցնել իրենց բիզնես մոդելները և տրամադրման մեխանիզմները, ինչպես նաև կին ձեռներեցների համար նախատեսված խորհրդատվական ծառայություններ կտրամադրի:
- Բանկը, օգտագործելով Փոքր Բիզնեսի Աջակցման կողմից տրամադրվող խորհրդատվությունը, կշարունակի սատարել տեղական հուսալի կորպորատիվ ընկերություններին, որոնք պատրաստ կլինեն հանձնառություն ստանձնել բարելավել իրենց կորպորատիվ կառավարումը և թափանցիկությունը: Բանկը երկարաժամկետ ներդրումներ և աշխատանքային կապիտալի ֆինանսավորում կտրամադրի, այդ թվում նաև արդյունաբերության, լոգիստիկայի և վերամշակման հատվածներում՝ մեծապես շեշտադրելով նորարարությունը և գիտելիքահենք տնտեսությունը: Այս բոլոր ոլորտներին հնարավոր կլինի անդրադառնալ հիմնականում Ուղղակի վարկավորման, Ուղղակի ներդրումների և Միջին չափի

համաֆինանսավորման գործիքների ներքո: Մասնավորապես, Բանկը մատակարարման ողջ շղթայում գործող գյուղատնտեսական ձեռնարկություններում ներդրումներ կատարելու վարկարժան հնարավորություններ կփնտրի՝ միննույն ժամանակ հիմնական ոլորտներում տեխնիկական աջակցություն տրամադրելով:

- Բանկը կշարունակի աջակցել հանքարդյունահանման ընտրված ծրագրերին, որոնք կարող են չափանիշների, թափանցիկության և սոցիալ-բնապահպանական պատասխանատվության տեսանկյունից չափորոշիչ հանդիսանալ ոլորտի համար: Բանկը նպատակ կհետապնդի ծրագրերի կրիտիկական զանգված ձևավորել, ինչը կարող է պահպանել ներքին վերամշակման արդյունաբերությունը, ինչպես նաև հանքավայրերի հետախուզումն ընդլայնելու համար ներդրումներ ներգրավել:

Քաղաքականության շուրջ երկխոսությունը և կարողությունների զարգացմանն ուղղված տեխնիկական աջակցությունը

- Բանկը կշարունակի աջակցել Ներդրումային խորհրդին (ՆԽ), որը Կառավարության և մասնավոր հատվածի միջև քաղաքականության շուրջ երկխոսության հարթակ է հանդիսանում: ՆԽ կարողությունների աճի և ավելի դժվար խնդիրներ լուծելու հետ մեկտեղ Բանկը կընդլայնի Քարտուղարությանը տրամադրվող իր տեխնիկական ու ֆինանսական աջակցությունը, որը կներառի խորացված տեխնիկական աջակցություն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ ռիսկերի վրա հիմնված տեսչական ստուգումների բարեփոխումները և փոքր բիզնեսների ու արտահանողների վրա ազդող ԵՏՄ, ԵՄ և Հայաստանի նորմատիվային խնդիրների ներդաշնակեցումը: Բանկը նաև կաջակցի դոնորների ավելի բարձր համակարգմանը, հատկապես՝ հարկային / մաքսային քաղաքականության և վարչարարության մասով:
- ՎՁԵԲ-ը տեխնիկական աջակցություն և կարողությունների հզորացում կտրամադրի, որպեսզի բարելավվի ֆինանսական արբիտրաժի գործառույթը: Բանկը պատրաստ է նաև աջակցել այնտեղ, որտեղ իր կողմից տրամադրված խորհրդատվությունը կարող է բարելավել գործարար միջավայրը, օրինակ՝ լիզինգի և ֆակտորինգի իրավական / կարգավորող հենքերը բարեփոխելու մասով, ինչպես նաև գրավի վերականգնման և իրացվելիության հենքի մնացած թերությունները շտկելու մասով:
- Բանկը կհամակարգի այլ դոնորների հետ՝ քաղաքականության շուրջ երկխոսության միջոցով (այդ թվում՝ ՀԿ-ների, հանքարդյունահանող ընկերությունների և իշխանությունների հետ) պատասխանատու հանքարդյունահանումը և լավագույն գործելակերպերը խթանելու համար: Բանկը պատրաստ է աջակցել Հայաստանին միանալ «Արդյունահանող արդյունաբերությունների թափանցիկության նախաձեռնությանը» (ԱԱԹՆ - EITI), ինչը կարող է օգնել լրացուցիչ ներդրումներ ներգրավել դեպի հանքարդյունահանման հատված:

Արդյունքների շրջանակ. Թեմա 1 Խթանել մասնավոր հատվածի մրցունակությունը՝ ամրապնդելով կարողությունները, մեծացնելով թափանցիկությունը կորպորատիվ հատվածում և բարելավելով գործարար միջավայրը

	ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ	ՆՊԱՏԱԿՆԵՐ	ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԸՆԹԱՑՔԻՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
1.1	<p>Մրցունակությանը խոչընդոտում են սահմանափակ կարողությունները, մրցակցության բացակայությունը, դժվար գործարար միջավայրը և բյուրոկրատական քաշքշուկները</p>	<p>Ամրապնդել մրցունակությունը՝ մեծացնելով արդյունավետությունը, արտադրողականությունը և մրցակցությունը, ինչպես նաև բիզնեսի գործելակերպերի ու չափանիշների վերաբերյալ խորհրդատվություն մատուցելով</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Տեղական վստահելի կորպորատիվ ընկերությունների և ագրոբիզնեսի ուղղակի և անուղղակի (գործընկեր բանկերի միջոցով) ֆինանսավորում, որը կգուգորդվի հիմնական ունակությունների, հմտությունների փոխանցման, կորպորատիվ կառավարման և թափանցիկության շուրջ տեխնիկական համագործակցությամբ ▪ ՓԲԱ աջակցությունը կառավարման գործելակերպերը և արտադրողականությունը բարելավելուն, այդ թվում՝ “Գործարար կանանց” ծրագրի միջոցով ▪ Ուղղակի և միջնորդավորված ֆինանսավորում (CEEP, FINTECC)՝ տարբեր հատվածներում էներգետիկ / ռեսուրսների արդյունավետությունը և կայուն տեխնոլոգիաները խթանելու նպատակով ▪ Ներդրումային խորհրդին ֆինանսական աջակցություն և ռազավարական ուղորդում 	<ul style="list-style-type: none"> ▪ ՓԲԱ ցուցանիշներն այն մասին, թե հաճախորդ ընկերություններից քանիսն են աճ արձանագրել, մեծացրել արտադրողականությունը, ինչպես նաև բարելավված կորպորատիվ կառավարման ու գործարար չափանիշների որակական գնահատականը <i>(Ելակետային տվյալներ - սահմանվում են ծրագրիը հաստատելիս)</i> ▪ Էներգաարդյունավետության ծրագրերի համար Բանկի և գործընկեր ֆինանսական հաստատությունների տրամադրած վարկերի (CEEP-ի և FINTECC-ի ներքո) ընդհանուր քանակը / ծավալը, ինչպես նաև ձեռք բերված էներգախնայողությունների ծավալը՝ հաշվարկված ըստ ՎՋԵԲ-ի մեթոդոլոգիայի՝ toe/տարի <i>(Ելակետային տվյալներ - սահմանվում են ծրագրիը հաստատելիս)</i> ▪ Գործարար միջավայրը բարելավելուն ուղղված ՆԽ-ի կողմից հովանավորվող բարեփոխումների հաջողված ընդունման / իրականացման մասին վկայությունը <i>(Ելակետային տվյալներ չեն կիրառվում)</i>

1.2	<p>Բիզնեսները կաշկանդված են ֆինանսավորման սահմանափակ հասանելիությամբ</p>	<p>Ամրապնդել ֆինանսական հատվածը խորացված ֆինանսական միջնորդության և բանկային ֆինանսավորման ոչ-բանկային այլընտրանքների զարգացման միջոցով</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Ֆինանսավորել միկրովարկավորման կազմակերպությունները, հատկապես նրանք, որոնք ֆինանսավորումը հասանելի են դարձնում գյուղական բիզնեսների համար ▪ Խթանել ֆինանսավորման հասանելիությունը նորարար բանկային գործիքների միջոցով ▪ Քաղաքականության շուրջ երկխոսություն և կարգավորող հենքի բարեփոխումներ, այդ թվում՝ ֆինանսական արբիտրաժի գործունեության, ինչպես նաև գրավի, լիզինգի և ֆակտորինգի մասով 	<ul style="list-style-type: none"> ▪ Հաճախորդ բանկերի և գործընկեր ֆինանսական հաստատությունների կողմից ՄՓՄՁ-ներին, այդ թվում, եթե դա կիրառելի է, գյուղական բիզնեսներին ու կանանց տրամադրված վարկերի ընդհանուր քանակը / ծավալը <i>(Ելակետային տվյալներ - սահմանվում են ծրագիրը հաստատելիս)</i> ▪ Բարելավված կարգավորող դաշտի մասին վկայություններ, այդ թվում ոչ-բանկային հատվածի մասով <i>(Ելակետային տվյալներ չեն կիրառվում)</i>
<p>Համատեքստի ցուցանիշ: Δ ՄՓՄՁ-ների ATC գնահատականում <i>(Ելակետային տվյալներ (2014) – 2+ (Միջին))</i></p>				

Թեմա 2. Չարգացնել կապիտալ շուկաները և խթանել տեղական արժույթով ֆինանսավորումը

Անցումային մարտահրավերները

- Ինչպես արդեն նշվեց, դոլարիզացիան բանկային հատվածում կայուն բարձր է: Դոլարիզացիան պայմանավորված է բանկի հաշվեկշռների պարտավորությունների մասով, որը, ֆորվարդային և արտարժույթի սվոպ շուկաների բացակայության պարագայում, չի կարող վարկավորման արտահայտումը առանձնացնել ավանդներից, որոնք դրանց ֆինանսավորման հիմնական աղբյուրն են հանդիսանում:
- Բանկային հատվածում ավանդների մոտ 25 տոկոսը պատկանում է ոչ ռեզիդենտներին և գերազանցապես արտարժույթով է: Արտարժույթով ավանդների տոկոսադրույքները կազմում են տարեկան մոտ 7-8 տոկոս՝ վեց ամիս և ավելի մարման ժամկետ ունեցող ավանդների դեպքում: Երկու տարվա հարաբերական կայունությունից հետո, 2014թ.-ի վերջին հայկական դրամը 14 տոկոսով արժեզրկվեց ԱՄՆ դոլարի նկատմամբ:
- Հայկական ընկերությունների համար մասնավոր բաժնային կապիտալի աղբյուրները գրեթե բացակայում են: Ֆինանսավորման համար ընկերությունները հիմնականում ապավինում են բանկային վարկերին՝ պայմանավորված ձեռնարկությունների համար նախատեսված ֆինանսական գործիքների սահմանափակ տեսականիով:
- Ներդրումներով ծանրաբեռնված հատվածներում գործող ՄՓՄՁ-ների վրա մասնավորապես ազդում է երկարաժամկետ, հատկապես՝ տեղական արժույթով ֆինանսավորման բացակայությունը: Հիմնական մարտահրավերները ներառում են. (1) մեծացնել տեղական արժույթով վարկավորման մասնաբաժինը ընդհանուր վարկավորման ծավալի մեջ, այդ թվում՝ ՓՄՁ-ների վարկավորման մեջ, (2) աջակցել ածանցյալ գործիքների ձևավորմանը՝ տոկոսադրույքները և արժույթային ռիսկերը հեջավորելու նպատակով և (3) տարբերակել բանկային պրոդուկտները, այդ թվում՝ տեղական արժույթով ավանդները:
- Թեև Հայաստանի կապիտալ շուկան կորպորատիվ վարկավորման և բաժնային կապիտալի թողարկման համար համեմատաբար առողջ ենթակառուցվածք և կարգավորող ու իրավական հենք ունի, առևտրային գործարքները սահմանափակ են: Գործունեությունը հիմնականում կենտրոնանում է մեկօրյա միջբանկային շուկայի և պետական պարտատոմսերի շուրջ: Կապիտալ շուկաների հետագա զարգացման ամենախոշոր խոչընդոտներից մեկը ինստիտուցիոնալ ներդրողների պակասն է: Այլ խոչընդոտների շարքում են թողարկման ծախսերը և կորպորատիվ հատվածի թափանցիկությունը: Հիմնական մարտահրավերները ներառում են. (1) ընդլայնել ցուցակված շուկան լրացուցիչ կորպորատիվ թողարկումների, հատկապես՝ պարտատոմսերի թողարկումների միջոցով (2) գրավել ներդրողների հետաքրքրությունը և իրացվելիությունը՝ բարելավելով վճարահաշվարկային միջոցառումները

(3) երկարացնել միջբանկային շուկայական գործունեության մարման ժամկետները (4) աջակցել բանկերի միջև միջբանկային գործունեության զարգացմանը, ի տարբերություն ներկայումս NASDAQ-ի միջոցով միջբանկային վարկավորման համար ամբողջությամբ գրավադրված հայտային առաջարկների գործարկմանը (5) դրամային շուկայի չափորոշիչներ և արտարժույթի սվոպեր մշակել (6) ուսումնասիրել տարածաշրջանային դաշինքները՝ տեղական շուկայի իրացվելիությունն ընդլայնելու նպատակով:

Բանկի գործառնական արձագանքը

- Բանկը կշարունակի ուշադրության կենտրոնում պահել տեղական արժույթով մատչելի վարկավորումը՝ բանկերին դրամով արտահայտված վարկային գծեր տրամադրելով, տեղական բորսայում և միջազգային շուկաներում ՎՋԵԲ-ի՝ դրամով արտահայտված պարտատոմսեր թողարկելով, ընդլայնելով վճարահաշվարկային միջոցառումները և համակարգելով շուկայի հեջավորման ինչպես միջազգային, այնպես էլ տեղական մասնակիցների հետ՝ ներքին հեջավորման գործիքներ ստեղծելու և դրամի երկարաժամկետ ռիսկեր վերցնողների շրջանում տեղական հարստության մասնակցությունը մեծացնելու նպատակով:
- Գործարկելով Միջնաժամկետ պարտատոմսերի շրջանակի գործիքը և մինչև 2017 թ.-ի հունվարի 1-ը նախատեսված պարտադիր կենսաթոշակային բարեփոխումների ներդրմանը զուգահեռ՝ Բանկը նպատակ կհետապնդի բանկերին ժամկետային ֆինանսավորում տրամադրել բորսայում տեղական պարտատոմսերի թողարկմանը մասնակցելու համար և մինևույն ժամանակ թողարկողներին, ներդրողներին ու, հնարավոր է, ներքին վարկանիշային գործակալություններին տեխնիկական աջակցություն տրամադրել: Հնարավորության դեպքում Բանկը կդիտարկի իր մասնակցությունը տեղական միաձուլումներում և կլանումներում, միջազգային սինդիկատներում և պարտատոմսերում՝ մինևույն ժամանակ խրախուսելով թափանցիկ ճանապարհով և լավագույն փորձին համահունչ իրականացվող ընտրված սեփականաշնորհումները, հնարավորության դեպքում՝ պետական շուկաների միջոցով, այդպիսով էլ ավելի խթանելով կապիտալ շուկաների գործունեությունը:
- Բանկը նպատակ կհետապնդի օգնել անդրադառնալ մասնավոր բաժնային կապիտալի՝ որպես երկարաժամկետ կապիտալի աղբյուրի մասով առկա էական բացերին: Այդ օգնությունը կդրսևորվի ինչպես ընտրված թիրախների համար Ուղղակի ներդրումային գործիքի օգտագործմամբ, այնպես էլ մասնավոր բաժնային կապիտալի ֆոնդի գործունեության խրախուսմամբ, հնարավոր է՝ տեղական բաժնային կապիտալի ֆոնդերում ընդլայնված մասնակցության և պարտքի համաֆինանսավորման միջոցով:

Քաղաքականության շուրջ երկխոսությունը և կարողությունների զարգացմանն ուղղված տեխնիկական աջակցությունը

- Հայաստանի Կենտրոնական բանկի հետ քաղաքականության շուրջ երկխոսության, ինչպես նաև ներդրողների, թրեյդերների և շուկայի ենթակառուցվածքներ մատուցողների (ինչպիսիք են՝ Քլիրսթրիմը և Ֆրոնթբլիթը) իրազեկման միջոցով Բանկը կփորձի աջակցել ավելի վստահելի դրամային շուկայի ձևավորմանը, հեջավորման ներքին գործիքների առաջացմանը, ինչպես նաև Հայաստանի պարտքային գործիքներում ավելի շատ միջազգային ներդրումներին:
- Տեխնիկական աջակցության միջոցով Բանկը կձգտի սատարել մասնավոր բաժնային կապիտալի գործունեության համար ավելի բարենպաստ իրավական, կարգավորող և դատական դաշտի ձևավորմանը, օրինակ՝ օգնելով իրավական հիմքեր ստեղծել բաժնետերերի պայմանագրերը պատշաճ կառուցվածքով մշակելու համար:
- Տեխնիկական աջակցության և քաղաքականության շուրջ շարունակական երկխոսության միջոցով Բանկը կձգտի հնարավոր թողարկողներին տեղեկատվություն տրամադրել ածանցյալների, դրամային շուկաների և շուկայական թողարկումների (ինչպես պարտատոմսերի, այնպես էլ արժեթղթերի) օգուտների մասին, ինչպես նաև պարզաբանել թողարկման գործընթացը: Այս գործունեության շրջանակներում կներառվի նաև ՓԲԱ-ի և Միջնաժամկետ պարտատոմսերի շրջանակի ներքո տրամադրվող տեխնիկական աջակցությունը, որն ուղղված կլինի ներդրողների բարձրակարգ իրազեկմանը, այդ թվում՝ տեղեկատվություն տրամադրելով ձեռնարկությունների մակարդակում գործընթացների ու վարքագծերի ինստիտուտի մասին, ինչը կարող է գրավել ֆինանսական ռիսկ վերցնողներին մասնակցել ձեռնարկության կապիտալի կառուցվածքում:

Արդյունքների շրջանակ. Թեմա 2 Զարգացնել կապիտալ շուկաները և խթանել տեղական արժույթով ֆինանսավորումը

	ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ	ՆՊՏԱԿՆԵՐ	ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԸՆԹԱՑՔԻՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
2.1	Կորպորատիվ հատվածը, հատկապես ՄՓՄՁ-ները, տեղական արժույթով ֆինանսավորման պակաս են զգում	Մեծացնել տեղական արժույթով ֆինանսավորման հասանելիությունը	<ul style="list-style-type: none"> ▪ Դրամով արտահայտված վարկային գծերի, պարտատոմսերի թողարկման, ածանցյալ պրոդուկտների և վճարահաշվարկային ընդլայնված միջոցառումների միջոցով խթանել տեղական արժույթով վարկավորումը ▪ Ֆինանսավորել տեղական պարտատոմսերի թողարկումները՝ գործարկելով Միջնաժամկետ պարտատոմսերի շրջանակ գործիքը 	<ul style="list-style-type: none"> ▪ Հաճախորդ բանկերի կողմից տեղական արժույթով տրամադրված վարկերի ընդհանուր քանակը/ծավալը <i>(Ելակետային տվյալներ - սահմանվում են ծրագիրը հաստատելիս)</i> ▪ Բանկի կողմից նորարար ֆինանսական գործիքների ներկայացումը (ֆինանսական շուկայի միջակայքի և վերարտադրման որակական գնահատում) <i>(Ելակետային տվյալներ չեն կիրառվում)</i>
2.2	Կապիտալ շուկաների գործունեությունը սահմանափակ է, մասնավորապես՝ ինստիտուցիոնալ ներդրումների մասով	Շարունակել ամրապնդել և աջակցել Հայաստանի կապիտալ շուկաների զարգացմանը՝ ընդլայնելով գործունեությունը և ներդրումներ ներգրավելով	<ul style="list-style-type: none"> ▪ Մասնակցել միջազգային սինդիկատներում, պարտատոմսերում և կարևոր սեփականաշնորհումներում՝ կապիտալ շուկաների գործունեությունը խթանելու նպատակով ▪ Խթանել մասնավոր բաժնային կապիտալը որպես երկարաժամկետ կապիտալի աղբյուր, այդ թվում նաև ՈՒՆԳ և տեղական ֆոնդերի միջոցով ▪ Տեխնիկական աջակցություն և ՓԲԱ այլ առնչվող օժանդակություն տրամադրել հնարավոր թողարկողներին կորպորատիվ կառավարման, ղեկավարման և թափանցիկության ասպեկտների շուրջ 	<ul style="list-style-type: none"> ▪ Կապիտալ շուկաների (պարտք և բաժնային կապիտալ) բարելավման մասին փաստեր (օրինակ՝ նոր թողարկումներ, ավելի մեծ ծավալներ) և, ըստ անհրաժեշտության, Բանկին վերագրվող <i>(Ելակետային տվյալներ չեն կիրառվում)</i> ▪ ՎՋԵԲ-ի մասնակցությամբ մասնավոր բաժնային կապիտալի ծավալը (այդ թվում՝ վերօրինակման որակական գնահատումը) <i>(Ելակետային տվյալներ - սահմանվում են ծրագիրը հաստատելիս)</i>
<p>Համատեքստի ցուցանիշ. Δ Կապիտալ շուկաների ATC (Շուկայի կառուցվածք) գնահատական <i>(Ելակետային տվյալներ (2014): Խոշոր)</i>; մասնակցային կապիտալի և պարտատոմսերի շուկայի առուվաճառքի ծավալները</p>				

Թեմա 3 Ձարգացնել կայուն և առևտրականացված հանրային կոմունալ ծառայություններ

Անցումային մարտահրավերները

- Հայաստանի էլեկտրաէներգիայի ոլորտը իրավապես տարանջատված է և ոլորտում առկա է մասնավոր հատվածի մասնակցությունը, սակայն արդյունավետ մրցակցությունը բացակայում է, քանի որ համակարգը շարունակում է ապավինել մեծածախ էներգիայի կենտրոնացված գնորդի մոդելին: Էներգիայի գներն ու սակագները կարգավորում է կիսանկախ կարգավորող մարմինը, որին անհրաժեշտ է հզորացնել, որպեսզի վերջինս կարողանա հաղթահարել քաղաքական ճնշումները: Մեծածախ վաճառքի ապակենտրոնացված մրցունակ համակարգի զարգացումը կմեծացնի գնային ազդակների թափանցիկությունը և կխթանի մասնավոր ներդրումները: Կարճաժամկետում, մեծածախ վաճառքների բաց ու մրցունակ շուկա ձևավորելու հեռանկարները սահմանափակ են, ինչը պայմանավորված է շուկայի բարեփոխումներին ոչ բավարար աջակցությամբ, հարևան շուկաների հետ ֆիզիկական փոխկապակցման բացակայությամբ, շուկայի խոշոր մասնակիցների գերիշխող դիրքով և մեկ գնորդի վրա հիմնված շուկայի մոդելով: Ցանցային կորուստները շարունակում են հարաբերականորեն բարձր մնալ՝ մոտ 13 տոկոս: Հիմնական մարտահրավերները ներառում են. (1) միջնաժամկետում մրցունակ համակարգերի ներդրմամբ բարելավել շուկայի գնային ազդակները (2) մեծացնել մասնավոր հատվածի մասնակցությունը էլեկտրաէներգիայի ոլորտում և (3) բարելավել սակագների սահմանման մեթոդոլոգիան, ինչը կներառի վերջնական սպառողների համար ծախսերն արտահայտող սակագների ներդրումը:
- Էներգիայի ներքին արտադրությունը հարաբերականորեն կենտրոնացված է, իսկ Ռուսաստանից գազի և նավթի ներմուծումից կախվածությունը՝ բարձր: Որպես այլընտրանք կարող է հանդես գալ վերականգնվող էներգիայի աղբյուրների ուղղությամբ տարբերակումը: Ամենախոստումնալիցը փոքր հիդրոէլեկտրակայաններն են, քամին, արևային երկրաջերմային էներգիան և կենսազանգվածը: Հիմնական մարտահրավերները ներառում են. (1) ամրապնդել էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի ծրագրեր մշակելու համար անհրաժեշտ տեխնիկական և ինստիտուցիոնալ կարողությունները (2) մեծացնել լավագույն փորձի մասին իրազեկվածությունը և (3) սակագների և ապրանքների գնման մասին այնպիսի պայմանավորվածություններ ձեռք բերել, որոնք կարող են ապահովել մասնավոր հատվածի լրացուցիչ մասնակցությունը:
- Ջրային հատվածում կոմունալ ծառայություններն ապակենտրոնացվել են և մասամբ ռեգիոնալացվել: Երկու հիմնական ընկերությունները կառավարվում են օտարերկրյա ռազմավարական օպերատորների կողմից: Խոշոր կապիտալ ներդրումները շարունակում են աջակցվել

դոնորների և ՄՖՀ-ների վարկերի միջոցով, իսկ սակագների մակարդակներն, ընդհանուր առմամբ, շարունակում են ցածր մնալ: Վճարումների հավաքագրումը դեռևս խնդիր է հանդիսանում, իսկ ջրաչափերի ցուցմունքների մանիպուլյացիան վերստին կրկնվող խնդիր է: Գործառնությունները կենտրոնացնելու, մեկ խոշոր ջրային ընկերություն ստեղծելու և սակագները միասնականացնելու մասին պետական ծրագիր կա: Այնուամենայնիվ, դա կարող է մարզերում խաչաձև սուբսիդավորման հանգեցնել: Հիմնական մարտահրավերը կլինի մեծացնել կոմունալ ծառայությունների հուսալիությունը՝ (1) ուժեղացնելով մասնավոր հատվածի մասնակցությունը և (2) բոլոր սեգմենտներում ծախսաճածկման հասնելով:

- Քաղաքային տրանսպորտի հատվածում քաղաքապետարանի սեփականություն հանդիսացող մետրոպոլիտենը և տրոլեյբուսները շահագործող ընկերությունները ֆինանսական, տեխնիկական ու գործառնական մարտահրավերների են բախվում: Ճանապարհների ենթակառուցվածքը և դրանց սպասարկման մակարդակները բավականին ցածր են՝ պայմանավորված տարիներ շարունակ ներդրումների բացակայությամբ: Մասնավոր հատվածի մասնակցությունը ներմուծելու և մշտադիտարկելու ինստիտուցիոնալ կարողությունները զարգացած չեն, իսկ մրցակցությունը թույլ է: Հիմնական մարտահրավերները ներառում են. (1) ապակենտրոնացնել կարգավորման հիմնական ասպեկտները, այդ թվում՝ սակագների սահմանման և ծառայությունների մատուցման պարտականությունները, (2) ամրապնդել քաղաքապետարանի ինստիտուցիոնալ և իրավական կարողությունները՝ պետական և մասնավոր տրանսպորտի ծառայությունների մատուցումը կարգավորելու և մշտադիտարկելու համար, (3) բարեփոխել պետական սեփականություն հանդիսացող քաղաքային տրանսպորտի օպերատորներին՝ առանց հուսալիությունը զոհաբերելու ծառայության որակը բարելավելու նպատակով և (4) բարելավել ինտեգրումը և տոմսերի վաճառքը:

Բանկի գործառնական արձագանքը

- Բանկը կկենտրոնանա բարձրավոլտ էլեկտրահաղորդման ցանցի ֆիզիկական արդիականացման վրա՝ բարելավելով գործառնական հուսալիությունը, արդյունավետությունը և մատակարարման ընդլայնված կարողությունները, ինչպես նաև բարձր լարման փոխկապակցման վրա՝ էլեկտրաէներգիայի միջսահմանային առևտուրը հնարավոր դարձնելու նպատակով: Միևնույն ժամանակ Բանկը կօգնի բարելավել կարգավորող քաղաքականությունը, հիմնականում զարգացման բանկերի և դոնորների հետ համակարգմամբ: Բանկը նաև պատրաստ կլինի ներդրումներ կատարել մասնավոր հատվածում էլեկտրաէներգիայի արտադրության ծրագրերում:
- Բանկը կձգտի ներդրումներ կատարել էներգաարդյունավետության այնպիսի միջոցառումներում, ինչպիսիք են՝ փողոցների «խելացի»

լուսավորությունը և հուսալի քաղաքային տրանսպորտի լուծումները, որոնք կգուզորդվեն կանոնակարգման թափանցիկ կառուցվածքներով: Այնքանով, որքանով սակագները աջակցեն վարկարժան ծրագրերին, Բանկը պատրաստ կլինի նաև, մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ մեկտեղ, ներդրումներ կատարել վերականգնվող էներգետիկայի ծրագրերում, հնարավոր է՝ կապիտալ ծախսերը փոխհատուցելու նպատակով ստանալով «Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագրի» ներքո տրամադրվող դրամաշնորհների աջակցությունը:

- Բանկը կշարունակի իր ներդրումները կոշտ կենցաղային թափոնների տնտեսապես իրագործելի այն ծրագրերում, որոնք համահունչ կլինեն Կառավարության Կոշտ կենցաղային թափոնների ազգային ռազմավարությանը և, մասնավորապես, կկենտրոնանա կոշտ թափոնների վերամշակումը ծախսաճածկման և բնապահպանական կայունության հասցնելու վրա:
- Բանկը կշարունակի ներդրումները ջրի և կոյուղաջրերի ենթակառուցվածքներում և հաշվի առնելով երկու ընթացիկ կոնցեսիանները մեկ ազգային օպերատորի ներքո համատեղելու Կառավարության պլանները՝ կաջակցի մասնավոր հատվածի կայուն մասնակցությանը:

Քաղաքականության շուրջ երկխոսությունը և կարողությունների զարգացմանն ուղղված տեխնիկական աջակցությունը

- Կառավարությունը ցանկություն է հայտնել բազմաթիվ դոնորներից կազմված աշխատանքային խմբի միջոցով ավելի համակարգված էներգետիկ քաղաքականություն վարել: Բանկն այս հնարավորությունը կօգտագործի հիմնական խնդիրների շուրջ բարձրաստիճան երկխոսությանը մասնակցելու համար: Երկխոսությունը մասնավորապես կվերաբերի ծրագրերի ֆինանսական իրագործելիությունն ապահովելու համար անհրաժեշտ քայլերի ձեռնարկմանը, այդ թվում՝ կարգավորող և սակագնային քաղաքականությունների բարելավմամբ: Այս մասով Բանկը պատրաստ է լրացնել Համաշխարհային Բանկի կողմից այս ոլորտում քաղաքականության շուրջ տրամադրված խորհրդատվությունը:
- Բանկը պետական կոմունալ ծառայություններում ու ենթակառուցվածքներում ներդրումների հետ զուգակցությամբ հնարավորություններ կդիտարկի, որոնք միտված կլինեն խթանել մասնավորեցումը, հեշտացնել ներդրողների / կոնցեսիոներների հարաբերությունները, ծախսերն արտացոլող սակագնային քաղաքականություններ մշակել և խթանել սոցիալական ու բնապահպանական հուսալիությունը: Դրանք հատուկ մշակված կլինեն, որպեսզի մասնավոր հատվածում կուտակումների միջոցով անդրադառնան Հայաստանի հարկաբյուջետային խոչընդոտներին: Օրինակները ներառում են ազգային փոստում՝ «Հայ Փոստ»-ում մասնավոր հատվածի մասնակցությանն օժանդակող խորհրդատվական ծառայությունները,

ինչպես նաև հանրային ջրամատակարարումը ներկայումս կառավարող երկու մասնավոր օպերատորների կոնցեսիաների հնարավոր միավորմանն օժանդակող խորհրդատվությունը:

Արդյունքների շրջանակ. Թեմա 3 Չարգացնել կայուն և առևտրականացված հանրային կոմունալ ծառայություններ

	ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ	ՆՊԱՏԱԿՆԵՐ	ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԸՆԹԱՑՔԻՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
3.1	<p>Հայաստանի մունիցիպալ ենթակառուցվածքը խղճուկ վիճակում է գտնվում, իսկ երկրի հանրային կոմունալ ծառայություններն անարդյունավետ ձևով են շահագործվում: Կարգավորող հենքը և սակագների սահմանման նկատմամբ կիրառվող մոտեցումը խոչընդոտում են օպերատորների կայունությանը:</p>	<p>Ամրապնդել պետական կոմունալ ծառայությունների հուսալիությունը, գործառնական փորձը և կառավարումը բարելավված կառավարման, ինստիտուցիոնալ և կարգավորող բարենպաստ հենքի և մասնավոր հատվածի մասնակցության միջոցով</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Ջրային / կոյուղաջրերի, էլեկտրաէներգիայի, և/կամ կոշտ թափոնների վստահելի ծրագրերում ներդրումներ կատարել, իսկ հնարավորության դեպքում այդ ներդրումները կատարել այլ ՄՖՀ-ների, դոնորների և / կամ մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ ▪ Քաղաքականության շուրջ երկխոսության և տեխնիկական աջակցության միջոցով խթանել մասնավորեցումը, առևտրականացումը, հուսալիությունը և սակագնային բարեփոխումները 	<ul style="list-style-type: none"> ▪ Արդյունավետության և ենթակառուցվածքային ծառայությունների մատուցման բարելավումների մասին ապացույցները, այդ թվում՝ TIMS/TCRF միջոցով արձանագրված մունիցիպալ օպերատորների ֆինանսական ու գործառնական ցուցանիշները <i>(Ելակետային տվյալներ - սահմանվում են ծրագրի իրականացման ընթացքում)</i> ▪ Բանկի քաղաքականության շուրջ երկխոսության և տեխնիկական աջակցության արդյունքում սակագնի սահմանման բարելավված մեթոդոլոգիայի ներդրում, որը համահունչ է ծախսերի վերականգնման սկզբունքներին <i>(Ելակետային տվյալներ չեն կիրառվում)</i>
3.2	<p>Հայաստանում բացակայում են էներգետիկ / ռեսուրսների արդյունավետության ծրագրեր մշակելու համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ ու տեխնիկական կարողությունները</p>	<p>Ամրապնդել ինստիտուցիոնալ հենքը և բարելավել կայուն էներգետիկայի քաղաքականության և օգտագործման խթանները</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Ուղղակի ներդրումներ էներգետիկ / ռեսուրսների արդյունավետության ծրագրերում և/կամ վերականգնվող էներգետիկայի ֆինանսապես կայուն ծրագրերում, որոնք ներառում են մասնավոր հատվածի մասնակցությունը և որոնք սատարվում են քաղաքականության շուրջ երկխոսությամբ ▪ Աջակցել մասնավոր հատվածի մասնակցությամբ իրականացվող վերականգնվող էներգետիկայի հուսալի ծրագրերին 	<ul style="list-style-type: none"> ▪ Բանկի ներդրումների միջոցով ձեռք բերված էներգախնայողությունների ծավալը, որը հաշվարկվում է ըստ ՎՁԵԲ-ի մեթոդոլոգիայի՝ toe/տարի չափման միավորով <i>(Ելակետային տվյալներ – 0)</i> ▪ Բանկի աջակցությամբ ներդրված վերականգնվող էներգետիկայի կարողությունների փոփոխություն <i>(ՄՎտ և ՄՎտ/ժ արտահայտությամբ)</i> <i>(Ելակետային տվյալներ – 0)</i>
<p>Համատեքստի ցուցանիշ: Δ ՄԲԵ և Էլեկտրաէներգիայի ATC գնահատականներում <i>(Ելակետային տվյալներ (2014) – Ջուր և Կոյուղաջրեր: 3- (Միջին); Քաղաքային տրանսպորտ: 2+ (Միջին); Ճանապարհներ: 3- (Միջին); Էլեկտրաէներգիա: 3+ (Փոքր))</i></p>				

3.3 Երկրի գծով ռազմավարության ներդրման հնարավոր ռիսկերը

Հայաստանում իր ռազմավարությունը ներդնելու ՎՋԵԲ-ի կարողության վրա կարող են մի շարք խնդիրներ ազդել, որոնք Բանկի վերահսկողությունից դուրս են գտնվում: Հնարավորության դեպքում Բանկը կաշխատի անդրադառնալ այդ ռիսկերին և իր հաճախորդների, ՄՖՀ գործընկերների և Կառավարության հետ ակտիվ ու կայուն ներգրավվածության միջոցով մեղմել այդ ռիսկերի ազդեցությունը:

Ռազմավարության իրականացման համար էական խոչընդոտ են հանդիսանում մակրոտնտեսական ռիսկերը: Հայաստանը տնտեսական ու արտահանումների նեղ բազա ունեցող փոքր, բաց տնտեսություն է և մեծապես կախված է Ռուսաստանից: Հայաստանն ընթացիկ հաշվի մեծ դեֆիցիտ ունի, օտարերկրյա պարտքի մեծ պաշար է կուտակել, իսկ երկրի բանկային հատվածը խիստ դոլարիզացված է: Այսպիսով Հայաստանն արտաքին ցնցումների է ենթարկվում, որոնք արտարժույթի փոխարժեքի միջոցով կարող են նյութական ու երկարատև էֆեկտ ունենալ տնտեսության վրա և ազդել ռազմավարության ներդրման վրա:

Ուկրաինայի ճգնաժամը, Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցները և համապատասխան տնտեսական արտաքին էֆեկտներն ազդում են Հայաստանի վրա արտարժույթի փոխարժեքի, տարածաշրջանային առևտրի, կրճատված (հատկապես Ռուսաստանից) ներդրումների վտանգի և դրամական փոխանցումների ավելի կրճատված մակարդակի միջոցով: Ռազմավարության վրա ազդող ամենաանմիջական ռիսկերից են.

- ԱՄՆ դոլարի (արժույթ, որով արտահայտված է Հայաստանի պետական պարտքի գերակշիռ մասը) նկատմամբ ազգային արժույթի փոխարժեքի հետագա արժեզրկումը կշարունակի ՀՆԱ-ի նկատմամբ պետական ու պետականորեն երաշխավորված պարտքի մակարդակը մղել դեպի 50 տոկոսից ավել ցուցանիշը, այն է՝ այսպես կոչված «պարտքի անհանդուրժողականության շեմին» մոտ՝ պայմանավորված տնտեսական թույլ կառուցվածքով, կառավարման ցածր ստանդարտներով և դոլարիզացիայի բարձր մակարդակով: Հայաստանի օրենսդրության համաձայն, այս իրավիճակը կսահմանափակի ֆիսկալ դեֆիցիտը մինչև ՀՆԱ-ի 3 տոկոսը (որը հաշվարկվում է որպես երեքամյա սահող միջին, որի սահմանաչափը մեկնարկում է շեմը գերազանցելու տարում): Եթե պարտքի հարաբերակցությունը հասնի 60 տոկոսի, Հայաստանը չի կարող շարունակել միջազգային փոխառություններ վերցնել՝ առանց իր օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու:¹¹ Օրենքը և հարկաբյուջետային կանոնակարգը, այնուամենայնիվ, կարող են փոփոխվել Ազգային Ժողովում պարզ մեծամասնության քվեարկությամբ: Անկախ

¹¹ Եվրասիական Տնտեսական Միությունը ստեղծելու մասին պայմանագրի 63-րդ հոդվածը քանակական թիրախներ է պարունակում պետական հատվածի տարեկան կոնսոլիդացված դեֆիցիտի համար (դեֆիցիտը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3 տոկոսը) և պետական պարտքի համարը (պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 50 տոկոսը), սակայն արդյոք դրանք պարտադիր են ԵՏՄ անդամ պետությունների համար՝ պարզ չէ:

պարտքի իրավական սահմանաչափից՝ պարտքի հուսալիությունը և հարկաբյուջետային տիրույթը զգալի մտահոգություններ են առաջացնում և կսահմանափակեն սուվերեն ֆինանսավորմամբ և / կամ երաշխավորությամբ նոր ծրագրերի տեսակն ու ծավալը: Ի թիվս այլոց, սա կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ ՎՋԵԲ-ը դադարեցնի իրականացնել ենթակառուցվածքի և հանրային ծառայությունների մատուցման ցանկացած նոր ծրագիր, որը պետական աջակցություն է պահանջում:

- Թեև բանկերը կարողացան հաղթահարել արտարժույթի տատանումներից առաջացած անմիջական հաշվեկշռային ռիսկերը և շարունակում են լավ կապիտալիզացված մնալ, ԱՄՆ դոլարով վարկավորման գերակշռությունը վարկային ռիսկեր է առաջացնում: Էական կարճաժամկետ ռիսկ կա, որ ողջ բանկային հատվածում կաճի դասակարգված վարկերի քանակը, ինչը, բավարար չափով բանկային կապիտալի բացակայության պայմաններում, կարող է հանգեցնել ՎՋԵԲ-ի ֆինանսական հատվածի վարկային գծերի դանդաղ իրացմանը: Բանկերի համախմբման գործընթացը, այնուամենայնիվ, կարող է օգնել ժամանակի ընթացքում անդրադառնալ այս ռիսկին, իսկ ՎՋԵԲ-ը բոլոր հնարավորություններն ունի մասնակցել ընտրված կոնսոլիդացիաներում:

Հայկական իշխանությունների կողմից բարեփոխումների իրենց օրակարգի մասով արձանագրած անհավասարաչափ առաջընթացը նույնպես ռիսկային է ռազմավարության իրականացման համար, իսկ բարեփոխումները, ամեն դեպքում, անմիջապես չեն դրսևորի իրենց ազդեցությունը: Քաղաքական գործոնները կարող են քաղաքականությունների առաջընթացի համար լրացուցիչ բարդություններ ստեղծել: Օրինակ, պարտադիր կենսաթոշակային բարեփոխումներն ի սկզբանե պետք է մեկնարկեին 2014 թ.-ի հունվարի 1-ից: Կենսաթոշակային համակարգի մասնակիցների և ընդդիմադիր կուսակցությունների էական ընդդիմադրության պատճառով բարեփոխման պարտադիր բաղադրիչի ներդրումը հետաձգվել է մինչև 2017 թ.-ը: Մի կողմից սա լրացուցիչ ժամանակ է ապահովում կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների համար տեղական շուկայում գնումներ կատարելու գործիքներ ստեղծելու համար, բայց մյուս կողմից էլ, եթե բարեփոխումն ըստ պլանավորածի չընթանա, առանցքային երկարաժամկետ դրամային ակտիվները տեղական գործիքների նկատմամբ պահանջարկի տեսանկյունից չեն ապահովվի: Հարկային ու մաքսային բարեփոխումների շարունակական առաջընթացը, ռիսկերի վրա հիմնված տեսչական ստուգումները և մասնավոր հատվածում ներդրումների համար իրավական ու դատական համակարգի բարեփոխումներն այն լրացուցիչ բաղադրիչներն են, որոնք անհրաժեշտ են ռազմավարության հաջողության համար:

Սահմանադրական բարեփոխումների մասով իշխող կուսակցությունն առաջարկում է հիմնովին վերանայել դատական ու քաղաքական համակարգերը, այդ թվում նաև գործող կիսանախագահական համակարգից անցում կատարել դեպի խորհրդարանական համակարգ: 2018 թ.-ին նախատեսված նախագահական պարտականությունների փոխանցումը (գործող նախագահից նոր նախագահին) նույնպես կարող է մեծացնել քաղաքական բևեռացումը:

Թեև ԵՏՄ-ին մասնակցությունը կարող է օգուտներ բերել, հայկական տնտեսությունը կարող է էլ ավելի սերտորեն կապվել Ռուսաստանի հետ, իսկ ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի բացակայությունը կարող է նշանակել երկարաժամկետ բարեփոխումների հենակետի և ԵՄ չափանիշներին համապատասխանելու ձգտման կորուստ: Ներկայումս ՀՀ կառավարությունը և ԵՄ-ն աշխատում են համագործակցության նոր համապարփակ շրջանակի ձևավորման ուղղությամբ, որը չի հակասի ԵՏՄ-ին անդամակցության շրջանակներում Հայաստանի ստանձնած հանձնառություններին: Բանկի ռազմավարությունը հաստատակամորեն սատարում է Հայաստանի ինտեգրման նպատակները, սակայն ներդրումը կախված կլինի այն տեմպից ու որակից, որով Հայաստանն ի վիճակի կլինի իրականացնել դրա հետագիծը:

ԵՏՄ նոր կարգավորող շրջանակների ու մեխանիզմների հետ կապված ժամանակավոր անորոշությունները կշարունակեն զսպել ներդրումային գործունեությունը, քանի որ միջազգային առևտրում մասնակցող ընկերությունների առջև նոր ռիսկեր են ծառանում, ինչպիսիք են մաքսային նոր քաղաքականությունները և դրանց ներդրումը:

ՄՖՀ-ների կողմից ֆինանսավորվող պետական ու պետականորեն երաշխավորված բոլոր վարկերի մասով իշխանությունների նվազագույն կոնցեսիոն պահանջների համատեքստում, հատկապես՝ հաշվի առնելով Հայաստանի համար ԵՄ ՀՆԳ պատուհանի կրճատված հասանելիությունը, կապիտալ ծախսերի դրամաշնորհային համաֆինանսավորման գործիքների բացակայությունը կշարունակի սահմանափակել հանրային ծառայությունների ենթակառուցվածքի ոլորտում ծրագրերի տեսակը, քանակը և ծավալը: Ներկայումս ՎՋԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ենթակառուցվածքի ծրագրերի մեծամասնությունը 10-50 տոկոս կապիտալ ծախսերի դրամաշնորհային բաղադրիչ են պահանջում՝ կախված ծրագրից և ՎՋԵԲ-ի հատկացրած մասնաբաժնից: Մասնավոր հատվածում ենթասուվերեն ռիսկեր և խմբավածությունն ընդլայնելու ջանքերը միայն մասնակի լուծումներ են և քիչ հավանական է, որ դրանք կաշխատեն առանց պետական աջակցության որոշակի մակարդակի:

Ի վերջո, *ֆորսմաժորային* հիմնական ռիսկերի շարքում են խիստ խորացած ֆինանսական ճգնաժամը, Հայաստանի և Ադրբեյջանի միջև լարվածության աճը, պատահարը Մեծամորի ատոմակայանում և խոշոր երկրաշարժի մշտապես առկա ռիսկեր: Չնայած սրանք հետին ռիսկեր են, այնուամենայնիվ, եթե այս բացասական իրադարձություններից և որևէ մեկը տեղի ունենա, դա անշուշտ կվտանգի ռազմավարության իրականացումը:

3.4 Բանկի կողմից առաջարկվող գործունեությունների բնապահպանական և սոցիալական հետևանքները

Հայաստանի բնապահպանական ու սոցիալական ամենաառաջատար մարտահրավերներից մեկը մունիցիպալ ծառայությունների, այդ թվում՝ մաքուր ջրի և կոշտ ու հեղուկ թափոնների կառավարման ու հեռացման պատշաճ գործիքների սահմանափակ առկայությունն ու հասանելիությունն է: Օդի վատ

որակի գերակշռությունը նույնպես էական ազդեցություններ ունի շրջակա միջավայրի և ազգաբնակչության առողջության վրա: Այս խնդիրը մասնակիորեն կապված է նաև կոշտ թափոնների հեռացման համապատասխան հնարավորությունների սահմանափակ առկայության հետ:

Սևանա լիճը հայերի համար էական մշակութային ու պատմական նշանակություն ունի, իսկ լճի վիճակը շարունակում է հուզական թեմա լինել և քաղաքացիական հասարակության բազմաթիվ կազմակերպությունների հայտարարությունների ուշադրության կենտրոնում մնալ: Սևանա լճում ջրի որակի ու քանակի իջեցումը հաճախ նշվում է որպես հայ ժողովրդի բնապահպանական ու մշակութային ժառանգության առաջնային մտահոգություն: Բնական միջավայրը և դրա հետ ասոցացված կենսաբազմազանության կորուստը նույնպես քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և հանրության համար կարևոր մտահոգություն են հանդիսանում:

Պատմականորեն բնապահպանական ակտիվիստների ձայներն ազդեցիկ չեն եղել, իսկ ծրագրեր մշակելիս բնապահպանական ու սոցիալական խնդիրների շուրջ հանրային իրազեկում և խորհրդակցություններ չեն իրականացվել: Այս իրավիճակը, երբեմն, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իշխանությունների միջև էական վրդովմունք, հիասթափություն և անվստահություն էր առաջացնում: Թեև որոշակի բարելավումներ իրականացվել են, Հայաստանում դեռևս շարունակվում է բնապահպանական ու սոցիալական շարժումը, որը կենտրոնանում է ինչպես ներկայիս, այնպես էլ նախորդ տարիների խնդիրների վրա:

2014 թ.-ին ընդունված Բանկի Բնապահպանական և սոցիալական քաղաքականությունը համապատասխանաբար կանդրադառնա այս կոնկրետ մարտահրավերներին, ինչպես նաև բնապահպանական ու սոցիալական հուսալիության ու կառավարման ավելի լայն շրջանակին:

Մունիցիպալ ենթակառուցվածքներում ներդրումները կարող են բնապահպանական ու սոցիալական նշանակալի օգուտներ բերել և անդրադառնալ Հայաստանի առջև ծառայած կայուն զարգացման մի շարք մարտահրավերներին: Մունիցիպալ հատվածում ՎՋԵԲ-ի ծրագրերը պետք է համապատասխանեն ԵՄ-ի բնապահպանական չափանիշներին, թեև այս հանձնառությունը կարող է դժվար իրագործելի լինել, մասնավորապես այն ծրագրերի դեպքում, որոնց մասով վարկունակությունը սահմանափակ է: Սահմանափակ վարկունակությունը և ծրագրերից շատերի փոքր չափը կարող են մարտահրավեր հանդիսանալ նաև այնպիսի ոլորտներում, ինչպիսին է, օրինակ՝ հանքարդյունահանումը, որտեղ բնապահպանական ու սոցիալական ռիսկերը և դրանց հետ ասոցացված հանրային մտահոգությունները սովորաբար մեծ են, իսկ Բանկի հետ համաձայնեցված բնապահպանական ու սոցիալական հանձնառությունների հետ կապված ծախսերը՝ նշանակալի:

2015 թ.-ի հունվարին Եվրոպական Միությունը և Հայաստանը հաստատեցին իրենց համատեղ հանձնառությունը Եվրոպական Հարևանության Քաղաքականության և Արևելյան Գործընկերության միջոցով ընդլայնել և

խորացնել իրենց համագործակցությունը: Այս համագործակցության շրջանակներում քաղաքացիական հասարակության ներգրավումը առանցքային տարր է հանդիսանում, որն ամրապնդվում է Քաղաքացիական Հասարակության Ֆորում, Հարևանության Քաղաքացիական Հասարակության Գործիք և նմանատիպ այլ նախաձեռնություններով, ինչպես նաև տարածաշրջանային ու երկրի մակարդակով ֆինանսավորմամբ:

2014 թ.-ին Հայաստանն ընդունեց Բնապահպանական ազդեցության գնահատման (ԲԱԳ) մասին վերանայված օրենքը, որն արտացոլում է ԵՄ ԲԱԳ դիրեկտիվայի պահանջները, այդ թվում՝ հանրային մասնակցությունը և շահագրգիռ կողմերի ներգրավումը: Թեև սա մեծ առաջընթաց է Հայաստանում բնապահպանական խնդիրները կարգավորելու հարցում, ԵՄ-ն նշել է, որ սոցիալական բարեփոխումների և մարդու իրավունքների ոլորտները դեռևս բարելավման կարիք ունեն: Մյուս ՄՖՀ-ների հետ երկխոսելով՝ Բանկը կիրախուսի նման զարգացումները և կաշխատի իր հաճախորդների հետ՝ ապահովելով շահագրգիռ կողմերի իմաստալից ու լայնածավալ ներգրավումը ներդրումների մշակման և իրականացման գործընթացում: Աղքատության մակարդակը, հատկապես՝ Երևանից դուրս, կնշանակի, որ հատուկ ուշադրություն կդարձվի ամենախոցելի և աղքատ բնակչության համար ծառայությունների հասանելիությունն ապահովելուն:

3.5 ՎՋԵԲ-ի համագործակցությունը բազմակողմ զարգացման բանկերի (ԲԶԲ) հետ

Հայաստանում մեծ թվով ՄՖՀ-ներ ու դոնորներ են գործում: Ի լրումն քաղաքականության շուրջ երկխոսությանը և ծրագրերին առնչվող տեխնիկական համագործակցության համակարգմանը, եղել են նաև դեպքեր, երբ դոնորները միաձայն հանդես են եկել՝ խրախուսելով բարեփոխումների, հատկապես՝ գործարար միջավայրի բարելավմանն ուղղված (ինչպես, օրինակ՝ «Բաց երկինք») բարեփոխումների ներդրումը:

Բանկը կշարունակի հետևյալ գործունեությունները.

- Համագործակցել այլ ՄՖՀ-ների հետ դոնորների համակարգման կանոնավոր հանդիպումների համատեքստում, որտեղ ՎՋԵԲ-ը առաջատար դերակատարություն ունի կապիտալ շուկաներ զարգացնելու, մասնավոր հատվածը զարգացնելու, սուվերեն երաշխավորությամբ ենթակառուցվածքի պլանավորումը բարելավելու և հանրային ծառայությունները առևտրականացնելու ոլորտներում:
- Համագործակցել ՄՖԿ-ի հետ տեսչական ստուգումների բարեփոխումների, ՓՄՁ զարգացման և կարգավորող հենքի բարեփոխումների շուրջ, ինչպես նաև աշխատել ԵՄ-ի, ԱՄՆ ՄՁԳ-ի, ԱՄՀ, KfW-ի և այլ դոնորների հետ գործարար միջավայրն ընդհանուր առմամբ բարելավելու ուղղությամբ: Մասնավորապես, Բանկը կշարունակի ՎՋԵԲ-ի կողմից ֆինանսավորվող Ներդրումային Խորհրդի աշխատանքը կապել ԱՄՆ ՄՁԳ-ի Հարկային ծրագրից և մաքսային վարչարարության

բարելավմանն ուղղված ՀԲ/ՄՖԿ-ի ուշադրությունից բխող փորձառությանն ու առաջարկություններին:

- Համագործակցել ԱՄՀ-ի, ՀԲ/ՄՖԿ-ի և ԱՄՆ ՄՁԳ-ի հետ՝ աջակցելու տեղական արժույթով ֆինանսավորմանը, բանկային և ոչ-բանկային ֆինանսական կարգավորումների բարելավմանը և կապիտալ շուկաների զարգացմանը:
- Աշխատել ԵՆԲ-ի, ԱԶԲ-ի ՀԲ-ի և KfW-ի հետ ջրային հատվածի բարեփոխումների շուրջ (KfW-ի գլխավորությամբ), ինչպես նաև կոշտ կենցաղային թափոնների (ԱԶԲ-ի գլխավորությամբ), քաղաքային տրասպորտի (ԱԶԲ-ի գլխավորությամբ) և էներգետիկայի ոլորտի քաղաքականության ու ծրագրերի (ՀԲ-ի գլխավորությամբ) շուրջ:
- Այլ դոնորների հետ համատեղ համագործակցել Կառավարության հետ Հայաստանում մուլտիմոդալ տրանսպորտի տնտեսական իրագործելիության ԱԶԲ-ի նախատեսված հետազոտության արդյունքների շուրջ, ինչը կնպաստի ինչպես տրանսպորտային ավելի լավ լուծումների ներդրմանը, այնպես էլ սահմանափակ ֆիսկալ տիրույթի համատեքստում առաջնահերթության սկզբունքով ուղղորդված որոշումների կայացմանը: ՎԶԵԲ-ը մասնավորապես կդիտարկի ճանապարհաշինության գերակա ծրագրերի շուրջ ԵՆԲ-ի հետ համագործակցելու հնարավորությունները:
- Ընդլայնել ԵՆԲ-ի և ԵՄ-ի Հարևանության Ներդրումային Գործիքի (ՀՆԳ) հետ համագործակցությունը մունիցիպալ, տրանսպորտի և էներգետիկ ենթակառուցվածքներին առնչվող ծրագրերը ֆինանսավորելու շուրջ: Մասնավորապես, էներգետիկայի ոլորտում ՀՆԳ-ի հետագա աջակցությունը համակցվել է էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից դոնորների ողջ համայնքում քաղաքականությունը և ծրագրերը համակարգելու ջանքերի հետ, իսկ ԱԶԲ-ն և ՎԶԵԲ-ը համագործակցում են բարձրավոլտ էլեկտրահաղորդման և բաշխիչ ցանցերի բարեփոխումները ներդնելու նպատակով, հնարավոր է՝ ՀՆԳ աջակցությամբ:
- Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ համակարգմամբ՝ համագործակցել Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և բնապահպանության գործընկերությունում (E5P) մասնակցող հայաստանյան հաստատությունների, այդ թվում՝ ԵՆԲ-ի, KfW-ի, NEFCO-ի և ԵՄ-ի հետ՝ սահմանելու էներգաարդյունավետությունը և շրջակա միջավայրի պաշտպանությունն ընդլայնող գերակա ծրագրերը և իրականացնելու դրանք, հնարավորության դեպքում՝ մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայաստանը հավատարիմ է իր՝ բազմակուսակցական ժողովրդավարության, բազմակարծության և շուկայական տնտեսության սկզբունքների պահպանման հանձնառությանը՝ համաձայն «Բանկի հիմնադրման համաձայնագրի» Հոդված 1-ում սահմանված պայմանների, չնայած որ այս սկզբունքները դեռևս անհամաչափորեն են կիրառվում:

Վերջին ռազմավարության ժամանակահատվածում Հայաստանն առաջընթաց է արձանագրել իր ժողովրդավարական ինստիտուտներն ամրապնդելու գործընթացում՝ ընդհանուր առմամբ ազատ, բազմակարծիք ընտրություններ անցկացնելով, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման ու դատական համակարգերի բարեփոխումներ նախաձեռնելով և կոռուպցիայի դեմ պայքարելու կառավարության հանձնառությունը վերահաստատելով: Բոլոր այս ձեռնարկումներում հայկական իշխանությունները համագործակցել են Եվրոպայի Խորհրդի, ԵԱՀԿ-ի և Եվրոպական Միության հետ:

Ժողովրդավարական հակակշիռների ու զսպումների համակարգն առկա է, սակայն կարող է է՛լ ավելի ամրապնդվել: Քաղաքական գործընթացում քաղաքացիների մասնակցությունն ընդհանուր առմամբ ցածր է, ինչը մասամբ պայմանավորված է քաղաքական հաստատությունների, ընտրությունների գործընթացի և դատական համակարգի արդարության նկատմամբ հանրային անվստահությամբ: Օրենքներն ու կարգավորումները հաճախ մշակվում են լավագույն փորձին համապատասխան, սակայն հետևողականորեն չեն իրականացվում: Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության հետագա սրումը սպառնալիք է հանդիսանում Հայաստանի տնտեսական զարգացման համար:

Ազատ ընտրություններ և ներկայացուցչական Կառավարություն

Նախորդ ընտրաշրջանի համեմատ Հայաստանը 2012-2014թթ. զգալիորեն բարելավել է ազատ և մրցակցային ընտրություններ անցկացնելու իր ցուցանիշը: Հայաստանի Հանրապետական կուսակցությունը մեծացրել է քաղաքական համակարգում իր գերիշխանությունն այն բանից հետո, երբ կուսակցության թեկնածուները Ազգային Ժողովում արժանացել են ձայների մեծամասնությանը և հաղթել նախագահական ընտրությունները: Նախագահը համապարփակ սահմանադրական բարեփոխումներ է նախաձեռնել, որոնց նպատակն է՝ ամրապնդել ժողովրդավարական հակակշիռների ու զսպումների համակարգը՝ կառավարման խորհրդարանական համակարգին անցում կատարելով: Սահմանադրական փոփոխությունները հաստատվել են Ազգային Ժողովի կողմից 2015թ. հոկտեմբերին և կքվեարկվեն համաժողովրդական հանրաքվեով դեկտեմբերի 6-ին: Ընդդիմադիր որոշ կուսակցություններ արտահայտել են իրենց վերապահումները սահմանադրական բարեփոխումների նկատմամբ: Եվրոպայի խորհրդի Վենետիկյան հանձնաժողովը ուսումնասիրել է սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային փաստաթուղթը և եզրակացրել, որ Սահմանադրական բարեփոխումների նպատակներն ու ընդհանուր մոտեցումը ուժեղ աջակցության են արժանի: Այնուամենայնիվ, նշվում է նաև, որ հոգուտ

կառավարման խորհրդարանական համակարգին փոփոխությունը պետք է լայնորեն քննարկվի երկրում, և որ սահմանադրական բարեփոխումը կարող է իրականացվել միայն հասարակության շրջանում լայն փոխհամաձայնության հիման վրա:¹²

1. Ազատ, արդար և մրցակցային ընտրություններ

Հայաստանի Սահմանադրությունը երաշխավորում է քաղաքացիների իրավունքը համընդհանուր ընտրական իրավունքի վրա հիմնված պարբերական, ազատ և մրցակցային ընտրությունների միջոցով փոխել իրենց կառավարությունը: Երկրի գծով վերջին ռազմավարության ժամանակահատվածում Հայաստանում 2012 թ.-ի մայիսին տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, իսկ 2013 թ.-ի փետրվարին՝ նախագահական ընտրություններ: Ընտրություններն անցկացվեցին 2011 թ.-ի մայիսին ընդունված ընտրական նոր օրենսգրքի համաձայն: Միջազգային դիտորդների եզրակացությունների համաձայն այդ օրենսգրքին ընդհանուր առմամբ հուսալի հենք է հանդիսանում ժողովրդավարական ընտրություններ¹³ անցկացնելու համար և մի շարք բարեփոխումներ է ներառում, որոնք համահունչ են Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական Հաստատությունների և Մարդու Իրավունքների Գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) առաջարկներին:

Երկու ընտրություններն էլ դիտարկվել են միջազգային դիտորդների առաքելությունների կողմից, որոնց կազմում ընդգրկվել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն, Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովը (ԵԽՎ), Եվրոպական Խորհրդարանը (ԵԽ) և ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովը (ԵԱՀԿ-ԽՎ): Երկու դեպքերում էլ միջազգային դիտորդներն ընտրությունների անցկացման գործընթացում առաջընթաց են արձանագրել՝ ի համեմատ 2008 թ.-ին տեղի ունեցած նախորդ ընտրությունների: 2012 թ.-ի և 2013 թ.-ի ընտրությունները համարվեցին խաղաղ և բազմակարծիք, թեկնածուների գրանցումը ներառական էր, նախընտրական քարոզարշավի միջավայրն ընդհանուր առմամբ բաց էր՝ թեկնածուներին թույլ տալով ազատորեն քարոզել; հավաքների և արտահայտման ազատությունները պահպանվել են, իսկ զանգվածային լրատվամիջոցների լուսաբանումները հավասարակշռված էին: Այնուամենայնիվ, դիտորդները նշեցին նաև իշխող կոալիցիայի կողմից վարչական ռեսուրսների կիրառումը և քվեարկողների ընտրության ազատությունը սահմանափակելու փորձերը, ինչը անհավասար պայմաններ ստեղծեց և հակասեց ԵԱՀԿ շրջանակներում ստանձնած հանձնառություններին:¹⁴ Նախագահական ընտրություններից հետո, որոնք հաղթեց գործող նախագահ Սերժ Սարգսյանը, ընտրությունների նրա հիմնական մրցակիցը հրաժարվեց ճանաչել ընտրության արդյունքները և կոչ արեց նոր ընտրություններ անցկացնել: Ի տարբերություն 2008 թ.-ի,

¹² Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) կարծիքը Հայաստանի Հանրապետության Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի վերաբերյալ, էջ 12

¹³ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (2012թ.) Հայաստանի խորհրդարանական ընտրությունների դիտարկում, Եզրափակիչ գեկույց, էջ 1

¹⁴ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (2013թ.) Հայաստանի նախագահական ընտրությունների եզրափակիչ գեկույց, էջ 1

իշխանությունները հասարակական բողոքի ակցիաներին զուսպ արձագանքեցին՝ հարգելով խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքը:

2. Իշխանությունների տարանջատում և հակակշիռների ու զսպումների արդյունավետ համակարգ

Հայաստանի Սահմանադրությունը նախատեսում է իշխանությունների տարանջատում կառավարության գործադիր և օրենսդրական ճյուղերի միջև: Այս համակարգի ձևաչափը փոփոխվում է նոր սահմանադրական փոփոխություններով, որոնցով սահմանափակում են նախագահական լիազորությունները, ամրապնդվում է կառավարության գործադիր իշխանությունը և աճում են խորհրդարանի օրենսդրական հսկողության կարողությունները:

Նախագահը պետության ղեկավարն է, ով ընտրվում է ուղղակի քվեարկությամբ՝ հինգ տարի ժամկետով: Նախագահի պաշտոնավարումը սահմանափակվում է երկու անընդմեջ ժամկետ պաշտոնավարելով: Վարչապետը Կառավարության ղեկավարն է և պատասխանատու է ներքին քաղաքականությունների համար: Վարչապետը նշանակվում է Նախագահի կողմից, այդ նշանակումը պետք է հաստատվի խորհրդարանական մեծամասնության կամ խորհրդարանի պատգամավորների մեծամասնության կողմից: Խորհրդարանը կազմված է 131 պատգամավորներից, ովքեր ընտրվում են մեծամասնական ու համամասնական ընտրակարգով՝ հինգ տարի պաշտոնավարման ժամկետով:

Սահմանադրությունն ընդունվել է 1995 թ.-ին և հետագայում փոփոխվել է: Վերջին փոփոխությունները հաստատվել են խորհրդարանի կողմից 2015թ, հոկտեմբերին և կքվեարկվեն համաժողովրդական հանրաքվեով դեկտեմբերի 6-ին: Չնայած նախորդ համակարգով Սահմանադրությամբ սահմանվում էր հակակշիռների ու զսպումների մեխանիզմը, գործնականում երկրում ամենամեծ քաղաքական դերակատարությունը Նախագահին էր, իսկ նախագահական լիազորությունների արդյունավետ ինստիտուցիոնալ հակակշիռները բավականաչափ ուժեղ չէին: Սահմանադրությունը բավարար լիազորություններ չէր տրամադրում Ազգային ժողովին իր օրենսդրական ու վերահսկողական դերակատարությունն ամբողջությամբ իրագործելու համար և խորհրդարանական փոքրամասնության համար օրենսդրական գործընթացում նշանակալի ձայնի իրավունք չի երաշխավորում:¹⁵

3. Ընտրված պաշտոնյաների կառավարելու արդյունավետ իշխանությունը

Հայաստանի ընտրված պաշտոնյաները կառավարելու լիարժեք իշխանություն ու լիազորություն են վայելում: Հայաստանի ազդեցիկ քաղաքական գործիչներից և ոչ մեկը (օլիգարխներ, բանակ կամ եկեղեցի) քաղաքական որոշումների կայացման գործընթացում վետոյի իրավունք չունի: Խորհրդարանը սահմանափակ կարողություններ ունի իր լիազորություններն արդյունավետորեն իրագործելու համար: Որպես արդյունք, օրինաստեղծ գործընթացում Կառավարությունը

¹⁵ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Վենետիկի Հանձնաժողովի փաստաթուղթ CDL-REF (2014թ.)033 էջ 13-14

ստանձնում է գլխավոր դերակատարությունը՝ Ազգային ժողովին շատ փոքր իրական իշխանություն թողնելով փոփոխել Կառավարության իրավական առաջարկները:¹⁶

Քաղաքացիական հասարակություն, զանգվածային լրատվամիջոցներ և մասնակցություն

Հայաստանը բազմազան ու ակտիվ քաղաքացիական հասարակություն ունի, որտեղ հասարակության լայն շերտի ոչ ֆորմալ խմբերն ավելի ու ավելի նշանակալի դերակատարություն են ունենում քաղաքային միջին խավի քաղաքացիական ակտիվությունը մոբիլիզացնելու գործընթացում: Հայաստանի զանգվածային լրատվամիջոցները աշխատում են առանց գրաքննության, իսկ իշխանությունները հանդուրժում են քննադատական ռեպորտաժները: Ինտերնետի ազատությունը հարգվում է: Միևնույն ժամանակ, հանրության վստահությունը քաղաքական գործընթացի նկատմամբ շարունակում է ցածր մնալ, ինչը հանգեցնում է քաղաքական մասնակցության ցածր մակարդակի: Քաղաքական մթնոլորտը բևեռացված է և բնութագրվում է ընդդիմության և իշխող կուսակցության միջև անկեղծ երկխոսության բացակայությամբ:

4. Քաղաքացիական հասարակության մասշտաբը և անկախությունը

Հայաստանը լավ զարգացած ու ակտիվ քաղաքացիական հասարակություն ունի: Արդարադատության նախարարության տվյալների համաձայն՝ 2014 թ.-ի դրությամբ Հայաստանում գրանցվել են 4000 հասարակական կազմակերպություններ, 800 հիմնադրամներ և 300 իրավաբանական անձանց միություններ, այնուամենայնիվ դրանց միայն 15-20 տոկոսն են ակտիվ: Վերջին տարիների ընթացքում բազմաթիվ ոչ ֆորմալ քաղաքացիական խմբեր ու շարժումներ են ձևավորվել՝ վճռականություն ու կարողություն ցուցաբերելով պաշտպանել քաղաքացիների իրավունքներն այնպիսի հարցերի շուրջ: Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ), այդ թվում՝ քաղաքական գործունեության մեջ ներգրավվածները, հիմնականում գործում են իշխանությունների ճնշումից ու սպառնալիքներից զերծ: Այնուամենայնիվ, 2013 թ.-ին և 2014 թ.-ին ոստիկանության և անհատների կողմից ոտնձգության որոշ դեպքեր գրանցվել են: Այս դեպքերը ոստիկանության ներքին հետաքննության առարկա են դարձել և որոշ դեպքերում հանգեցրել են կարգապահական տույժերի և քրեական հետապնդման կիրառմանը:

Վերջին տարիների ընթացքում Կառավարությունը քայլեր է ձեռնարկել ընդլայնել Հայաստանում քաղաքացիական հասարակության հետագա զարգացման հնարավորությունները՝ 2014 թ.-ին հաստատելով ՔՀԿ ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգը, որը կենտրոնանում է ՔՀԿ-ների համար իրավական դաշտի բարելավման, ՔՀԿ-ների ձեռնարկատիրական

¹⁶ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (2014թ.) Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական գործընթացի գնահատումը, էջ 8

գործունեության սահմանափակումները կրճատելու, առցանց գրանցման համակարգ ստեղծելու և դրանց կառավարման կառուցվածքում առավել մեծ ճկունություն ապահովելու վրա: Հայկական ՔՀԿ-ներն այժմ ակտիվորեն ներգրավված են Արդարադատության նախարարության կողմից մշակված ՀԿ-ների մասին օրենքի փոփոխությունների քննարկման գործընթացում՝ նպատակ ունենալով ապահովել առավել անկախություն և ճկունություն: ՔՀԿ-ների ֆինանսական կենսունակությունը չի բարելավվել և օտարերկրյա դոնորները շարունակում են գրանցված ՀԿ-ների մեծամասնության համար ֆինանսավորման հիմնական աղբյուրը լինել: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ների պետական ֆինանսավորումը 2012 թ.-ին և 2013 թ.-ին աճեց մինչև տարեկան մոտ 7 միլիարդ դրամ (18 միլիոն ԱՄՆ դոլար): Բիզնեսի ներկայացուցիչները Հայաստանում դժվարանում են բարեգործական նպատակով ֆինանսական միջոցներ նվիրաբերել հարկմանն ու հաշվետվությանն առնչվող բարդ բյուրոկրատական ընթացակարգերի պատճառով: Այնուամենայնիվ, բիզնեսների և ՔՀԿ-ների միջև գործընկերությունները բարելավվել են, հատկապես՝ առողջապահության, կրթության և սոցիալական քաղաքականության ոլորտներում:

5. Առանց գրաքննության աշխատող զանգվածային լրատվամիջոցների անկախությունն ու բազմակարծությունը

Հայաստանի զանգվածային լրատվամիջոցների բնապատկերը բազմազան է՝ ընդգրկելով 7 ազգային և 25 մարզային հեռուստաընկերություններ, ինչպես նաև ավելի քան 52 կաբելային ալիքներ: Մամուլը նույնպես լավ զարգացած է՝ 2013 թ.-ին շրջանառության մեջ ունենալով 72 թերթեր, այդ թվում՝ տաս օրաթերթեր և 28 մարզային լրագրեր: Այնուամենայնիվ, գործնականում զանգվածային լրատվամիջոցների անկախությունը և բազմակարծությունը շարունակում են սահմանափակ լինել: Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը չի ապահովում լրատվամիջոցները կարգավորող մարմնի (Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով) անկախությունը և հաշվետվողականությունը: Օրենքում սահմանված չեն այնպիսի դրույթներ, որոնք նախատեսում են քաղաքացիական հասարակության ներգրավումը Հանձնաժողովի անդամների ընտրության և նշանակման գործընթացում, իսկ մրցույթների ոչ բավարար թափանցիկությունը կանխում է հեռարձակման լիցենզիաների համար արդար մրցակցությունը: Հայաստանում լայնորեն տարածված է այն ընկալումը, որ հեռուստատեսությունը՝ տեղեկատվության հիմնական աղբյուրը, մեծապես վերահսկվում է պետության կողմից՝ այդպիսով փորձելով չեզոք տեսակետ ապահովել քաղաքական առանցքային խնդիրների մասին: Գործող օրենսդրությունը չի երաշխավորում լրատվամիջոցների սեփականության թափանցիկությունը: Վերջին տարիների ընթացքում թվային տեխնոլոգիաների գնալով աճող օգտագործումը հանգեցրել է բովանդակության բազմազանության ու բազմակարծության բարելավումներին, չնայած որ ինտերնետի ներթափանցումը շարունակում է ցածր մակարդակի վրա մնալ, հատկապես՝ գյուղական բնակավայրերում: Ինտերնետային լրատվամիջոցների ազդեցությունը

հասարակական ու քաղաքական գործընթացների վրա աճում է:¹⁷ 2012 թ.-ի խորհրդարանական ընտրություններին և 2013 թ.-ի նախագահական ընտրություններին ուղարկված միջազգային դիտորդների առաքելությունները դրական են գնահատել հայկական լրատվամիջոցների պարտականությունների կատարումը, այն է՝ պաշտոնական քարոզարշավի ընթացքում մասնակիցների ոչ-խտրական և անկողմնակալ լուսաբանումը:¹⁸

6. Քաղաքացիական և քաղաքական մասնակցության բազմաթիվ ուղիներ

Հայ ժողովրդին քաղաքական մասնակցության մի շարք ուղիներ են հասանելի, սակայն ժողովրդի փաստացի մասնակցությունը մնում է ցածր մակարդակի վրա, ինչը մասամբ պայմանավորված է քաղաքական գործընթացի և պետական հաստատությունների նկատմամբ մշտապես մեծ անվստահությամբ: Հայաստանում օրենսդրական գործընթացի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի գնահատումը հանրության մասնակցությունը օրինաստեղծ գործընթացում բնութագրել է որպես «աճող, բայց անարդյունավետ»:¹⁹ Օրենսդրական ողջ գործընթացում բացակայում է շահագրգիռ կողմերի հետ պատշաճ և բավարար խորհրդակցությունը՝ սկսած նախաօրենսդրական փուլից:²⁰ Այժմ ՔՀԿ-ներն արդյունքի հասնելու համար ավելի ակտիվորեն են համագործակցում միմյանց հետ:

ՔՀԿ-ները և ոչ պաշտոնական սոցիալական շարժումներն առանցքային դերակատարություն ունեն քաղաքական մասնակցության այլ ձևաչափերը մոբիլիզացնելու գործընթացում: 2012-2014 թթ.-ներին ՔՀԿ-ների շահերի պաշտպանության կարողությունները բարելավվել են, իսկ ՔՀԿ-ների ցանցերն ավելի հաջողակ էին հանրային քաղաքականության մեջ ներդրում ապահովելու մասով: ՔՀԿ-ների գործընկերությունները պետական կառույցների հետ այժմ ավելի ինստիտուցիոնալացված են (հանրային խորհուրդ, համատեղ աշխատանքային խմբեր)՝ հնարավորություն տալով ՔՀԿ-ներին մասնակցել որոշումների կայացման գործընթացում և խթանել օրենսդրական փոփոխությունները: Միննույն ժամանակ, 2013 թ.-ին ոչ պաշտոնական շարժումներն ակտիվորեն բողոքի ակցիաներ էին կազմակերպում, որոնցից առավել հայտնի օրինակներից մեկը քարոզում էր կանգնեցնել Երևանում քաղաքային տրանսպորտի ուղեվարձի թանկացումները: Դիտորդ քաղաքացիների կողմից հանրային առանցքային դերակատարություն ունեցավ ազգային և մունիցիպալ ընտրությունները մշտադիտարկելու գործընթացում. ավելի քան 27,000 դիտորդներ 54 ՀԿ-ներից հավատարմագրվեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:

¹⁷ Facebook-ի օգտատերերի թիվը Հայաստանում 2013 թ.-ին աճել է մինչև 362,000՝ 2012 թ.-ի 193,000-ի համեմատ:

¹⁸ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (2012թ.) Խորհրդարանական ընտրությունների մասին զեկույց, 2012 թ.-ի մայիսի 6, էջ 2

¹⁹ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (2014թ.) Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական գործընթացի գնահատումը, էջ 9

²⁰ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (2014թ.) Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական գործընթացի գնահատումը, էջ 6

7. Քաղաքական կուսակցություններ ձևավորելու ազատությունը և կազմակերպված ընդդիմության առկայությունը

Հայաստանի քաղաքական կուսակցությունները բավականին հայտնի են և ընդգրկում են ողջ քաղաքական սպեկտրը, սակայն քաղաքական գործունեության կենտրոնում ներկայացված են երկու ամենախոշոր խորհրդարանական կուսակցությունները: Որոշ կուսակցություններ ստեղծվել են Հայաստանի անկախությունից հետո, իսկ որոշներն էլ ձևավորվել են կոնկրետ անձնավորության շուրջ և, հետևաբար, առավել խոցելի են ցնցումների հանդեպ, եթե դրանց առաջնորդի ճակատագիրը փոխվի: Իշխող Հայաստանի Հանրապետական Կուսակցությունը, որի առաջնորդը Նախագահ Սերժ Սարգսյանն է, շարունակում է գերիշխել Հայաստանի քաղաքական համակարգում: Հանրապետական կուսակցության ներկայացուցիչը զբաղեցնում է նախագահական պաշտոնը, կուսակցությունը ղեկավարում է Վարչապետի գրասենյակը և խորհրդարանական մեծամասնություն է կազմում Ազգային Ժողովում: 2012 թ.-ի խորհրդարանական ընտրություններում հիմնական ընդդիմադիր կուսակցությանը՝ Հայ Ազգային Կոնգրեսին (ՀԱԿ) հաջողվեց մուտք գործել խորհրդարան: Մինևույն ժամանակ ո՛չ ՀԱԿ-ը, և ո՛չ էլ Հայաստանի երկրորդ ամենախոշոր կուսակցությունը՝ «Բարգավաճ Հայաստանը», 2013 թ.-ի նախագահական ընտրություններում թեկնածուներ չառաջադրեցին՝ այդպիսով թուլացնելով իրենց դիրքերն ընտրողների շրջանում, որոնք սահմանափակ ընտրությամբ մնացին:

Քաղաքական մթնոլորտը շարունակում է բևեռացված լինել և բնութագրվում է ընդդիմության և իշխող կուսակցության միջև փոխադարձ անվստահությամբ և անկեղծ երկխոսության բացակայությամբ: Խորհրդարանում ընդդիմադիր կուսակցությունների դերակատարությունը դեռևս սահմանափակ է: Օրենսդրական գործընթացի ԵԱԿՀ/ԺՀՄԻԳ գնահատումը նշել է, որ «օրինաստեղծ գործընթացի ամենակարևոր մարտահրավերներից մեկը օրենքների ստեղծման ուղիների տարրական համընդհանուր ընկալման շուրջ Կառավարության և ընդդիմության միջև համաձայնության հիմնարար բացակայությունն է»²¹: Օրենքների նախագծերը սովորաբար մշակվում են Կառավարության կողմից, որից հետո հեշտությամբ ընդունվում են Ազգային Ժողովում իր մեծամասնության կողմից՝ առանց ընդդիմության հետ պատշաճ խորհրդակցությունների: Սա տպավորություն է ստեղծում, որ ընդդիմադիր կուսակցությունները մի կողմ են քաշված և ի վիճակի չեն որևէ էական ազդեցություն ունենալ օրենսդիր գործընթացի վրա: Կոռուպցիայի դեմ Պետությունների Խմբի (GRECO) համաձայն՝ Հայաստանը նշանակալի բարեփոխումներ է իրականացրել քաղաքական ֆինանսավորման թափանցիկության հետ կապված մտահոգություններին անդրադառնալու համար, այդ թվում ընդլայնել է ընտրական քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկությունը և դրա հրապարակումը, ինչպես նաև նորաստեղծ մշտական «Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության» միջոցով

²¹ ԵԱԿՀ/ԺՀՄԻԳ (2014թ.) Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական գործընթացի գնահատում, էջ 7-8

ընդլայնել է վերահսկողությունը: Այնուամենայնիվ, այս վերահսկողության արդյունավետությունը պետք է գործնականում բարելավվի:²²

Օրենքի գերակայությունը և արդարադատության հասանելիությունը

Միջազգային կազմակերպությունները օրենքի գերակայության մեջ թերացումները մշտապես նշել են որպես դեպի գործող ժողովրդավարություն Հայաստանի անցման հիմնական մարտահրավերը: Եվրոպայի Խորհուրդը, ԵՄ-ն և ԵԱՀԿ-ն բոլորն էլ աջակցել են Հայաստանի արդարադատության բնագավառի բարեփոխումներին և դատավորների վերապատրաստմանը: Ներկայումս Հայաստանն իրագործում է արդարադատության համակարգի բարեփոխումների երրորդ փուլը՝ 2012-2016 թթ.-երի Իրավական ու Դատական Բարեփոխումների Ռազմավարական Ծրագրի հիման վրա: 2015թ. Սահմանադրական փոփոխությունները ամրապնդում են դատական համակարգի անկախությունը Եվրոպայի Խորհրդի Վենետիկի հանձնաժողովի առաջարկություններին համահունչ:²³

Այնուամենայնիվ, Հայաստանը դեռևս ամբողջությամբ չի բավարարում դատական համակարգի անկախությունը երաշխավորելու, դատական համակարգում և ավելի լայն իմաստով՝ պետական հատվածում կոռուպցիայի դեմ պայքարելու և օրենքների պատշաճ իրականացումն ապահովելու նպատակներին:

8. Օրենքի գերակայությունը

Վերջին տարիների ընթացքում հայկական իշխանությունները վերանայել են իրենց հիմնական օրենսդրության գերակշիռ մասը՝ այն միջազգային չափանիշներին համահունչ դարձնելու և անհամապատասխանությունները վերացնելու նպատակով: Մշակվել են Քրեական և Քրեական Դատավարության նոր օրենսգրքերը, որոնք ուղղված են պատժամիջոցների համաչափության սկզբունքի ավելի լավ ներառմանը և ազատագրկման այլընտրանքների ապահովմանը: Վարչական իրավախախտումների օրենսգիրքը նույնպես փոփոխվում է: Մինչ օրենքների որակը բարելավվում է, դրանց հետևողական իրականացումը շարունակում է մարտահրավեր մնալ: Հայաստանում օրենսդրական գործընթացի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի գնահատումը նշում է, որ օրենքների ոչ բավարար կատարումը, պարզվում է, լայն տարածում ունեցող խնդիր է հանդիսանում:²⁴ Նման իրավիճակը կարելի է վերագրել հետևյալ գործոններին: Առաջին հերթին, օրենսդրության որակը հաճախ ցածր է, քանի որ համակարգը գերբեռնված է (տարեկան ավելի քան 150 օրենք) և սահմանափակ ռեսուրսներ ունի, ինչը հանգեցնում է օրենսդրության հաճախակի փոփոխությունների:

²² GRECO (2012թ.) «Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը», Հայաստանի գծով համապատասխանության զեկուլց

²³ Եվրոպայի Խորհրդի Վենետիկի հանձնաժողովի փոփոխությունների նախագծի երկրորդ նախնական եզրակացության, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8,9,11 -16, գլուխների վերաբերյալ, սեպտեմբեր 2015 թ. [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2015\)019-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)019-e).

²⁴ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (2014թ.) Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական գործընթացի գնահատումը

Երկրորդ, բացակայում է օրենսդրության վավերականության անկախ դատաիրավական վերանայումը, ինչի արդյունքում այնպիսի ենթաօրենսդրական ակտեր են ընդունվում, որոնք հակասում են այն օրենքներին, որոնք դրանք կոչված են իրականացնել: Երրորդ, դատարանների՝ որպես օրենքների իրականացումը երաշխավորող անկախ մարմնի նկատմամբ հանրային վստահությունը դեռևս շատ ցածր է:

9. Դատական համակարգի անկախությունը

1995 թ.-ին ընդունված Սահմանադրությամբ Հայաստանում եռաստիճան դատական համակարգ է սահմանվում, որը բաղկացած է առաջին ատյանի դատարաններից, վերաքննիչ դատարաններից և վճռաբեկ դատարաններից²⁵:

Նույն կառուցվածքը պահպանվում է Սահմանադրական փոփոխություններով, ինչը կամրապնդի դատական համակարգի անկախությունը՝ համահունչ Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի առաջարկություններին²⁶:

Ինը անդամներից բաղկացած Սահմանադրական Դատարանը պատասխանատու է սահմանադրական արդարադատության վարչարարության համար, ինչը ներառում է հանրաքվեներին ու ընտրություններին առնչվող վեճերը և քաղաքական կուսակցության գործունեությունը դադարեցնելու կամ արգելելու մասին որոշումները: Անհատներն ու Մարդու Իրավունքների Պաշտպանն իրավասու են մարդու իրավունքներին առնչվող հայցեր ներկայացնել Սահմանադրական Դատարան: Արդարադատության Խորհուրդը (ԱԽ) այն մարմինն է, ում հանձնարարված է դատավորներ ու դատարանների նախագահներ ընտրել, ինչպես նաև իրականացնել դատավորների առաջխաղացումը և կարգապահությունը²⁷:

Հայաստանի Սահմանադրությունը և օրենսդրությունը նախատեսում են դատավորների անկախությունը: Դատավորների անկախության ինստիտուցիոնալ երաշխիքների ապահովումը ամրապնդվել է 2015թ. Սահմանադրական փոփոխություններով:

Այնուամենայնիվ, ԵԽ-ի Մարդու Իրավունքների Հանձնակատարը մտահոգություն հայտնեց գործնականում դատական համակարգի անկախության բացակայության մասին պնդող հարատև հայտարարությունների վերաբերյալ: Նման հայտարարություններ են հնչեցնում ինչպես արտաքին դերակատարները, օրինակ՝ կենտրոնական ու տեղական մակարդակներում գործադիր իշխանության

²⁵ Հայաստանում գործում է ընդհանուր իրավասության տասնվեց առաջին ատյանի դատարան՝ յոթը Երևանում և ինը մարզերում: Գործում են նաև երեք Վերաքննիչ Դատարաններ (Քաղաքացիական, Քրեական և Վարչական) և բարձրագույն ատյանի դատարանը՝ Վճռաբեկ Դատարանը:

²⁶ Եվրոպայի Խորհրդի Վենետիկի հանձնաժողովի փոփոխությունների նախագծի երկրորդ նախնական եզրակացության, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8,9,11 -16, գլուխների վերաբերյալ, սեպտեմբեր 2015 թ. [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2015\)019-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)019-e).

²⁷ Արդարադատության նախարարը նույնպես ներգրավվում է դատավորների դեմ կարգապահական վարույթներում, ինչը անհամատեղելի է դատական անկախության հետ: ԵԽ (2014թ.)՝ Մարդու իրավունքների Հանձնակատարի զեկույցը Հայաստան իր այցից հետո, էջ 11, ծանոթագրություն 18

կրողները (այդ թվում՝ օրենքների կիրարկման գործակալությունները), այնպես էլ դատական համակարգի ներքին դերակատարները, մասնավորապես՝ բարձր ատյանի դատավորները:²⁸ 2013 թ.-ին Հայաստանի Մարդու Իրավունքների Պաշտպանը արդար դատավարության իրավունքի մասին հատուկ զեկույց հրապարակեց, որն անդրադառնում էր Վճռաբեկ Դատարանի կողմից առանձին դատավորների նկատմամբ գործադրված ճնշումների բազմաթիվ դեպքերին: 2014 թ.-ի մարտին Վենետիկի Հանձնաժողովը և Եվրոպայի Խորհրդի Մարդու Իրավունքների Տնօրինությունը համատեղ կարծիք հրապարակեցին, որն անդրադառնում էր բարձր ատյանի դատարանների կողմից ավելի ցածր ատյանի դատարանների հետ ոչ պատշաճ և ոչ սովորական միջամտությունների մասին անընդհատ ստացվող հաղորդագրություններին:²⁹

10. Կառավարությունը և քաղաքացիները հավասարապես ենթարկվում են օրենքի պահանջներին

Կառավարությունը և քաղաքացիները հավասարապես ենթարկվում են օրենքի պահանջներին, թեև շատ քիչ դեպքեր են գրանցվել, երբ պաշտոնյաները պատասխանատվության են ենթարկվել կոռուպցիայի և այլ հանցագործությունների համար: Ենթադրվում է, որ կոռուպցիան տարածված է նաև ոստիկանության համակարգում: Կառավարությունը ոստիկանության համակարգի բարեփոխումը ներառել է իր գերակայությունների ցանկում՝ հանգեցնելով ոստիկանության ուժերի նկատմամբ հանրային վստահության հաղորդվող աճի: Ոստիկանության գործելակերպերը բարելավելուն ուղղված հետագա քայլերն ինտեգրվել են Մարդու Իրավունքների Գործողությունների Ազգային Ծրագրում: Այնուամենայնիվ, ոստիկանության նկատմամբ բողոքների քննման ու վերահսկման անկախ մեխանիզմի ներդրման մասով շատ փոքր գործնական առաջընթաց է գրանցվել: Այսպիսի մեխանիզմի ներդրումն անհրաժեշտ կլինի ոստիկանությունն ամբողջովին քաղաքացիական վերահսկողության ներքո մտցնելու համար: Ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմի և աշխատանքային ընթացակարգերի մասին Կառավարության 2012թ.-ի դեկտեմբերի որոշման համաձայն քաղաքացիական հասարակության հինգ կազմակերպություններ 2015 թ.-ին ընդգրկվել են ՀՀ Ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմում:

11. Կոռուպցիան կանխելու արդյունավետ քաղաքականություններ և ինստիտուտներ

Հայաստանը ներդրել է կոռուպցիայի դեմ պայքարելու անհրաժեշտ իրավական ու վարչական մեխանիզմը. այնուամենայնիվ, կոռուպցիան դեռևս էական մարտահրավեր է հանդիսանում Հայաստանի քաղաքական ու տնտեսական անցման համար: 2014 թ.-ին *Transparency International*-ի Կոռուպցիայի Ընկալման Համաթվում Հայաստանը զբաղեցրել է 94-րդ տեղը՝ գնահատված 175 երկրների

²⁸ ԵԽ (2014թ) Մարդու իրավունքների Հանձնակատարի զեկույցը Հայաստան իր այցից հետո, էջ 9

²⁹ Վենետիկի Հանձնաժողովի և Եվրոպայի Խորհրդի Մարդու Իրավունքների Տնօրինության համատեղ կարծիքը Հայաստանի Դատական Օրենսգիրքը փոփոխելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ (2014թ.), պարբերություն 13

շարքում: *Transparency International*-ի կողմից 2013 թ.-ին Կոռուպցիայի Համաշխարհային Բարոմետրի համար անցկացրած հետազոտության համաձայն՝ Հայաստանում հարցվածների 69 տոկոսը դատական համակարգը համարում էր կոռումպացված կամ չափազանց կոռումպացված, իսկ 18 տոկոսը նշում էր, որ իրենք առնվազն մեկ անգամ կաշառել են դատարանի պաշտոնյաներին: Կաշառքների ու նվերների միջոցով դատավորների վրա ոչ պատշաճ ազդեցություն գործելը, թեև օրենքով արգելված լինելուն, արդեն իսկ լայնորեն հրապարակվել է, այդ թվում նաև 2013 թ.-ին Մարդու Իրավունքների Պաշտպանի հրապարակած հատուկ զեկույցում:³⁰ Այն նկարագրում է կոռուպցիայի մեխանիզմները և բացահայտում է, որ կոռուպցիան ազդում է դատական բոլոր աստիճանների վրա:

2014 թ.-ին Կառավարությունը հաստատեց կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգը, որի ուշադրության կենտրոնում են չորս ոլորտներում իրականացվելիք գործողությունները. կրթություն, պետական եկամուտներ, ոստիկանություն և առողջապահություն: Դա հանգեցրեց ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի մշակմանը և նախատեսեց քաղաքացիական հասարակության մասնակցությունը: Բացի այդ, Հայաստանի Կառավարությունը որոշակի գործնական քայլեր ձեռնարկեց կոռուպցիայի հնարավորությունները սահմանափակելու համար: Կառավարությունը շատ ծառայությունների համար էլ-կառավարման համակարգ ներդրեց և շարունակեց «կարգավորիչ գիլյոտինի» զարգացումը: Բարձրաստիճան պաշտոնյաների համար նախատեսված ակտիվների հայտարարագրման ընթացակարգերը համապատասխանեցվեցին եվրոպական լավագույն փորձին: Բարձրաստիճան պաշտոնյաների համար Էթիկայի Հանձնաժողով հիմնադրվեց, սակայն անհրաժեշտ է ամրապնդել դրա մանդատն ու ընթացակարգերը՝ արդյունավետությունն ու վստահելիությունը բարձրացնելու նպատակով: Ի վերջո, GRECO-ն առաջընթաց է արձանագրել քաղաքական ֆինանսավորմանն առնչվող ֆինանսական խախտումներին անդրադառնալու գործընթացում:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ

2013 թ.-ին Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի հայկական նախագահությունը մարդու իրավունքների եվրոպական չափանիշների ամրապնդումը հռչակեց որպես իր առաջնային գերակայություններից մեկը: Սա խթան հանդիսացավ Հայաստանի համար մարդու իրավունքների իր սեփական քաղաքականությունը բարելավելու համար: 2014 թ.-ին հայկական իշխանությունները ընդունեցին 2014-2016 թթ.-երի Մարդու Իրավունքների Ազգային Գործողության ծրագիրը՝ հիմք ընդունելով 2012 թ.-ին ընդունված Մարդու Իրավունքների Պաշտպանության Ազգային Ռազմավարությունը: Գործողությունների Ծրագիրը համապարփակ փաստաթուղթ է, որը նախատեսում է սահմանված ժամանակահատվածներում հատուկ միջոցառումների իրականացումը: Միջազգային հանրությունը ողջունեց այս քայլը, բայց կոչ արեց Հայաստանի Կառավարությանը մի շարք բնագավառներում էլ ավելի ամուր քայլեր ձեռնարկել, այդ թվում՝ պայքարել խտրականության դեմ և

³⁰ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը Մարդու իրավունքների մասին (2013թ.)

արդյունավետորեն հետաքննել խոշտանգումներն ու վատ վերաբերմունքը:³¹ 2015թ. Սահմանադրական բարեփոխումները ամրապնդել և ընդլայնել են Հայաստանի քաղաքացիների հիմնարար իրավունքների և ազատությունների երաշխիքների պաշտպանությունը:

³¹ Մարդու իրավունքների Գործողությունների Ծրագիրը գործարկելու մասին համատեղ հայտարարություն (տե՛ս ԵԽ (2014թ)՝ Մարդու իրավունքների Հանձնակատարի զեկույցը Հայաստան իր այցից հետո, էջ 6)

12. Խոսքի, տեղեկատվության, կրոնի, խղճի, շարժումների, միավորումների, հավաքների և մասնավոր սեփականության ազատությունը

Հայաստանի Սահմանադրությունը քաղաքացիներին տրամադրում է Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայով ճանաչված բոլոր հիմնարար իրավունքներն ու ազատությունները, այնուամենայնիվ այս իրավունքներից որոշները գործնականում հետևողականորեն չեն պահպանվում: Ուստի Սահմանադրական Բարեփոխումները առաջնային գերակայությունների շարքում ներառում են հիմնարար իրավունքներն ու ազատությունները երաշխավորող սահմանադրական մեխանիզմների բարելավումը:³²

Կառավարությունն ընդհանուր առմամբ հարգում է միավորվելու ազատության, հավաքների ազատության և խոսքի ազատության սկզբունքները: 2014 թ.-ին ՀԿ-ների գրանցման գործընթացը պարզեցվել է, իսկ իշխանությունների կողմից չլիազորված հավաքների թիվը նվազել է: Չանգվածային լրատվամիջոցներում և ինտերնետում պետական պաշտոնյաների քննադատությունն ընդհանուր առմամբ հանդուրժվում է, իսկ ինտերնետի օգտագործման սահմանափակումներ չկան: Օրենքով պահանջվում է հրապարակել Կառավարության Գործողությունների Տարեկան Ծրագրի մասը կազմող բոլոր օրենքների ու կառավարության որոշումների նախագծերը: Կառավարությունն ընդհանուր առմամբ հարգում է տեղեկատվության ազատության իրավունքը: Հայաստանում դեռևս որոշ մարտահրավերներ կան կրոնական ազատությունը երաշխավորելու մասով: Դա կարող է մասամբ բացատրվել Հայ Առաքելական Եկեղեցու գերիշխող դիրքով, որը միավորում է երկրի հավատացյալների ավելի քան 95 տոկոսին: Այնուամենայնիվ, վերջերս ԵԽ Մարդու Իրավունքների Հանձնաժողովը գնահատեց հայկական իշխանությունների ջանքերը պարտադիր զինվորական ծառայությունից զիտակցված հրաժարման իրավունքի վաղեմի խնդիրն արդյունավետորեն լուծելու ուղղությամբ՝ թույլ տալով որոշ կրոնների հետևորդներին պետական ծառայության այլ ձևեր իրականացնել և խուսափել քրեական հետապնդումից:

13. Կանանց, էթնիկ և այլ փոքրամասնությունների քաղաքական ներգրավվածությունը

Սահմանադրությունը նախատեսում է հավասարություն իր քաղաքացիների միջև: Այնուամենայնիվ, մինչ օրս խտրականության դեմ պայքարի ավելի մանրամասն օրենք դեռ չի ընդունվել, չնայած Մարդու Իրավունքների Պաշտպանի գրասենյակը 2012 թ.-ից ի վեր աշխատել է այդ օրենսդրության նախագծի մշակման վրա՝ խորհրդակցելով միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: **Կանայք** Հայաստանի քաղաքական գործընթացում և քաղաքական բարձրաստիճան պաշտոններում բավարար չափով ներկայացված չեն: 131 պատգամավորներից միայն 14-ն են կին, իսկ Կառավարությունում 18 նախարարներից միայն երկուսն են կին: Կին մարզպետեր կամ քաղաքապետեր չկան: 2014 թ.-ի իր այցի ընթացքում ԵԽ-ի

³² Վենետիկի Հանձնաժողով (2014թ.), Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Բարեփոխումների հայեցակարգի նախագծի մասին կարծիք, էջ 4

Մարդու Իրավունքների Հանձնակատարը եզրակացրեց, որ անհրաժեշտ է շարունակել էական ջանքեր գործադրել, որպեսզի ապահովել կանանց հավասար կարգավիճակը հասարակության մեջ և պայքարել սեռի հիման վրա խտրականության և կողմնակալության դեմ: Կառավարությունը որոշ քայլեր է ձեռնարկել՝ գենդերային քաղաքականություններ ընդունելով և 2013 թ.-ին հաստատելով Տղամարդկանց և կանանց համար հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների մասին օրենքը: Այնուամենայնիվ, դեռ շատ աշխատանք է պահանջվում դրանք գործնականում ներդնելու համար՝ այդպիսով մեծացնելով կանանց մասնակցությունը հասարակական ու քաղաքական կյանքում: Կառավարությունն ընդունել է նաև 2011-2015 թթ.-երի Գենդերային Քաղաքականության Ռազմավարական Գործողությունների Ծրագիրը: Ինչ վերաբերում է քաղաքական ներկայացուցչությանը և որոշումների կայացմանը, ծրագիրը նախատեսում է ապահովել որոշումներ կայացնող պաշտոնների 30 տոկոսում կանանց մասնակցությունը, վերապատրաստումների միջոցով բարձրացնել քաղաքացիական ծառայողների գենդերային զգայունությունը և մեծացնել կանանց առաջնորդական հմտությունները: **Էթնիկ փոքրամասնությունները** պատշաճ կերպով ներկայացված չեն ժողովրդավարական գործընթացում: Ժամանակակից հայկական հասարակությունը էթնիկորեն միատարր է, որտեղ բնակչության ավելի քան 98 տոկոսն իրենց հայ են համարում: Էթնիկ փոքրամասնությունները, որոնք կազմում են բնակչության մյուս երկու տոկոսը, սահմանափակ քաղաքական ներկայացուցչություն ունեն, իսկ ամենախոշոր փոքրամասնությունը՝ Եզդիները, Ազգային Ժողովում ներկայացուցիչ չունեն:

14. Հետապնդումներից, ահաբեկումներից և խոշտանգումներից ազատությունը

ԵԽ-ի Մարդու Իրավունքների Հանձնակատարի զեկույցի համաձայն՝ լուրջ մտահոգություն են հանդիսանում ոստիկանության և օրենքի կիրարկման այլ գործակալությունների կողմից խոշտանգումների և վատ վերաբերմունքի մասին անընդհատ զեկույցները և դրանց հետ կապված անպատժելիության խնդիր:³³ Հանձնակատարը կոչ է արել հայկական իշխանություններին Քրեական Օրենսգրքում փոփոխել «խոշտանգում» հասկացության սահմանումն այնպես, որպեսզի այն համապատասխանի միջազգային չափանիշներին՝ նպատակ ունենալով ապահովել խոշտանգման ակտերի պատշաճ որակումը և դրանց պատիժը, ինչպես նաև օրենքում և գործնականում ընդլայնել խոշտանգումներից ու վատ վերաբերմունքից պաշտպանության երաշխիքները: Ներկայումս Մարդու Իրավունքների Ազգային Գործողությունների Ծրագիրը չի դիտարկում համապատասխանությունը ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ Կոնվենցիայի պահանջներին: Նախորդ ռազմավարության ժամանակահատվածում ընդամենը սահմանափակ առաջընթաց է գրանցվել 2008 թ.-ի նախագահական ընտրություններից հետո կազմակերպված ցույցերում տեղի ունեցած մահվան դեպքերի հետաքննության գործընթացում: Նման իրավիճակն անպատժելիության ընկալում է ձևավորում և նպաստում է քաղաքական բևեռացմանն ու քաղաքական գործընթացի հանդեպ հանրության անվստահությանը: Վերջին տարիների

³³ Եվրոպայի Խորհուրդ. Մարդու իրավունքների Հանձնակատարի զեկույցը Հայաստան իր այցից հետո (2014թ.), էջ 4

ընթացքում մարդու իրավունքների ջատագովներն ու լրագրողները ժամանակ առ ժամանակ բախվել են ահաբեկումների, ոտնձգությունների, սպառնալիքների ու բռնության: Որոշ դեպքերում այս իրավիճակներն ամբողջությամբ և թափանցիկ ձևով չեն հետաքննվել:³⁴

³⁴ Եվրոպական Հանձնաժողով (2014թ.) Եվրոպական Հարևանության Քաղաքականության իրականացումը Հայաստանում, 2013 թ.-ի առաջընթաց և առաջարկվող գործողություններ, էջ 6,ԵՄ Մարդու իրավունքների Հանձնակատարի զեկույցը Հայաստան իր այցից հետո

ՀԱՎԵԼՎԱԾ 2 – ԸՆՏՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հայաստան

	2008	2009	2010	2011	2012	2013	2014
	<i>Նախնական</i>						
Արդյունք և Ցախսեր	<i>(Տոկոսային փոփոխությունն իրական արտահայտմամբ)</i>						
ՀՆԱ	6.9	-14.1	2.2	4.7	7.2	3.3	3.5
Մասնավոր սպառում	5.4	-4.5	3.8	2.4	9.1	0.9	0.5
Հանրային սպառում	-1.9	-1.2	3.9	1.9	-1.4	7.6	6.4
Համախառն ֆիքսված կապիտալի ձևավորում	11.9	-25.4	-2.9	-11.7	-1.9	-7.0	-2.4
Ապրանքների և ծառայությունների արտահանում	-13.1	-10.4	26.5	14.7	8.4	8.6	6.4
Ապրանքների և ծառայությունների ներկրում	7.3	-19.2	12.8	-1.4	-2.8	-2.1	-1.0
Համախառն արդյունաբերական արտադրանք	1.7	-7.6	9.7	13.9	8.8	6.9	2.7
Աշխատանքի շուկա *	<i>(Տոկոսային փոփոխություն)</i>						
Միջին ամսական համախառն վարձատրությունները տնտեսության մեջ (տարեկան միջինը)	17.8	9.9	6.9	5.3	4.7	4.1	8.2
Աշխատավարձի իրական աճը տեղական արժույթով	8.0	6.2	-1.2	-2.2	2.0	-1.6	5.1
	<i>(Աշխատուժի տոկոսով)</i>						
Գործազրկության մակարդակը (տարեկան միջինը)	16.4	18.7	19.0	18.4	17.3	16.2	17.6
Գներ	<i>(Տոկոսային փոփոխություն)</i>						
Սպառողական գներ (տարեկան միջին)	8.9	3.4	8.2	7.7	2.6	5.8	3.0
Սպառողական գներ (տարեվերջ)	5.2	6.5	9.5	4.7	3.2	5.6	4.6
4.64.62 արկղային ցուցանիշներ	<i>(ՀՆԱ-ի տոկոսով)</i>						
Կառավարության ընդհանուր հաշվեկշիռ	-0.7	-7.6	-5.0	-2.8	-1.4	-1.6	-1.9
Կառավարության ընդհանուր եկամուտներ	22.0	22.0	22.6	23.3	22.2	23.5	23.6
Կառավարության ընդհանուր ծախսեր	22.7	29.6	27.6	26.1	23.6	25.1	25.5
Կառավարության ընդհանուր պարտք	16.4	40.4	39.9	42.2	44.1	40.9	43.6
Դրամային և ֆինանսական հատվածներ	<i>(Տոկոսային փոփոխություն)</i>						
Փողի զանգված (տարեվերջ)	2.4	15.1	11.8	23.7	19.5	14.8	8.3
Մասնավոր հատվածի վարկավորում (տարեվերջ)	50.1	18.2	26.8	33.9	25.5	11.4	21.2
	<i>(Ընդհանուր վարկերի տոկոսով)</i>						
Չսպասարկվող (ժամկետանց) վարկերի հարաբերակցությունը	4.3	4.9	3.0	3.4	3.7	4.0	6.2
Տոկոսադրույքեր և արժույթի փոխանակման դրույքեր	<i>(Տարեկան տոկոսով, տարեվերջ)</i>						
Տեղական արժույթով ավանդների տոկոս**	7.7	8.1	8.8	10.3	10.1	10.4	12.5
Արտարժույթով ավանդների տոկոս	6.6	6.2	5.3	6.1	6.5	5.5	5.3
Տեղական արժույթով վարկավորման տոկոս	16.5	18.8	18.9	17.7	16.0	15.0	16.2
Արտարժույթով վարկավորման տոկոս	13.8	13.2	12.3	12.2	10.9	10.5	9.8
Դրամական շուկայի / Ձեռքի / Քաղաքականության տոկոսադրույքներ	7.25	5.00	7.25	8.00	8.00	7.75	8.50
	<i>(Դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց)</i>						
Փոխարժեք (տարեվերջ)	307	378	363	386	404	406	475
Փոխարժեք (տարեկան միջին)	306	363	374	373	402	410	416
Արտաքին հատված	<i>(ՀՆԱ-ի տոկոսով)</i>						
Ընթացիկ հաշիվ	-15.0	-16.5	-13.6	-10.4	-10.0	-7.6	-7.3
Առևտրային հաշվեկշիռ	-24.1	-24.2	-22.3	-20.8	-19.9	-18.8	-17.7
Ապրանքների արտահանում	9.5	8.9	12.9	14.1	14.3	14.7	14.6
Ապրանքների ներկրում	-33.6	-33.1	-35.2	-34.9	-34.2	-33.5	-32.2
Օտարերկրյա ուղղակի ներդրումներ	7.9	8.2	5.6	4.3	4.5	3.2	3.3
Համախառն պահուստներ, բացառությամբ ոսկու (տարեվերջ)	12.0	23.2	20.1	19.1	16.9	20.2	12.8
Արտաքին պարտքի պաշար	29.7	58.2	68.1	73.1	72.3	78.5	73.3
Պետական արտաքին պարտք	13.5	35.9	37.1	36.6	36.6	36.4	33.8
Մասնավոր արտաքին պարտք	16.2	22.3	31.0	36.6	35.7	42.1	39.6
	<i>(Ապրանքների և ծառայությունների ներկրման ամիսներով)</i>						
Համախառն պահուստներ, բացառությամբ ոսկու (տարեվերջ)	3.3	6.1	4.9	4.7	4.2	5.0	3.3S
Հուշագրի կետեր	<i>(Միավորներ, ինչպես նշված է)</i>						
Բնակչություն (տարեվերջ, միլիոն)	3,087	3,066	3,045	3,028	3,024	3,022	3,014
ՀՆԱ (միլիարդ դրամով)	3,568	3,142	3,460	3,778	4,266	4,556	4,843
ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	3,606	2,666	2,844	3,363	3,512	3,680	3,864
ՀՆԱ-ում արդյունաբերության մասանաբաժինը (տոկոս)	20.7	21.3	23.8	26.4	26.3	27.3	26.7
ՀՆԱ-ում գյուղատնտեսության մասանաբաժինը (տոկոս)	17.6	17.6	18.4	21.0	19.7	20.2	20.5
ՕՈՒՆ (միլիոն ԱՄՆ դոլար)	925	710	521	437	481	353	388
Արտաքին պարտք - ռեզերվներ (միլիոն ԱՄՆ դոլար)	2,055	3,033	4,441	5,485	5,874	6,479	7,047
Արտաքին պարտք / Ապրանքների և ծառայությունների արտահանում (տոկոս)	178.1	323.0	285.3	280.5	263.0	276.6	257.2
Փողի զանգված (M2, տարեվերջ, ՀՆԱ-ի տոկոսով)	19.8	25.9	26.3	29.8	31.6	33.9	34.6

* Թվերը չեն ներառում արտասահմանում աշխատող արտագաղթողներին

** Ավանդների և վարկերի տոկոսադրույքների թվերը ներառում են ավանդների միջին դրույքները (15 օրից մինչև 1 տարի)

ՀԱՎԵԼՎԱԾ 3 – ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շուկայի կառուցվածք	Շուկային աջակցող հաստատություններ	Հիմնական մարտահրավերներ
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՏՎԱԾ		
Ագրոքիզնես		
<i>Միջին</i>	<i>Միջին</i>	<ul style="list-style-type: none"> ▪ աջակցել գյուղատնտեսական ընկերությունների ֆորմալացմանը՝ ֆինանսավորման հասանելիությունը մեծացնելու նպատակով; ▪ զարգացնել տրանսպորտի ենթակառուցվածքը և լոգիստիկան՝ հայկական ապրանքների ծախսերը կրճատելու և դրանց մրցունակությունը բարձրացնելու նպատակով
Արտադրություն և Ծառայություններ		
<i>Միջին</i>	<i>Փոքր</i>	<ul style="list-style-type: none"> ▪ հիմնվելով վարչարարական վերջին բարեփոխումների վրա՝ խթանել դրանց արդյունավետությունն իրականացման մեջ և շարունակել հետագա ապակարգավորումը; ▪ շարունակել բարելավել մրցակցության քաղաքականությունը՝ ամրապնդելով կարգավորող մարմնի իշխանությունը; և ▪ ընդլայնել մաքսային ընթացակարգերի թափանցիկությունն ու արդարությունը
Անշարժ գույք		
<i>Խոշոր</i>	<i>Միջին</i>	<ul style="list-style-type: none"> ▪ մեծացնել նորարար շինարարական տեխնոլոգիաների ներթափանցումը և բարելավել շինարարության չափանիշները, այդ թվում՝ էներգաարդյունավետությունը, կայունությունը և անվտանգությունը; և ▪ մեծացնել ժամանակակից առևտրային գույքի առաջարկը (բացառությամբ բնակելի սեգմենտի)
S2S		
<i>Միջին</i>	<i>Միջին</i>	<ul style="list-style-type: none"> ▪ շարունակել զարգացնել հեռահաղորդակցությունների ենթակառուցվածքը (լայնաշերտ ինտերնետ); ▪ շարունակել զարգացնել կարգավորող հենքը (մրցակցային երաշխիքներ ներդնել); և ▪ ամրապնդել կարգավորող մարմնի անկախությունը

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Բնական պաշարներ

<i>Միջին</i>	<i>Միջին</i>	<ul style="list-style-type: none"> ▪ ավարտել փոխանցման և բաշխման բիզնեսների տարանջատումը և ապահովել երրորդ կողմերի թափանցիկ ու ոչ խտրական մուտքը բնական գազի փոխանցման ցանց; ▪ ամրապնդել էներգետիկ ոլորտը կարգավորող մարմնի անկախությունը (ՀԾԿՀ); ▪ մեծացնել արդյունահանման գործունեություններից ստացվող եկամուտի հոսքերի թափանցիկությունը; և ▪ հանրարդյունահանման հարստացման ու վերամշակման օբյեկտներ ստեղծել՝ հանքարդյունահանման մատակարարման շղթայի շունչը մեծացնելու նպատակով
--------------	--------------	---

Կայուն էներգետիկա

<i>Միջին</i>	<i>Միջին</i>	<ul style="list-style-type: none"> ▪ ամրապնդել էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ծրագրեր իրականացնելու ինստիտուցիոնալ կարողությունները; ▪ զարգացնել էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ծրագրեր մշակելու տեխնիկական կարողությունները; և ▪ մեծացնել էներգաարդյունավետության լավագույն գործելակերպերի մասին իրազեկվածությունը
--------------	--------------	--

Էլեկտրաէներգիա

<i>Միջին</i>	<i>Միջին</i>	<ul style="list-style-type: none"> ▪ սակագների սահմանման մեթոդոլոգիայի շարունակական բարեփոխումների միջոցով բարելավել գնային ազդակները; ▪ կրճատել պետական գերակայությունը; և ▪ բարելավել սակագների սահմանման մեթոդոլոգիան և վերջնական սպառողների համար ծախսերն արտահայտող սակագներ սահմանել
--------------	--------------	---

ԵՆԹԱԿԱՆՈՒՑՎԱԾՔ

Ջուր և կոյուղաջրեր

<i>Միջին</i>	<i>Միջին</i>	<ul style="list-style-type: none"> ▪ ամրապնդել բարեփոխումներն առաջ տանող հաստատությունները; ▪ սակագնային բարեփոխումներ իրականացնել՝ ծախսաճածկման
--------------	--------------	--

		<p>հասնելու նպատակով;</p> <ul style="list-style-type: none"> ▪ բարելավել գործառնական (շեշտադրելով առևտրային և տեխնիկական կորուստների կրճատումը) և ֆինանսական կայունությունը; և ▪ բարելավել պայմանագրային հարաբերությունները
Քաղաքային տրանսպորտ		
<i>Խոշոր</i>	<i>Միջին</i>	<ul style="list-style-type: none"> ▪ ապակենտրոնացնել նորմատիվ որոշ հիմնական ասպեկտները, այդ թվում՝ սակագներ սահմանող և ծառայություններ մատուցող կազմակերպության պատասխանատվությունը; ▪ ամրապնդել քաղաքապետարանների ինստիտուցիոնալ և իրավական կարողությունները՝ կարգավորելու և մշտադիտարկելու հանրային տրանսպորտի ծառայությունների մատուցումը; ▪ բարեփոխել քաղաքային տրանսպորտի պետական օպերատորներին՝ առանց կայունությունը զոհաբերելու բարելավելով ծառայության որակը; և ▪ բարելավել ինտեգրացիան և տոմսերի վաճառքը
Ճանապարհներ		
<i>Միջին</i>	<i>Միջին</i>	<ul style="list-style-type: none"> ▪ մշակել տրանսպորտի ազգային ռազմավարությունը, որը ենթադրում է ինտերմոդալ ինտեգրում ▪ շարունակել հզորացնել ճանապարհները կառավարող իրավասու մարմինների կարողությունները; ▪ մշակել կատարողականի վրա հիմնված ճանապարհների սպասարկման պայմանագրեր և/կամ պետական և մասնավոր հատվածների գործընկերության փոքրամասշտաբ ծրագրեր; և ▪ ճանապարհների օգտագործման վարձավճարի բարեփոխում
Երկաթուղի		
<i>Միջին</i>	<i>Խոշոր</i>	<ul style="list-style-type: none"> ▪ ամբողջական ինստիտուցիոնալ առանձնացում; ▪ ուղևորների և ենթակառուցվածքի բիզնեսներում խորացնել ֆինանսական կայունությունը; և ▪ երկաթուղային բիզնեսում մրցակցություն

		մտցնել
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Բանկային հատված		
<i>Խոշոր</i>	<i>Միջին</i>	<ul style="list-style-type: none"> ▪ բարելավել վարկեր/ավանդներ հարաբերակցությունը; ▪ մեծացնել տեղական արժույթով վարկավորման մասնաբաժինը ընդհանուր վարկավորման ծավալի մեջ; և ▪ տարբերակել պրոդուկտները
Ապահովագրություն և ֆինանսական այլ ծառայություններ		
<i>Խոշոր</i>	<i>Խոշոր</i>	<ul style="list-style-type: none"> ▪ շարունակել զարգացնել ապահովագրական ոլորտի պրոդուկտների տեսականին և հմտությունները; ▪ ապահովագրական ոլորտը կարգավորող հենքը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին; ▪ զարգացնել լիզինգի շուկաները և ստորակարգված ֆինանսավորման պրոդուկտները; և ▪ մշակել կենսաթոշակային ֆոնդերը կարգավորող հիմքերը
Միկրո, փոքր, միջին և խոշոր չափի ընկերություններ		
<i>Միջին</i>	<i>Միջին</i>	<ul style="list-style-type: none"> ▪ ընդլայնել տեղական արժույթով ՓՄՁ-ների բանկային ֆինանսավորումը; ▪ ՓՄՁ-ների համար այլընտրանքային ֆինանսական գործիքներ մշակել, ինչպիսիք են լիզինգը և բաժնային կապիտալը; ▪ ՓՄՁ-ների վարկավորմանն աջակցելու նպատակով բարելավել ինստիտուցիոնալ միջավայրը, ինչպես, ասենք՝ պարտատիրոջ իրավունքների կիրարկումը
Մասնավոր բաժնային կապիտալ		
<i>Խոշոր</i>	<i>Խոշոր</i>	<ul style="list-style-type: none"> ▪ բարելավել գործարար միջավայրը, որպեսզի այն ավելի գրավիչ լինի տարածաշրջանային ֆոնդերի կողմից ներքին մասնավոր բաժնային կապիտալում ներդրումներ կատարելու համար և, ի վերջո, տեղական կայուն բաժնային կապիտալի ֆոնդերի ստեղծման համար
Կապիտալ շուկաներ		
<i>Խոշոր</i>	<i>Միջին</i>	<ul style="list-style-type: none"> ▪ ընդլայնել ցուցակված շուկան՝ լրացուցիչ կորպորատիվ թողարկումների,

		<p>հատկապես՝ պարտատոմսերի թողարկումների միջոցով;</p> <ul style="list-style-type: none"> ▪ գրավել ներդրողների հետաքրքրությունը և իրացվելիությունը՝ բարելավելով վճարահաշվարկային միջոցառումները; ▪ երկարացնել միջբանկային շուկայական գործունեության վճարման ժամկետները; ▪ դրամային շուկայի չափորոշիչներ և արտարժույթի սվոպեր մշակել; և ▪ ուսումնասիրել տարածաշրջանային դաշինքները՝ շուկայի իրացվելիությունն ընդլայնելու նպատակով
--	--	--

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ³⁵ ՃԵՂՔՎԱԾՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ		
Ներառման ճեղվածքի բաղադրիչներ	Ներառման ճեղվածքը	Հիմնական մարտահրավերները
Մարզեր		
Աշխատանքի շուկա	Խոշոր	<ul style="list-style-type: none"> ▪ Բարելավել տեղական աշխատանքների և պաշտոնական զբաղվածության հնարավորությունների հասանելիությունը Հայաստանի բավարար չափով չսպասարկվող մարզերում (հատկապես մարզերից երկուսում՝ Կոտայք և Շիրակ, որտեղ գործազրկության և աղքատության մակարդակներն ամենաբարձրն են): ▪ Սատարել տնտեսապես կենսունակ ներդրումները, որոնք կօգնեն պակաս զարգացած մարզերում մրցակցային առավելություններ ստեղծել և խթանել տեղի երիտասարդների, հատկապես՝ երիտասարդ կանանց զբաղվածությունը և հմտությունների փոխանցումը: ▪ Բարելավել ձեռնարկատիրական ֆինանսավորման հասանելիությունը բավարար չափով չսպասարկվող գյուղական բնակավայրերում և աջակցել տնայնագործական աշխատանքներում, մասնավորապես՝ գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտներում զբաղվածներին:

³⁵ ՎՋԵԲ-ի Տնտեսական ներառման բացերը ուսումնասիրում են ՎՋԵԲ-ի գործունեության բոլոր երկրների հաստատությունները, շուկաներն ու կրթական համակարգերը և գնահատում, թե որքանով են դրանք ունակ տնտեսական հնարավորությունները ընդլայնել անհատների համար՝ անկախ նրանց սեռից, տարիքից և ծննդավայրից: Այս բացերն ավելի շուտ գնահատում են *տարբերությունը* հնարավորությունների մեջ (15-24 տարեկան աշխատողների և ավելի բարձր տարիք ունեցող աշխատողների միջև, և կանանց և տղամարդկանց միջև), քան հնարավորությունների *մակարդակները*: Երկրի գծով սույն ռազմավարության մեջ ներկայացվում են այն կետերը, որտեղ Ներառման ճեղքվածքը Փոքրից բարձր է:

Ծառայությունների հասանելիություն	Միջին	<ul style="list-style-type: none"> Մեծացնել այն ենթակառուցվածքների ու ծառայությունների հասանելիությունը, որոնք էապես մեծացնում են տեղի բնակչության տնտեսական հնարավորությունները, մասնավորապես՝ կապված բարելավված առողջության, զբաղվածության, վերապատրաստումների և ձեռնարկատիրական գործունեությունների հետ:
Կրթություն	Միջին	<ul style="list-style-type: none"> Բարելավել կրթության որակն ու հասանելիությունը պակաս զարգացած շրջաններում, հատկապես՝ լրիվ զբաղվածություն չունեցող արտագաղթողների և կանանց համար:
Հաստատություններ	Միջին	<ul style="list-style-type: none"> Աջակցել բավարար չափով չսպասարկվող մարզերի քաղաքային համայնքներում ծրագրերի իրականացմանը՝ կառավարման ավելի լավ մեթոդներ և գործառնական արդյունավետ գործելակերպեր ներդնելով:
Երիտասարդություն		
Հնարավորություններ երիտասարդների համար	Խոշոր	<ul style="list-style-type: none"> Անդրադառնալ հմտությունների անհամապատասխանությանը՝ աշխատանքի շուկայի պահանջարկն ավելի սերտորեն համապատասխանեցնելով կրթական արդյունքների հետ, մասնավորապես գործազուրկ շրջանավարտների աշխատանքի տեղավորմանն աջակցելու նպատակով: Գործատուների և կրթական ծառայություններ մատուցողների միջև բարելավված գործընկերությունների միջոցով բարելավել մասնավոր հատվածի ներգրավումը հմտությունների ազգային չափանիշների սահմանման և դրան առնչվող ուսուցման մատուցման գործընթացում: Սատարել այն բարեփոխումները, որոնք նպատակաուղղված են բարձրացնել միջին մասնագիտական կրթության և ուսուցման արդիականությունը և որակը՝ մրցունակ և որակավորված աշխատուժ ապահովելու նպատակով: Ամրապնդել

		սոցիալական գործընկերների ներառումը միջին մասնագիտական կրթության և ուսուցման առաջնահերթությունների և դրանց ներդրման շուրջ երկխոսությանը:
Կրթության որակ	Միջին	<ul style="list-style-type: none"> Բարելավել կրթական համակարգը՝ ուսուցիչների և դպրոցի տնօրենների համար նախատեսված ուսուցման ծրագրերի միջոցով: Կրթություն ստացողների ունակությունները բարձր են, սակայն կրթության որակը՝ ցածր (ինչպես դա չափվում է Միջազգային ուսանողների գնահատման ծրագրի (PISA) թեստի արդյունքներով):
Գենդեր		
Աշխատանքային գործելակերպեր	Խոշոր	<ul style="list-style-type: none"> Խթանել հաճախորդներին՝ բարելավելով հավասար հնարավորությունների կիրառումը, այդ թվում՝ հավասար վարձատրման գործելակերպերը, ոչ խտրական գործելակերպերը և առաջնորդության կանանց ծրագրերը:
Զբաղվածություն և ձեռնարկությունների սեփականություն	Խոշոր	<ul style="list-style-type: none"> Բարելավել հաճախորդների կադրային քաղաքականությունները կանանց զբաղվածությունը, ուսուցման հնարավորությունները և դեպի դեկավար պաշտոններ առաջընթացի ուղիները մեծացնելու առումով: Բարելավել բիզնես դասընթացների և ֆինանսական գրականության հասանելիությունը ձեռներեց կանանց համար:
Ֆինանսավորման հասանելիություն	Միջին	<ul style="list-style-type: none"> Խթանել Բանկերին և զարգացնել վերջիններիս կարողությունները կին ձեռներեցների համար նախատեսված այնպիսի վարկային գծեր մշակելու համար, որոնք կհամատեղեն ֆինանսավորման հասանելիությունը, ուսուցումը և գործարար խորհրդատվական ծառայությունները:
Իրավական կարգավորումներ	Միջին	<ul style="list-style-type: none"> Մեծացնել իրավական և դատական պաշտպանությունը կանանց դեմ բռնությանն անդրադառնալու նպատակով:

		<ul style="list-style-type: none"> ▪ Մեծացնել գենդերային հավասարության շուրջ քաղաքական երկխոսությունը:
Առողջապահական ծառայություններ	Միջին	<ul style="list-style-type: none"> ▪ Մեծացնել առողջապահական ծառայությունների հասանելիությունը կանանց համար և դրանց որակը (մասնավորապես բարելավել մայրերի մահացության և հակաբեղմնավորիչների տարածվածության ցուցանիշները):

ՀԱՎԵԼՎԱԾ 4 – ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Ներածություն

Այս հավելվածը ներկայացնում է առաջիկա ժամանակահատվածում Հայաստանում Բանկի ներդրումային ռազմավարությանն առնչվող ընտրված իրավական թեմաների կրիտիկական վերլուծությունը: Այն հիմնվում է ՎՋԵԲ-ի Իրավական Բարեփոխումների Ծրագրի³⁶ կողմից անցկացված առևտրային օրենքների գնահատումների վրա: Հարմարության նկատառումներից ելնելով՝ վերլուծությունը ներկայացվում է ըստ երկրի գծով այս ռազմավարությամբ սահմանված հիմնական ռազմավարական կողմնորոշումների, մասնավորապես՝ «Քաղաքականության շուրջ երկխոսություն և տեխնիկական համագործակցություն» բաժնի ներքո առաջարկվող գործողությունների:

▪ **Խթանել մասնավոր հատվածի մրցունակությունը**

Շարժական գույքի գրավադրում, լիզինգ և ֆակտորինգ

Քաղաքացիական Օրենսգիրքը գրավադրման տարբեր տեսակներ է նախատեսում, որոնք կարող են սահմանվել առանց գրավորված ակտիվը տիրապետության տակ վերցնելը (օրինակ՝ իրավունքների, դրամային ակտիվների, շրջանառվող ապրանքների գրավադրում, և այլն): Ավելին, Օրենսգիրքը նախատեսում է նաև ակտիվների տատանվող ամբողջության գրավադրման հնարավորությունը, այնուամենայնիվ, այս տարբերակը սահմանափակվում է միայն շրջանառվող ապրանքների (ապրանքների պաշարներ, հումք, պարագաներ, և այլն) գրավադրմամբ: Այս սահմանափակումը, փաստորեն, բացառում է դեբիտորական պարտքերը որպես գրավի առարկա օգտագործելու հնարավորությունը: Ակտիվների տատանվող ամբողջության օգտագործումը սահմանափակվում է գրավադրված ակտիվների արժեքը հաստատուն պահելու պարտավորությամբ՝ այդպիսով բացառելով յուրաքանչյուր օրվա կտրվածքով իրենց արժեքը փոխող ակտիվների (սարքավորումներ, գույք և այլն) ներառումը: Հնարավոր չէ օգտագործել գրավադրված ակտիվի ընդհանուր նկարագիրը, ինչն անտեղի տեղը մեծացնում է գրավադրման փաստաթղթերում սխալների ի հայտ գալու ռիսկը: Նման սխալները կարող են հանգեցնել գրանցման մերժմանը և/կամ գրավի զրոյացմանը: Պարտադիր չէ գրանցել գրավը, բացառությամբ, եթե ակտիվի որոշակի տեսակի համար այդ գրանցումը նախատեսված է հատուկ օրենքով: Այնուամենայնիվ, գրանցումը խորհուրդ է տրվում, քանի որ այն ապահովում է չգրանցված և չապահովադրված վարկառուների նկատմամբ գերակայությունը:

«Շարժական գույքի նկատմամբ գրավի գրանցման» մասին օրենքը կառավարում է շարժական գույքի ապահովադրումը: Գրանցման գործառնություններն իրականացնում է Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, որն այն մարմինն է, որին ի

³⁶ Տե՛ս www.ebrd.com/law.

սկզբանե հանձնարարվել է անշարժ գույքի կադաստրի վարումը: Գրանցման համակարգը մի շարք թերացումներ ունի և կառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտություն կա: Գրանցման համակարգը պահանջում է լրացնել ապահովադրման ամբողջական պայմանագիրը, իսկ օրենքը սահմանում է լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ են գրանցման համար, ինչպես նաև այդ գրանցումը մերժելու համար: Գրանցման հայտը կարող է ներկայացվել միայն Երևանում գտնվող կադաստրի ստորաբաժանում («Կենտրոն» ստորաբաժանում): Այս համակենտրոնացումը կարող է մեծացնել այլ բնակավայրերում գտնվող կողմերի ծախսերը: Մինչ ռեգիստրը գրավադրված շարժական գույքի միասնական տվյալների բազա է վարում, այդ բազան էլեկտրոնային չէ, իսկ տեղեկատվությունը հասանելի է միայն գրավոր հարցմամբ:

2014 թ.-ի դեկտեմբերին խորհրդարանը ընդունեց գրավով ապահովված գործարքների օրենսդրության բարեփոխումների իրավական փաթեթը, որը Նախագահը ստորագրեց 2014 թ.-ի դեկտեմբերի 30-ին: Իրավական նոր հենքը նպատակ է հետապնդում շարժական գրավի միասնական էլեկտրոնային ռեգիստր ներդնել: Գրանցումը կհանդիսանա ապահովված իրավունքների կատարելագործման հիմնական ձևաչափը և կսահմանի գրավի առաջնահերթությունը: Օրենսդրությունը մշակվել է, ի թիվս այլոց, ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցությամբ: Նոր փաթեթն ուժի մեջ է մտել 2015 թ.-ի հոկտեմբերի 1-ին: Նոր օրենքի նպատակն է անդրադառնալ գործող օրենքների վերը նշված թերություններին:

Քաղաքացիական Օրենսգրքի 677-684 հոդվածները կարգավորում են ֆինանսական լիզինգի պայմանագրերը: Օրենսգրքը պարզ, բայց միևնույն ժամանակ կայուն օրենսդրական հիմք է հանդիսանում լիզինգային գործունեություններ իրականացնելու համար: Այն սահմանում է ֆինանսական լիզինգի հարաբերությունները, կարգավորում է վարձակալված ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքի և դրանց հետ առնչվող ռիսկերի փոխանցումը, ինչպես նաև վարձակալված ակտիվները վաճառող կողմի պատասխանատվությունը: Այնուամենայնիվ, օրենքը կարող էր մի փոքր ավելի մանրամասնորեն կարգավորել վարձակալի / վարձատուի հարաբերությունները, հատկապես՝ արժեզրկման դեպքերը և այդ հանգամանքներում կողմերի պարտականությունները: Սա կարող էր օգնել մեծացնել իրավական որոշակիությունը և կողմերի համար ապահովել իրենց պարտավորությունների ու պարտականությունների ավելի հստակ ընկալումը: Անշարժ գույքին առնչվող ֆինանսական լիզինգի գործարքները պետք է նոտարապես վավերացվեն և գրանցվեն, մինչ շարժական գույքին առնչվող գործարքները սահմանված ձևաչափ չունեն:

Ֆակտորինգը կարգավորող հատուկ օրենսդրություն չի գործում, բացառությամբ Քաղաքացիական Օրենսգրքի դրույթներով սահմանված «պայմանագրով պահանջի զիջումը» հասկացության, որը հիմք է ծառայում դեբիտորական պարտքերը զիջելու համար: Արդյունքում, ֆակտորինգի ծառայությունների կամ

Ֆակտորինգի գործարքների տեսակների սահմանումներ չկան, որոնք կարող են օգնել մեծացնել ֆակտորինգի գործարքների իրավական որոշակիությունը և այդպիսով կրճատել գործարքների վերաբնութագրման հետ կապված ծախսերն ու ռիսկերը: Ֆակտորինգը, հատկապես՝ միջազգային ֆակտորինգը, ներկայումս զարգացող ոլորտ է Հայաստանում:

Էլեկտրոնային հաղորդակցություն / Հեռահաղորդակցություն

Հայաստանում էլեկտրոնային հաղորդակցության կարգավորման հիմնական իրավական հիմքը 2005 թ.-ին ընդունված «Էլեկտրոնային հաղորդակցության» մասին օրենքն է: Այս օրենքը սահմանում է Տրանսպորտի և կապի նախարարության գործառույթները, ինչպես նաև կարգավորող մարմնի՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀՕԿՀ) գործառույթները, որը «Հանրային ծառայությունների կարգավորման» մասին օրենքով ստեղծված բազմաթիվ բնագավառներ կարգավորող մարմին է:

Երկրի հիմնական քաղաքների և գյուղական բնակավայրերի միջև էական թվային տարբերություն կա նոր սերնդի ցանցերի և ծառայությունների հասանելիության առումով: Նախկինում Կառավարությունը ռազմավարություն էր մշակել ընդգրկուն տեղեկատվական հասարակություն ստեղծելու ուղղությամբ, որն արագացվել էր գերարագ լայնաշերտ հասանելիության ցանցը դեպի ավելի հեռավոր մարզեր հասցնելուն ուղղված պետական աջակցությամբ: Այնուամենայնիվ, իրականացման մասին որոշումը դեռևս պետք է կայացվի, և այս պահի դրությամբ պետությունը շարունակում է կախված մնալ մասնավոր ներդրողներից՝ վտանգով, որ կշարունակեն կրկնօրինակել ենթակառուցվածքը (մինչ օրս մասնավոր ներդրողները հիմնականում դիմադրել են ենթակառուցվածքները համատեղ օգտագործելուն), ինչը ծառայությունների արժեքը Հայաստանում հարաբերականորեն բարձր մակարդակի վրա կպահի: Ընտրված ներդրումային ռազմավարությունից անկախ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է լայնամասշտաբ ցանց կառուցել՝ ժամանակակից գերարագ ծառայությունները գյուղական բնակավայրեր հասցնելու համար: Նոր ներդրումներ ներգրավելու կամ ցանցի և ծառայությունների տարածմանն ուղղված նախատեսված ներդրումներն արագացնելու համար կարևոր է ԵՄ նորմերն ու գործելակերպերն արտացոլող քաղաքականություն և կարգավորող հենքեր ընդունել և ամբողջությամբ դրանք ներդնել: Նոր քաղաքականությունների և ընթացակարգերի ընդունման ու ներդրման համար առանցքային կլինեն բնագավառի, մասնավորապես՝ ՀՕԿՀ-ի ինստիտուցիոնալ ռեսուրսներն ու կարողությունները: Համապատասխանաբար, բնագավառի համար կառավարության սահմանած նպատակներին արդյունավետորեն հասնելու համար իշխանությունները պետք է արագացնեն ԵՄ նորմերի և գործելակերպերի ընդունումը և ապահովեն, որպեսզի ՀՕԿՀ-ն բավարար, կանխատեսելի, հաստատուն և պաշտպանված բյուջետային միջոցներ ունենա քաղաքականության որոշումներն արդյունավետորեն ներդնելու համար:

▪ **Զարգացնել կապիտալ շուկաները և խթանել տեղական արժույթով ֆինանսավորումը**

Կապիտալ շուկաներ

Հայաստանում կապիտալ շուկայի գործունեությունները սակավ են: Չնայած իրավական կանոնակարգերն ու համեմատաբար զարգացած շուկայական ենթակառուցվածքն առկա են, բաժնետոմսերի և պարտատոմսերի միայն մի քանի թողարկումներ են ցուցակվել և վաճառքի հանվել ֆոնդային բորսայում: Տեղական որոշ ընկերություններ նախընտրում են իրենց բաժնետոմսերն արտասահմանում ցուցակել: Օրինակ՝ «Լիդիան Ինթերնեյշնլ» հանքարդյունահանող ընկերությունը, որտեղ Բանկը բաժնեմաս ունի, ցուցակված է Տորոնտոյում:

Ինստիտուցիոնալ ներդրողների համար բավարար օրենսդրական խթանների բացակայությունը և օրենքով սահմանված դրույթները կիրարկելու Կառավարության կարողությունների նկատմամբ անվստահությունը կարող են նպաստել ցուցակումների ներկայիս սակավությանը: Կապիտալ շուկաների բնագավառում գրեթե բոլոր բաղադրիչները պետք է բարելավվեն: Ավանդական բանկային ծառայություններից այն կողմ, ֆինանսավորման և ոչ-բանկային ֆինանսական ծառայությունների հասանելիությունը սահմանափակ է:

2014 թ.-ին և՛ ՎՋԵԲ-ը, և՛ ՄՖԿ-ն տեղական շուկայում դրամով արտահայտված պարտատոմսեր թողարկեցին: Անմիջապես դրանից առաջ, Բանկը Հայաստանի կառավարությանն աջակցեց փոփոխություններ կատարել, որոնք անհրաժեշտ էին այդ թողարկումները հեշտացնելու համար, և որոնք, ընդհանուր առմամբ, որոշ կողմնակի օգուտներ ապահովեցին իրավական հենքի համար: Այնուամենայնիվ, օրենքը կարող է շահել հետագա փոփոխություններից, ինչպիսիք են, ասենք՝ պարտատոմսեր տնօրինողների ժողով կամ ներկայացուցիչներ (կամ նմանատիպ հասկացություններ) ներմուծել:

Հայկական օրենսդրությունը թույլատրում է ածանցյալներով գործարքներ իրականացնել: Այնուամենայնիվ, հաշվանցման օրենսդրությունն առկա չէ: Բորսայում ածանցյալ գործիքների առևտուր տեղի չի ունենում, իսկ ըստ տեղական ներդրողների զեկույցների՝ բորսայից դուրս կատարվող գործարքները հազվադեպ են: «Ներդրումային հիմնադրամների» մասին գործող օրենքն ընդունվել է 2010 թ.-ին: Բայց և այնպես, Հայաստանում մասնավոր բաժնային կապիտալի գործունեությունները շարունակում են սահմանափակ լինել:

Կորպորատիվ կառավարում

Կորպորատիվ կառավարման տեսանկյունից Հայաստանը ՎՋԵԲ-ի տարածաշրջանում ամենաթույլ երկրների շարքում է: ՎՋԵԲ-ի վերջին

գնահատումը (2014թ.), ուսումնասիրելով կորպորատիվ կառավարման օրենսդրությունը և ընկերությունների գործելակերպերը, առանձնացրել է համեմատաբար թույլ հենքը: Օրինակ, Հայաստանի օրենսդրությունը չի պահանջում խորհրդում անկախ տնօրենների առկայությունը, թեև այն նախատեսում է «խորհրդի անկախ անդամների» ներառումը շահերի հնարավոր բախմամբ գործարքներում: Թե՛ օրենքը, և թե՛ 2010 թ.-ին թողարկված Կորպորատիվ կառավարման օրենսգիրքը (ԿԿ Օրենսգիրք) «անկախություն» հասկացության տարբեր սահմանումներ են նախատեսում: Այնուամենայնիվ, օրենքը «անկախություն» հասկացության ընդգրկուն սահմանում չի տրամադրում: Գործնականում մի քանի ընկերություններ են հրապարակել, որ իրենց խորհրդի կազմում անկախ անդամներ ունեն, ինչպես դա առաջարկվում է ԿԿ Օրենսգրքում սահմանված չափանիշներով: Ավելին, օրենքը չի պահանջում, որպեսզի ընկերությունները խորհրդի կոմիտեներ ստեղծեն: Միայն ԿԿ Օրենսգիրքն է ցուցակված ընկերություններին առաջարկում վերահսկիչ կոմիտե ձևավորել, որը կազմված կլինի ոչ-գործադիր տնօրեններից, և որտեղ նախագահը և անդամների մեծամասնությունն անկախ կլինեն: Գործնականում, ցուցակված տասը ամենախոշոր ընկերություններից միայն երկուսն են վերահիսկիչ կոմիտեներ ձևավորել (իսկ կոմիտեների կազմը չի հրապարակվել): Բաժնետերերի իրավունքները դիտարկելիս ակնհայտ թերություն է այն փաստը, որ նոր բաժնետոմսերի հրապարակային առաջարկի դեպքում բաժնետերերը նախապատվության իրավունք չունեն:

▪ **Զարգացնել կայուն և առևտրականացված հանրային կոմունալ ծառայություններ**

Էներգաարդյունավետություն

Հայաստանում էներգաարդյունավետությունը բարելավելու մեծ ներուժ կա: Մինչ երկրի էներգետիկ ինտենսիվությունը վերջին տասնամյակում կրճատվել է, առաջնային էներգիայի սպառումը վերջին 20 տարիների ընթացքում աճել է: Ինչպես սահմանվում է «էներգետիկայի» մասին օրենքում, էներգիայի պաշարների և այլընտրանքային էներգիայի ռեսուրսների էլ ավելի արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև ավելի մեծ էներգետիկ անկախությունը կառավարության հիմնական առաջնահերթություններն են այս բնագավառում: «Էներգախնայողությունների և վերականգնվող էներգետիկայի» մասին օրենքն անդրադառնում է էներգաարդյունավետությունը բարելավելու անհրաժեշտությանը և ընդհանուր առմամբ ուրվագծում է ներդրման որոշ մեխանիզմները: Էներգախնայողության Գործողությունների Ազգային Ծրագիրը մշակվել է միջազգային աջակցությամբ և հաստատվել է 2010 թ.-ին:

2013թ.-ին Հայաստանը միացավ Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և Բնապահպանության Գործընկերությանը (E5P), որի նպատակն է մեծացնել էներգաարդյունավետությանը տրամադրվող

աջակցությունը և նվազեցնել վնասակար արտանետումները: Հայաստանը
Էներգետիկայի Համայնքում դիտորդի կարգավիճակ ունի:

Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը քաղաքականություն
մշակող և կարգավորող հիմնական մարմինն է, մինչդեռ այլ
նախարարությունները նույնպես նախաձեռնությունը վերցնում են իրենց ձեռքը,
երբ էներգաարդյունավետության միջոցառումները վերաբերում են իրենց
իրավասության ներքո գտնվող բնագավառներին (օրինակ՝ Քաղաքաշինության
նախարարությունը ընդգրկում է շենքերի ոլորտը): Վերականգնվող էներգետիկայի
և էներգախնայողության Հիմնադրամի կողմից խթանվող գործունեությունները
ներառում են էներգետիկ աուդիտի ուսուցումը, բնակելի և այլ շենքերում
էներգաարդյունավետության գնահատումների իրականացումը, ինչպես նաև
բնակելի շենքերում էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված
վերազինումների աջակցումը: Էներգաարդյունավետությունը խթանելու և
էներգաարդյունավետության միջոցառումներում ներդրումներ կատարելու
հիմնական խոչընդոտներից են ֆինանսավորման պակասը, էներգասպառման
մասին ճշգրիտ տեղեկատվության բացակայությունը, իրավական և կարգավորող
թերի հենքը, ինչպես նաև էներգաարդյունավետության միջոցառումներ
իրականացնելու օգուտների մասին իրազեկման ցածր մակարդակը:

Հայաստանում բնակելի ենթահատվածը էներգիայի ամենախոշոր վերջնական
սպառողներից մեկն է: Բնակարանային ֆոնդի գերակշիռ մասը բաղկացած է վատ
մեկուսացված և վատ կառուցված բազմահարկ բազմաբնակարան շենքերից, որոնք
սովորաբար էներգախնայողության և հարմարավետության ցածր մակարդակ են
ապահովում: 2012-2013 թթ.-երին ՎՋԵԲ-ը «Բնակելի շենքերում
էներգաարդյունավետությունը բարելավելու հետազոտություն» իրականացրեց՝
ուսումնասիրելով շենքերում, և հատկապես բնակելի ենթահատվածում
էներգաարդյունավետությանն առնչվող քաղաքականությունը, իրավական,
կարգավորող և ինստիտուցիոնալ հենքերը: Ուսումնասիրությունը բացահայտեց,
որ գործող իրավական և կարգավորող հենքը միջազգային փորձին
համապատասխանեցնելու անհրաժեշտությունը նախապայման է հանդիսանում
էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումները ֆինանսավորելու
համար: Ինստիտուցիոնալ կարողությունների պակասը մեկ այլ խոչընդոտ է
հանդիսանում էներգաարդյունավետությունը բարելավելու համար:

Կառավարությունը գիտակցում է մի շարք ոլորտներում, մասնավորապես՝
շենքերում և արդյունաբերության մեջ էներգաարդյունավետությունը
բարձրացնելու անհրաժեշտությունը: Կառավարությունը և ՎՋԵԲ-ը ներկայումս
քննարկում են տեխնիկական աջակցության շրջանակը, որի նպատակն է
վերանայել շենքերի էներգաարդյունավետության մասով Հայաստանի իրավական
և կարգավորող հենքը, ներդնել էներգասպառող ապրանքների
էներգաարդյունավետության պիտակավորումը և նորակառույց ու գոյություն
ունեցող բնակելի և կոմերցիոն շենքերում մասնավոր ներդրումների համար ավելի
շատ խթաններ ստեղծել:

Պետական և մասնավոր հատվածի գործընկերություններ (ՊՄԳ-ներ)

Հայաստանը ՎԶԵԲ-ի միայն մի քանի գործունեության երկրներից մեկն է, որտեղ դեռևս հստակ ՊՄԳ քաղաքականություն կամ իրավական/կարգավորող ու ինստիտուցիոնալ հենք գոյություն չունի: Այնուամենայնիվ, ի տարբերություն իրավական հենքի, ՊՄԳ փորձը, կարծես, ավելի զարգացած է և մի շարք ծրագրեր արդեն իսկ իրականացվել են: Գլխավոր օրենքները, ինչպես, ասենք՝ Քաղաքացիական Օրենսգիրքը չեն անդրադառնում կամ չեն կարգավորում կոնցեսիաները կամ ՊՄԳ-ները, բացառությամբ «Օտարերկրյա ներդրումների» մասին օրենքում ներառված ընդհանուր հղման, որը նախատեսում է, որ կոնցեսիաները օտարերկրյա ներդրումների մի տեսակ են: Կոնկրետ բնագավառների՝ հանքարդյունահանման և ջրային ոլորտի երկու օրենքները կարգավորում են կոնցեսիաները: Բացի այդ, կոնցեսիաների մասին հղում կա նաև «Երկաթուղային տրանսպորտի» մասին օրենքում:

Հայաստանի իշխանությունները քաղաքականության ոչ մի փաստաթուղթ չեն ընդունել, որը որ կխթաներ ՊՄԳ-ները: Այնուամենայնիվ, Աղքատության Կրճատման Ռազմավարության մեջ սահմանվել է իրավական միջավայրը բարելավելու և հասարակական աշխատանքներում ու ծառայություններում մասնավոր հատվածի մասնակցությունը խթանելու ընդհանուր քաղաքականության շրջանակ:

Չնայած կոնցեսիաների մասին հղումներ կան վերը նշված կոնկրետ բնագավառները կարգավորող օրենքներում, այդ տեքստերը կոնցեսիաների որևէ հստակ ժամանակակից սահմանում չեն պարունակում և բավականին տարրական մոտեցում են ցուցաբերում ընտրության կանոնների նկատմամբ, որոնք համարվում են մրցակցային ընթացակարգի հիմնական սկզբունքը: Կոնցեսիոն պայմանագրերի միջազգային արբիտրաժի մասին որևէ հստակ հղում չկա, մինչդեռ միջազգային արբիտրաժից օգտվելու հնարավորությունը սահմանվում է սեփականաշնորհման պայմանագրերում:

ՊՄԳ-ին վերաբերվող օրենսդրության որոշ դրական հատկանիշներ կարելի է նշել ջրային ոլորտը կարգավորող օրենքում. օրինակ՝ տիպային կոնցեսիոն պայմանագրի ըստ ցանկության կիրառումը (քան թե պարտադիր լինելը, ինչը շատ խիստ կլիներ և դեմ կգնար լավագույն փորձին): Օգտակար են նաև գլխավոր օրենսդրության, ինչպես, ասենք՝ Քաղաքացիական Օրենսգրքի և «Բյուջետային համակարգերի» մասին օրենքի այն դրույթները, որոնք վերաբերում են ՊՄԳ ծրագրերին պետական աջակցությանը և այդ ծրագրերի օգտին ֆինանսական երաշխիքների տրամադրմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 5 – ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Գենդերային անհավասարություն և մարդկային զարգացում

ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի 2013 թ.-ի Մարդու Զարգացման Ցուցանիշի (ՄՁՑ)³⁷ համաձայն, Հայաստանը պատկանում է զարգացած ազգաբնակչությամբ երկրների թվին՝ 187 երկրների շարքում զբաղեցնելով 87-րդ տեղը, որը մոտ է Արևելյան Եվրոպայի և Կովկասի տարածաշրջանային միջին ցուցանիշին: ՄՁՑ-ն բաղկացած է երեք բաղադրիչներից. առողջապահություն, կրթություն և արժանապատիվ կենսամակարդակ: ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի Գենդերային անհավասարության ցուցանիշի առումով երկիրն ավելի բարձր դիրք է զբաղեցնում՝ 60-րդ տեղն աշխարհում: Գենդերային անհավասարության ցուցանիշը բաղադրյալ ցուցանիշ է, որը պատկերում է երկրում գենդերային անհավասարության պատճառով ձեռքբերումների կորուստը (Գենդերային անհավասարության ցուցանիշը հիմնվում է վերարտադրողական առողջության, իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման և տնտեսական գործունեության վրա):

Մասնակցությունը աշխատուժի մեջ և գենդերային հիմքով վարձատրության տարբերությունները

Աշխատուժի մեջ կանանց մասնակցության մակարդակն ավելի ցածր է, քան տղամարդկանցը (55.9 տոկոս՝ 72.8 տոկոսի համեմատ): Այս ցուցանիշներն ընդհանուր առմամբ համապատասխանում են Կենտրոնական և Հարավ-Արևելյան Եվրոպայի (ոչ ԵՄ երկրների) և ԱՊՀ միջին ցուցանիշներին (50.3 տոկոս՝ 70.7 տոկոսի համեմատ): Հորիզոնական սեգրեգացիայի մակարդակները բարձր են, ինչը ամրապնդվում է կանանց վայելուչ աշխատանքների վերաբեյալ հասարակական նորմերով: Օրինակ, ինչպես ցույց է տալիս ստորև բերված աղյուսակը, կանանց մոտ երկու երրորդը աշխատում են գյուղատնտեսության և պետական կառավարման ոլորտներում, որոնք տնտեսության ամենացածր վարձատրվող հատվածների շարքում են: Հորիզոնական սեգրեգացիան հարատևում է նաև այն փաստի շնորհիվ, որ կանայք շատ ավելի են ներկայացված երրորդ կարգի կրթական դասընթացներում, որոնք չեն հանգեցնում ավելի լավ վարձատրվող ոլորտներում աշխատանքի ձեռքբերմանը: Գենդերային հիմքով վարձատրության չափերն էապես տարբերվում են. միջինում կանանց ամսական վաստակը կազմում է տղամարդկանց վաստակի միայն 65 տոկոսը:

³⁷ Ըստ ՄՁՑ-ի, երկրները դասակարգվում են մարդու զարգացման չորս լայն դասերի. Մարդու շատ բարձր զարգացում, Մարդու բարձր զարգացում, Մարդու միջին զարգացում և Մարդու ցածր զարգացում:

Զբաղվածությունն ըստ հատվածի	Աշխատողներ	
	% կին	% տղամարդ
Գյուղատնտեսություն	44.6	28.7
Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն	26.4	15
Առևտուր, նորոգում, կացարաններ և սնունդ	11.4	11.8
Արդյունաբերություն	6.2	16
Այլ ծառայություններ	5.3	4.0
Ֆինանսական, անշարժ գույք, մասնագիտական, վարչական	3.4	4.1
Տրանսպորտ, պահեստավորում, հաղորդակցություններ	2.2	9.9
Շինարարություն	0.4	10.5
Ընդամենը	100	100

Աղբյուր՝ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայություն, 2013 թ.

Աշխատաշուկա մտնող կանանց սահմանափակում է մասնագիտությունների և զբաղվածության ոլորտների նեղ շրջանակը, որոնք կանանց աշխատելու համար ընդունելի ու ցանկալի են համարվում՝ ելնելով կա՛մ մշակութային ընկալումներից, կա՛մ աշխատանքը և ընտանեկան պարտականությունները հավասարակշռելու անհրաժեշտությունից: Երեխաների խնամքի և տնային աշխատանքների հիմնական պատասխանատվությունը կրում են կանայք: Կարծիք կա, որ երեխաների խնամքի ծառայությունները հասանելի չեն կամ չափազանց թանկ են: Կենտրոնացված պետական համակարգի փլուզումից հետո խնամքի ծառայություններից շատերը փակվեցին, քանի որ Կառավարությունը որոշեց դրանք փոխանցել տեղական համայնքների իրավասությանը, իսկ այդ համայնքներից շատերը փոքր բյուջեների պատճառով չկարողացան պահպանել այդ ծառայությունները:

Ձեռներեցություն, ֆինանսավորման հասանելիություն

2012-2013 թթ.-երի Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հարցման (BEEPS) համաձայն, Հայաստանում հարցված 360 ընկերություններից մոտ 13.6 տոկոսն ունեին կին գլխավոր կառավարիչ (ինչը ավելի ցածր է, քան Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջին ցուցանիշը, որը կազմում է 18.7 տոկոս): Ըստ պաշտոնական վիճակագրության, ՄՓՄՁ-ների ընդամենը 11 տոկոսն է գրանցված կանանց անունով: Կանանց ձեռնարկատիրության հիմնական ոլորտների մասով շատ տվյալների չկան, բայց կարծիք կա, որ կանանց պատկանող բիզնեսներն ավելի փոքր են և կենտրոնացված են ավելի ցածր

Եկամտաբերությամբ գործունեությունների շուրջ, ինչպիսիք են, ասենք՝ առևտուրը, ծառայությունները և գյուղատնտեսությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 6 – ՎՋԵԲ-Ը ԵՎ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԸ

Հայաստանում դոնորների կողմից ֆինանսավորվող տեխնիկական համագործակցության (ՏՀ) առաջադրանքները Բանկին թույլ տվեցին վաղաժամ դիագնոստիկ աշխատանքներ ձեռնարկել, այդ թվում՝ իրագործելիության ուսումնասիրություններ անցկացնել և նախապատրաստել ներդրումային հնարավորությունները, զարգացնել հեռանկարային հաճախորդների կարողությունները, մասնավորապես՝ ենթակառուցվածքների բնագավառում ծրագրերի իրականացման աջակցություն տրամադրել, ինչպես նաև կիսվել ՎՋԵԲ-ի գործունեության երկրների քաղաքականություն մշակողների և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի անցումային փորձով:

Ներդրումային դրամաշնորհների ձևով նշանակալի դոնորային ֆինանսավորում է տրամադրվել ոչ ՏՀ ծրագրերին աջակցելու համար, որոնք մունիցիպալ և բնապահպանական ենթակառուցվածքի հատվածի շրջանակներում աջակցել են տրանսպորտի և կոշտ թափոնների կառավարման հանձնարարությունների կատարմանը: Բացի այդ, Հայաստանն օգտվել է ՏՀ ծրագրերից, որոնք նպաստել են տեղի մասնավոր ՓՄՁ-ների աճին մի շարք խորհրդատվական ու ներդրումային ծրագրերի միջոցով, որոնց թվում են՝ Գործարար խորհրդատվական ծառայությունները, Ձեռնարկությունների աճի ծրագիրը և Ներդրումային խորհուրդները:

Վերջին երկու տարիների ընթացքում աճել է դոնորային աջակցությունը Կայուն էներգետիկայի նախաձեռնության հիմնական ծրագրերում, որոնք են՝ փողոցների լուսավորությունը և բնակելի շենքերում էներգաարդյունավետության բարելավումը: Ակնկալվում է, որ դոնորների կողմից տրամադրվող դրամաշնորհների ուշադրության կենտրոնում կշարունակեն մնալ մունիցիպալ ու բնապահպանական ենթակառուցվածքների և Կայուն էներգետիկայի նախաձեռնության ծրագրերը: Բացի այդ, ակնկալվում է դոնորային ֆինանսավորման միջոցով աջակցել քաղաքականության շուրջ երկխոսությանը և իրավական բարեփոխումներին՝ նպատակ ունենալով Կառավարությանն օգնել առաջ տանել բարեփոխումների իր օրակարգը և զարգացնել դատական կարողությունները:

Այս կարիքները բավարարելու նպատակով ՎՋԵԲ-ը, ի լրումն իր բաժնետերերի կողմից տրամադրված ռեսուրսների, կապավինի Բանկի կողմից կառավարվող կամ արտաքինապես կառավարվող մի շարք դոնորային միջոցների վրա:

- **Վաղ անցումային երկրների բազմա-դոնոր հիմնադրամը (ՎԱԵ Հիմնադրամ)** 14 երկկողմ դոնորների հատկացումներով վերջին 10 տարիների ընթացքում ծրագրեր է ֆինանսավորել 10 երկրներում, իսկ Հայաստանն այդ դրամաշնորհները ստացող երկրներից մեկն է: ՎԱԵ Հիմնադրամը կշարունակի մի շարք ոլորտներում ՏՀ դրամաշնորհներ տրամադրել կենտրոնանալով առաջնակարգ գերակայությունների վրա,

ինչպիսիք են՝ մունիցիպալ և բնապահպանական ենթակառուցվածքներում մատչելի տարրական ծառայությունների հասանելիության բարելավումը և ֆինանսական հատվածի ուժեղացումը:

- **Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և բնապահպանության գործընկերությունը (E5P Հիմնադրամ)** մոտ €20 միլիոն խոստացված աջակցություն ունի ԵՄ-ից, Չեխիայի Հանրապետությունից, Դանիայից, Էստոնիայից, Լատվիայից, Լիտվայից, Նորվեգիայից, Լեհաստանից, Շվեդիայից և ԱՄՆ-ից: €1 միլիոն գրավադրված աջակցությամբ՝ Հայաստանը հանդիսանում է ինչպես հիմնադրամի հատկացնող կողմ, այնպես էլ հիմնադրամի ռեսուրսների շահառու: E5P-ն դրամաշնորհներ է տրամադրում, որոնք միավորվում են ՄՖՀ-ների կողմից տրամադրվող վարկերի հետ՝ աջակցելու մունիցիպալ ոլորտի այն ներդրումներին, որոնք խթանում են էներգախնայողությունները և բնապահպանական այլ օգուտները: Բացահայտվել են մոտ €160 միլիոն արժողությամբ ծրագրեր, որոնք համապատասխանում են E5P-ի համաֆինանսավորման չափանիշներին, իսկ ծրագրերի իրականացումը նախատեսվում է 2016 թ.-ին:
- **Երկկողմ դոնորներ.** ՎՁԵԲ-ի կողմից կառավարվող երկկողմ հաշիվների միջոցով դրամաշնորհներ կհայցվեն այն դոնորներից, որոնք հետաքրքրություն են դրսևորել Հայաստանի բոլոր հատվածներում և գործունեության ոլորտներում աջակցել ծրագրերի իրականացմանը: Պատմականորեն, Ավստրիան, Շվեդիան և Թայվեյ Չինաստանը ամենաակտիվ դոնորներն են եղել Հայաստանում:
- **ԵՄ Հարևանության ներդրումային գործիքը (ՀՆԳ)** Հայաստանում SՀ և ոչ-SՀ դրամաշնորհները ֆինանսավորելու կարևոր աղբյուր է հանդիսացել: ԵՄ-ն վերջերս նշել է Հայաստանում մասնավոր հատվածը զարգացնելու իր մտադրության մասին, որը կարող է ներառել €15 միլիոն հատկացում ՀՆԳ-ից ՎՁԵԲ-ին, թեև ֆինանսավորումը կարող է ստացվել 2014 թ.-ի Հայաստանի տարեկան գործողությունների ծրագրից (ՓԲԱ և կապիտալի ֆինանսավորման հասանելիության բարելավում): Ընդհանուր առմամբ 2015 թ.-ի համար ՀՆԳ-ի Արևելքում ֆինանսավորման հասանելիությունը շարունակում է ցածր մնալ, իսկ Հայաստանը ՀՆԳ-ի համար ներկա պահին առաջնահերթ գերակայություն չի հանդիսանում: Իրավիճակը կմշտադիտարկվի:
- **Հայաստանի համար ԵՄ Ազգային ծրագիրը** կարող է ուսումնասիրվել՝ հասկանալու, թե արդյոք այն կարող է ֆինանսավորում տրամադրել: Երևանյան գրասենյակի և ԵՄ պատվիրակության միջև արդեն իսկ լավ կապ է հաստատվել, որը պետք է պահպանվի: Դա ցանկացած ֆինանսավորման նախապայմանն է:

- **ՎԶԵԲ-ի Բաժնետերերի հատուկ հիմնադրամը (ԲՀՀ)** սպահովված է Բանկի զուտ եկամուտով: ԲՀՀ-ն դոնորների ռեսուրսները լրացնող գործիք է, որը ՏՀ և ոչ-ՏՀ աջակցություն կտրամադրի անցումային առաջնահերթ ոլորտներում, որտեղ դոնորների կողմից ֆինանսավորման պակաս կամ բացակայություն կա: